Թողարկման 21-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2014

Օգոստոս

թիվ 8 (192)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Ծիածան» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, «Վեմ և Վիզ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման և «Մետալ Լեվո Գրուպ» ՍՊԸ-ի արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Կասկադ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ն գրանցումից հանելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Անելիք բանկ» ՓԲԸ-ի և «Սեֆ Ինտերնեյշնլ Ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ-ի համապատասխանաբար «Մալաթիա» և «Արթիկ» մասնաճյուղերը գրանցելու, ինչպես նաև 1 ՍՊԸ-ի արտարժույթի փոխանակման կետի, 2 ԱՍՊԸ-ի, 4 ԱՓԲԸ-ի և 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 221Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 146-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 147-Ն որոշումը «ՀՀ ԿԲ 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

29 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 160-Ն որոշումը «Մասնակցի կատարած կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և համապատասխան միջոցներն անկանխիկ եղանակով ստանալու համար ներկայացվող դիմումի ձևը և ներկայացման կարգը հաստատելու մասին»

33 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 161-Ն որոշումը «Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների քանակական և արժութային սահմանափակումները» կանոնակարգ 10/30-ը՝ հաստատելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 162-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 163-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 309-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

37 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 165-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 313-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

37 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 166-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հուլիսի 9-ի թիվ 184-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 167-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 317-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 168-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 318-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 169-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 319-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 170-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 320-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

40 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 171-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 333-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

40 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 172-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 173-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 172-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 174-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 315-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 175-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 328-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 176-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
43 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 177-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի մայիսի 5-ի թիվ 135-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
46 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 178-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 326-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
46 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 179-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 325-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 180-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
48 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 181-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
49 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 182-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
55 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 183-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 289-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
57 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 184-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
58 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 185-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
59 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 186-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
60 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 188-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 211-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»
61 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 189-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 322-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
61 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 197-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
87 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 198-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
123 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 199-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
160 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 200-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
205 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 201-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
279 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 202-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»
280 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 203-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 191-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
281 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 204-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հուլիսի 9-ի թիվ 191-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
282 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 205-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
283 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 206-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 284-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը» հաստատելու մասին»
287 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 223-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 197-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
292 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 224-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»
315 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 225-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»
316 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 226-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
317 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 227-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 191-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»
318 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 228-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 290-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին»
319 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 229-Ն որոշումը «ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

321 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Օիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 218Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Վեմ և Վիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գրավատան կազմակերպման և «Մետալ Լեվո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 232Ա, 233Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Կասկադ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 1/827Ա):
- ***Գրանցվել են*** «Անելիք բանկ» փակ բաժնետիրական և «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համապատասխանաբար «Մալաթիա» և «Արթիկ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/831Ա, 1/840Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի փոխանակման կետի, 2 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ և 4 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունների, 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 5800000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/830Ա, 1/852Ա, 1/854Ա, 1/853Ա, 1/855Ա-1/857Ա, 1/859Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 221Ա որոշմամբ 2014 թ. օգոստոսի 13-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 8.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.25%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով համապատասխանեցնել կապիտալի համարժեքության նորմատիվի և դրա առանձին տարրերի հաշվարկման կարգը միջազգային նոր ստանդարտների պահանջներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը և 5-րդ գլուխը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Կենտրոնական բանկը բանկերի համար սահմանում է բանկային գործունեության հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվները.

1) բանկի կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը (բացառությամբ՝ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի),

2) բանկի կապիտալի համարժեքության նորմատիվները.

ա. հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը,

բ. ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը,

3) բանկի իրացվելիության նորմատիվները.

ա. բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն).

բ. բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն),

4) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).

ա. մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը,

բ. խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը,

5) բանկի հետ կապված մեկ անձի, բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).

ա. բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը.

բ. բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը,

6) Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը.

ա. Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց.

բ. արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց,

7) արտարժույթի տնօրինման նորմատիվը.

ա. ըստ առանձին արտարժույթների արտարժութային դիրք.

բ. համախառն արտարժութային դիրք։»։

2) Կանոնակարգ 2-ի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է հինգ միլիարդ (5.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ։»։

3) Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 16.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«16.1. Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ) 2018 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 10 տոկոս։»։

4) Կանոնակարգ 2-ի 17-րդ և 31-րդ կետերում «Ն1» բառը փոխարինել «Ն12» բառով:

5) Կանոնակարգ 2-ի 25-րդ և 30-րդ կետերում «Ն1» բառը փոխարինել «Ն11, Ն12» բառերով:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հունիսի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498), 15.08.2014):

6) Կանոնակարգ 2-ի 28-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 40 տոկոսի չափով, 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 30 տոկոսի չափով, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 20 տոկոսի չափով:»:

7) Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28.1. Հիմնական կապիտալը սույն կետի 1-ին ենթակետում նշված տարրերի հանրագումարի և սույն կետի 2-րդ ենթակետում նշված հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի տարբերությունն է:

1) Հիմնական կապիտալի կազմում ընդգրկվող տարրերն են.
   ա. ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայերի (այսուհետ՝ սովորական բաժնետոմս) անվանական արժեք՝ գումարած սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ,
   բ. բանկի կորուստները ծածկելու նպատակով օրենքի հիման վրա ստեղծված պահուստային հիմնադրամ կամ այլ ֆոնդ (այսուհետ՝ գլխավոր պահուստ),
   գ. չբաշխված շահույթ: Ընդ որում, բանկի չբաշխված շահույթը բանկի հիմնական կապիտալի հաշվարկում ներառվում է ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերի և հավելված 9-ի բոլոր պահանջները բավարարող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքների՝ գումարած բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ, առավելագույնը 150 տոկոսի չափով,
   դ. սույն կանոնակարգի հավելված 9-ի բոլոր պահանջները բավարարող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեք՝ գումարած արտոնյալ բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսերը նվազեցվում են սույն կանոնակարգի հավելված 9-ի բոլոր պահանջները բավարարող այն արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք հետ են գնվել բանկի կողմից (եթե արդեն իսկ չեն նվազեցվում հիմնական կապիտալից կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն) կամ ձեռք են բերվել այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում բանկը հանդիսանում է նշանակալից մասնակից, կամ որոնք բանկը որևէ իրավաբանական փաստաթղթի հիման վրա պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել (բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի) հետագայում: 2018 թվականի հունվարի 1-ից արտոնյալ բաժնետոմսերը բանկի հիմնական կապիտալի հաշվարկում ներառվում են սույն ենթակետի «ա»-«գ» պարբերություններում նշված տարրերի հանրագումարի և սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն կատարվող պակասեցումների տարբերության առավելագույնը 20 տոկոսի չափով:

2) Հիմնական կապիտալը պակասեցվում (նվազեցվում) է.
   ա. բանկի կողմից տրամադրված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով: Ընդ որում, սույն պարբերության իմաստով՝ երկարաժամկետ ստորադաս փոխառություն է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այն ստորադաս փոխառությունը, որը տրամադրվել է առնվազն հինգ տարի ժամկետով:
   բ. բանկի կողմից թողարկված այն սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք՝
      բ1. հետ են գնվել բանկի կողմից, եթե արդեն իսկ չեն նվազեցվում հիմնական կապիտալից կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, կամ
      բ2. ձեռք են բերվել այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում բանկը հանդիսանում է նշանակալից մասնակից, կամ ձեռք են բերվել բանկի անուղղակի ֆինանսավորմամբ, կամ
      բ3. բանկը, որևէ իրավաբանական փաստաթղթի հիման վրա, պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել հետագայում (բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի), կամ
      բ4. ապահովված են բանկի հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, կամ որոնց սեփականատերերը տնտեսապես կամ իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում են հայտնվում այն բանի արդյունքում, որ նրանց՝ սովորական բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքից բխող պահանջը, կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ ենթակա է բավարարման ավելի շուտ, քան օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը:

գ. ոչ նյութական ակտիվների (այդ թվում՝ շահագործումից դուրս ոչ նյութական ակտիվների), ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով: Ընդ որում, բանկի գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերը և դրանց օգտագործման իրավունքները, Վիզա, Մաստեր Քարդ, Ամերիքան էքսպրես, Սվիֆտ, ՍիԲիէյՆեթ, ԱրՔա և Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրված համաձայնությամբ՝ նաև այլ վճարահաշվարկային (այդ թվում՝ էլեկտրոնային պլաստիկ քարտերի սպասարկման) համակարգերից օգտվելու իրավունք տվող վճարումները նվազեցվում են դրանց հաշվեկշռային արժեքի 50%-ի չափով՝ 2016 թ. հունվարի 1-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից սկսած՝ ամբողջությամբ:

դ. բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների և այլ նյութական ակտիվների, այդ թվում՝ գրավի տնօրինման արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած սեփականացված ակտիվների, շահագործումից դուրս և այլ հիմնական միջոցների), ինչպես նաև դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով, այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով բանկի սեփականությունը դառնալու օրվանից վեց ամիս հետո, իսկ ակտիվը ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) տրամադրվելու նպատակով ձեռք բերվելու կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի լուծման կամ ավարտի դեպքում՝ այդ ակտիվը բանկի հաշվեկշռում որպես հիմնական միջոց ճանաչվելու օրվանից մեկ տարի հետո:

ե. գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի չափով այդ բաժնետոմսերը օրենքով սահմանված կարգով բանկի սեփականությունը դառնալու օրվանից վեց ամիս հետո: Ընդ որում, սույն ենթակետում նշված բաժնետոմսերը ենթակա չեն նվազեցման (առավելագույնը՝ այդ բաժնետոմսերով ապահովված պահանջի գումարի չափով) բանկի հիմնական կապիտալից մինչև սույն կետում նշված վեցամսյա ժամկետի ավարտը միայն այն դեպքում, երբ տվյալ բաժնետոմսերի իրական արժեքի վերաբերյալ առկա է անկախ գնահատողի գնահատականը, որը տրվել է սույն ենթակետում նշված բաժնետոմսերը օրենքով սահմանված կարգով բանկի սեփականությունը համարվելու օրվանից առավելագույնը 2 ամիս առաջ, հակառակ դեպքում բաժնետոմսերը նվազեցվում են հիմնական կապիտալի մեծությունից բանկի սեփականությունը դառնալու օրվանից:

զ. բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների արժեքի՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Սույն պարբերության իմաստով՝ նյութական ակտիվի արժեքը հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի և կապիտալ ներդրումների հանրագումարին՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով:

է. բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդի չափով:

ը. հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքի և հետաձգված հարկային պարտավորությունների հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով:

թ. այլ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնող անձանց՝ կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով (բացառությամբ՝ սույն ենթակետի «ժ» պարբերությամբ նախատեսված դեպքի), եթե՝

թ1. կանոնադրական կապիտալում ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 4.99 տոկոսը կամ ավելին, կամ

թ2. բոլոր անձանց (այդ թվում՝ սույն ենթակետի «ժա» պարբերությունում նշված) կանոնադրական կապիտալներում ներդրումները գերազանցում են բանկի հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության (նվազեցրած սույն ենթակետի «ա»-«ը» պարբերություններում նշված տարրերը) 10 տոկոսը:

ժ. սույն ենթակետի «թ» պարբերությամբ նախատեսված այն ներդրումները, որոնց արդյունքում բանկը սույն ենթակետի «թ» պարբերությամբ նշված կազմակերպության կապիտալում ձեռք է բերում 100 տոկոս մասնակցություն, և ներդրումը կատարվել է այդ կազմակերպությունը հետագայում լուծարելու (նաև՝ բանկին միացնելու) նպատակով, և Կենտրոնական բանկը տեղեկացվել է այդ նպատակի մասին, իրենց հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են ներդրումը կատարելու պահից 6 ամիս հետո:

ժա. սույն ենթակետի «թ» պարբերությունում չնշված այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումների հաշվեկշռային արժեքի և սույն պարբերության «ժա1»-«ժա2» ենթապարբերություններում նշված մեծությունների տարբերություններից առավելագույնի չափով, եթե՝

ժա1. կանոնադրական կապիտալում ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 4.99 տոկոսը կամ ավելին, կամ

ժա2. բոլոր անձանց (այդ թվում՝ սույն ենթակետի «թ» պարբերությունում նշված) կանոնադրական կապիտալում ներդրումները գերազանցում են բանկի հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության (նվազեցրած սույն ենթակետի «ա-ը» պարբերություններում նշված տարրերը) 10 տոկոսը:

ժբ. այլ կազմակերպություններում կատարված փոխադարձ ներդրումների դեպքում բանկի կապիտալում կատարված ներդրման հաշվեկշռային արժեքի չափով, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ այդ ներդրումը կատարվել է բանկի կապիտալը արհեստականորեն մեծացնելու նպատակով: Սույն պարբերության իմաստով՝ փոխադարձ է համարվում այն ներդրումը, որի արդյունքում բանկը կամ այն կազմակերպությունը, որի կապիտալում բանկն ունի նշանակալից մասնակցություն (այսուհետ՝ սույն պարբերությունում՝ բանկ), մասնակցություն է ձեռք բերում մեկ այլ անձի կամ այն կազմակերպության կապիտալում, որում այդ անձն ունի նշանակալից մասնակցություն, և վերջինս (վերջինիս նշանակալից մասնակիցը) իր հերթին մասնակցություն ունի (ունեն) բանկի կապիտալում:»:

8) Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետում՝

ա. «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Սույն կանոնակարգի հավելված 9-ի բոլոր պահանջները բավարարող արտոնյալ բաժնետոմսերից (հիմնական կապիտալի հաշվարկում ընդգրկված մեծությունը գերազանցող գումարի չափով)՝ սկսած 2018 թ. հունվարի 1-ից, որոնք լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվում են անվանական արժեքով՝ գումարած արտոնյալ բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ: Ընդ որում, բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառման առումով սույն կետում նշված գումարն ունի առաջնահերթություն, լրացուցիչ կապիտալի այլ տարրերի նկատմամբ:

բ. «դ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) Բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններից: Սույն կանոնակարգի իմաստով (բացառությամբ՝ սույն կանոնակարգի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության)՝ երկարաժամկետ ստորադաս փոխառություն է համարվում այն փոխառությունը, որը բավարարում է սույն կանոնակարգի 10-րդ հավելվածի բոլոր պայմանները միաժամանակ: Ընդ որում, բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ ներառման առումով երկարաժամկետ ստորադաս փոխառություններն ունեն առաջնահերթություն՝ լրացուցիչ կապիտալի այլ տարրերի նկատմամբ, բացառությամբ արտոնյալ բաժնետոմսերի: Ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, սկսած դրանց մարման ժամկետի սկզբին նախորդող հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 1-ից, լրացուցիչ կապիտալի հաշվարկից պետք է նվազեցվեն դրանց սկզբնական ընդհանուր գումարի քսան տոկոսի չափով:»:

գ. ավելացնել «ե» պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե) Այլ պահուստներից»:

9) Կանոնակարգ 2-ի 29-րդ կետում «34-րդ հոդվածով» բառերը փոխարինել «34-րդ հոդվածի 1-ին մասով» բառերով:

10) Կանոնակարգ 2-ի 29.1-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

11) Կանոնակարգ 2-ը լրացնել 30.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«30.1. Բանկի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը որոշվում է

$$Ն11 = \frac{Կ_{հիմն}}{ՌԿԱ}$$ բանաձևով,

որտեղ՝

$Կ_{հիմն}$ - հիմնական կապիտալն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՌԿԱ - վարկային ռիսկի, շուկայական ռիսկի և գործառնական ռիսկի հանրագումարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՌԿԱ = ՎՌ + (25/3)(ՇՌ+ԳՌ),*

ՎՌ - վարկային ռիսկն է՝ հաշվարկված սույն կանոնակարգի հավելված 3-ով սահմանված կարգի համաձայն,

ՇՌ – շուկայական ռիսկն է՝ հաշվարկված սույն կանոնակարգի հավելված 4-ով սահմանված կարգի համաձայն,

ԳՌ – գործառնական ռիսկն է՝ հաշվարկված սույն կանոնակարգի հավելված 5-ով սահմանված կարգի համաձայն:»:

12) Կանոնակարգ 2-ի 53.1-րդ կետում «29.1 կետի երկարաժամկետ ստորադաս փոխառությունների սահմանմանը» բառերը փոխարինել «10-րդ հավելվածով սահմանված բոլոր պայմաններին միաժամանակ» բառերով:

13) Կանոնակարգ 2-ը լրացնել Հավելված 9-ով և Հավելված 10-ով՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի (կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված կամ երկարաձգված՝ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների այն պայմանագրերը, որոնցով ներգրավված փոխառությունները չեն համապատասխանում սույն որոշմամբ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների նկատմամբ սահմանված պահանջներին, և որոնք 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ընդգրկված են բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ ենթակա են դուրսգրման՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի.

Ամսաթիվ	Մինչև 01/01/2015 թ. կնքված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հետագա ընդգրկումը բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ արտահայտված 1/01/2015 թ. դրությամբ դրանց՝ բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկված գումարի նկատմամբ տոկոսով
01/01/2015	80%
01/01/2016	60%
01/01/2017	40%
01/01/2018	20%
01/01/2019	0%

Ընդ որում, եթե սույն կետով նախատեսված դուրսգրումը կատարվում է ավելի կարճ ժամկետում, ապա դուրս գրվող գումարը ըստ տարիների պետք է բաշխվի հավասարաչափ:

4. Մինչև 2016 թ. հունվարի 1-ը Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման A+(A1) և A+(A1)–ից բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների այն պայմանագրերը, որոնք չեն համապատասխանում սույն որոշմամբ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների նկատմամբ սահմանված պահանջներին, սակայն համապատասխանում են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը դրանց նկատմամբ սահմանված պահանջներին, ենթակա են դուրսգրման առավելագույնը 5 տարվա ընթացքում՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի.

Ամսաթիվ	Մինչև 2016 թ. հունվարի 1-ը կնքված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հետագա ընդգրկումը բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ արտահայտված 1/01/2015 թ. դրությամբ դրանց՝ բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկված գումարի նկատմամբ տոկոսով
01/01/2015	100%
01/01/2016	80%
01/01/2017	60%
01/01/2018	40%
01/01/2019	20%
01/01/2020	0%

Այն դեպքում, երբ սույն կետով սահմանված՝ երկարաժամկետ ստորադաս փոխառության պայմանագիրը կնքվել է 2015 թ. հունվարի 1-ից մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ապա երկարաժամկետ ստորադաս փոխառության գումարը 2016 թվականի հունվարի 1-ից ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է 80%-ով՝ շարունակելով նվազեցվել սույն կետով սահմանված աղյուսակին համապատասխան:

Ընդ որում, եթե սույն կետով նախատեսված դուրսգրումը կատարվում է ավելի կարճ ժամկետում, ապա դուրս գրվող գումարը ըստ տարիների պետք է բաշխվի հավասարաչափ:

5. Այն ստորադաս փոխառությունները, որոնք չեն համապատասխանում Կանոնակարգ 2-ի 10-րդ հավելվածով սահմանված բոլոր պայմաններին միաժամանակ, սակայն ընդգրկված են ընդհանուր կապիտալի հաշվարկում, սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված ժամանակացույցներին համապատասխան, ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկված գումարի չափով Կանոնակարգ 2-ի 53.1 կետին համապատասխան ենթակա չեն պարտադիր պահուստավորման:

6. Սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պահանջից բացառություն են կազմում այն երկարաժամկետ ստորադաս փոխառությունները (այդ թվում՝ երկարաձգված), որոնք 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ արդեն սկսել են նվազեցվել լրացուցիչ կապիտալի հաշվարկից Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն: Տվյալ դեպքում սույն կետում նշված ստորադաս փոխառությունները լրացուցիչ կապիտալի հաշվարկից շարունակում են նվազեցվել Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «դ» ենթակետի պահանջներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 հուլիսի 2014 թ., N 146-Ն

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 146-Ն որոշման

Հավելված 9

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ
հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության
հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Արտոնյալ բաժնետոմսն ընդգրկվում է բանկի հիմնական կապիտալի հաշվարկում, եթե բավարարում է հետևյալ պայմանները միաժամանակ.

1) այն ամբողջությամբ վճարված է և օրենքով սահմանված կարգով հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում է կանոնադրական հիմնադրամի «Արտոնյալ բաժնետոմսեր» հաշվում.

2) բանկի լուծարման դեպքում արտոնյալ բաժնետիրոջ պահանջները (այդ թվում՝ շահութաբաժինների գծով) ենթակա են բավարարման բանկի մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո, բացառությամբ սովորական բաժնետերերի պահանջների.

3) ապահովված չէ բանկի հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, և (կամ) արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը տնտեսապես և (կամ) իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը, կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ, ենթակա է բավարարման ավելի շուտ, քան բանկի լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ՝ բանկի հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ.

4) թողարկված է անժամկետ.

5) արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինը ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը կամ բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը, ընդ որում՝

ա. շահութաբաժնի լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,

բ. բանկի և արտոնյալ բաժնետիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում բանկի համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում արտոնյալ բաժնետիրոջը՝ բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել արտոնյալ բաժնետոմսին հասանելիք շահութաբաժինը.

6) տվյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինները ենթակա են վճարման միայն բանկի զուտ շահույթից և (կամ) դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից, ընդ որում, շահութաբաժինները վճարվում են միայն դրամական միջոցով.

7) տվյալ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժնի չափը չի կարող կախվածության մեջ դրվել բանկի վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ արտոնյալ բաժնետոմսերի գծով նախկինում վճարված շահութաբաժինների փաստացի մեծությունից.

8) բանկն անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ բաժնետոմսերի ձեռքբերումը.

9) առկա չէ համաձայնություն (որոշում, պայմանագիր, համաձայնագիր), որով արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք կունենա որևէ սահմանափակում կամ խոչընդոտ նախատեսել բանկի կողմից լրացուցիչ սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերի հետագա թողարկման կամ նոր ստորադաս փոխառությունների ներգրավման համար.

10) ցանկացած իրավաբանական փաստաթղթով (բացառությամբ՝ բանկի կանոնադրության), որով կարգավորվում են բանկի և արտոնյալ բաժնետիրոջ միջև արտոնյալ բաժնետոմսի հետ կապված հարաբերությունները, սահմանված է, որ սույն հավելվածով սահմանված պահանջները (պայմանները) փոփոխվելու դեպքում այդ փոփոխությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի նախնական համաձայնությանը, առանց որի փոփոխությունները պարտադիր իրավական ուժ չունեն (կողմերի համար չեն առաջացնում իրավական հետևանքներ):

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 146-Ն որոշման

Հավելված 10

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ
հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության
հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Երկարաժամկետ ստորադաս փոխառությունը (այսուհետ նաև՝ փոխառություն) ընդգրկվում է բանկի լրացուցիչ կապիտալի հաշվարկում, եթե փոխառությունը (փոխառության պայմանագիրը) բավարարում է հետևյալ պայմաններին միաժամանակ.

1) Փոխառությունը չի տրամադրվել բանկի հանդեպ ունեցած որոշակի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով:

2) Փոխառությունը ներգրավված է Հայաստանի Հանրապետության դրամով կամ առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով:

3) Բանկի լուծարման դեպքում փոխատուի պահանջները (այդ թվում՝ տոկոսների գծով) ենթակա են բավարարման բանկի մյուս բոլոր պարտատերերի պահանջները բավարարվելուց հետո:

4) Փոխառությունն ապահովված չէ բանկի և (կամ) բանկի հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, և (կամ) փոխատուն տնտեսապես և (կամ) իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը ենթակա է բավարարման ավելի շուտ, քան բանկի լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում, փոխատուի պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) փոխատուի՝ բանկի հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ:

5) Փոխառությունը տրամադրվել է առնվազն 5 տարի ժամկետով: Ընդ որում, փոխառության պայմանագրով փոխառության մայր գումարի մարում կարող է նախատեսվել միայն փոխառության գումարի լրիվ մարման վերջնաժամկետին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում, իսկ փոխառության պայմանագրի երկարաձգման դեպքում՝ երկարաձգված ամբողջական մարման վերջնաժամկետին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում (բացառությամբ սույն Հավելվածի 7-րդ ենթակետով սահմանված կարգով փոխառության ամբողջ գումարի վաղաժամկետ մարման դեպքերի):

6) Փոխառության պայմանագիրը չի պարունակում այնպիսի դրույթներ (խթաններ), որոնք տնտեսապես կամ այլ կերպ կարող են ստիպել (խթանել) բանկին ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակիորեն մարել փոխառության գումարը: Սույն հավելվածի 17-րդ ենթակետով սահմանված փոխառության՝ բաժնետոմսերի փոխարկվելու դրույթը չի համարվում սույն ենթակետի իմաստով խթան:

7) Փոխառությունը (մայր գումարը և տոկոսները) ժամկետից շուտ մարման ենթակա չէ, բացառությամբ՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

բ. եթե ժամկետից շուտ մարման դեպքում փոխառության ամբողջ գումարն ուղղվում է բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի տեսքով),

գ. եթե փոխառությունը ժամկետից շուտ մարվում է բանկի նախաձեռնությամբ, և եթե պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

գ1. փոխառությունը ժամկետից շուտ մարելու նպատակով բանկը ստացել է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը,

գ2. փոխառությունը ժամկետից շուտ մարման ամսաթվի և փոխառության ստացման ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի:

8) Սույն հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված նախնական համաձայնությունը ստանալու նպատակով բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում ստորադաս փոխառությունը վաղաժամկետ մարելու նպատակահարմարությունը և դրա հետևանքով անցանկալի հետևանքներ չառաջանալը հիմնավորող տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը: Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական համաձայնության տրամադրման կամ մերժման վերաբերյալ, որի մասին ծանուցում է բանկին 30-օրյա ժամկետի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու և (կամ) բանկի կողմից ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ, ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել Կենտրոնական բանկի որոշմամբ:

Կենտրոնական բանկը սույն հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված նախնական համաձայնությունը տրամադրում է, եթե՝

ա. բանկը փոխարինում է ստորադաս փոխառությունը սույն հավելվածի պահանջներին բավարարող մեկ այլ երկարաժամկետ ստորադաս փոխառությամբ կամ սույն կանոնակարգի 9-րդ հավելվածի պահանջները բավարարող արտոնյալ բաժնետոմսերով, և այդ փոխարինումը բացասաբար չի անդրադառնա բանկի ֆինանսական վիճակի վրա, կամ

բ. բանկը հիմնավորում է, որ իր նորմատիվային կապիտալի մակարդակը, առանց սույն կետում նշված ստորադաս փոխառության, բավարար չափով բարձր է, և նոր կապիտալի գործիքով փոխարինելու անհրաժեշտությունը բացակայում է:

9) Պայմանագրի համաձայն՝ փոխառությունը (մայր գումարը կամ տոկոսները) ենթակա չէ մարման բանկի կողմից, եթե փոխառության գումարի և (կամ) դրա գծով տոկոսների մարումը վճարման օրվա դրությամբ կհանգեցնի բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը: Ընդ որում, բանկի և փոխատուի միջև որևէ պայմանագրով կամ բանկի ներքին կամ անհատական իրավական ակտով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում բանկի համար փոխառության գումարի և (կամ) դրա գծով տոկոսների ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունք տրամադրել փոխատուին, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է բանկի կողմից թողարկված բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը և (կամ) բանկի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող այլ ստորադաս փոխառությունների գծով վճարումների իրականացմանը:

10) Սույն հավելվածի 9-րդ ենթակետում նշված դեպքում փոխառության մայր գումարի և (կամ) տոկոսների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում բանկի կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում:

11) Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների մեծությունը չի կարող կախվածության մեջ դրվել բանկի վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ փոխառության գծով կատարված մայր գումարի և (կամ) տոկոսների փաստացի վճարումների մակարդակից: Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների չափը չի կարող նվազել այն դեպքում, երբ փոխառության գծով սահմանված վճարումները բանկը կատարում է ամբողջությամբ և ժամանակին:

12) Որևէ իրավաբանական փաստաթղթով սահմանված չէ փոխատուի համար իրավունք՝ ժամկետից շուտ պահանջելու փոխառության գումարը միայն այն հիմքով, որ բանկը պատշաճ կերպով չի կատարել այլ պարտավորությունների գծով իր ստանձնած պարտավորությունները:

13) Փոխառությունը չի տրամադրվել այնպիսի իրավաբանական անձի կողմից, որում բանկը հանդիսանում է նշանակալից մասնակից, և (կամ) բանկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ փոխառության ներգրավումը:

14) Որևէ իրավաբանական փաստաթղթով սահմանված չէ, որ փոխատուն կարող է որևէ կերպ սահմանափակել կամ խոչընդոտել բանկին այլ փոխատուներից նոր փոխառությունների ներգրավման հարցում:

15) Փոխառության գծով վճարվող գումարների վճարման ժամանակացույցը հստակ նշված է փոխառության պայմանագրում:

16) Այն դեպքում, երբ փոխառության գումարը բանկին տրամադրվում է փուլերով (տրանշերով), ապա լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվելու նպատակով յուրաքանչյուր այդպիսի փուլ (տրանշ) պետք է բավարարի սույն հավելվածով սահմանված բոլոր պայմանները, այդ թվում՝ յուրաքանչյուր փուլ պետք է տրամադրվի առնվազն 5 տարի ժամկետով:

17) Փոխառության պայմանագրով նախատեսված է, որ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում փոխառությունը մարվում է փոխառության համապատասխան գումարի չափով բանկի կողմից, իսկ փոխատուն պարտավորվում է մարված փոխառության գումարն անհապաղ ուղղել բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը (այսուհետ՝ փոխարկում)՝ սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի տեսքով: Ընդ որում, սույն ենթակետի իմաստով՝ փոխառության համապատասխան գումար է համարվում այն գումարը, որը, Կենտրոնական բանկի կարծիքով, անհրաժեշտ է բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար, սակայն ոչ ավելի, քան այն առավելագույն գումարը, որով փոխառությունը սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված իրավիճակն ի հայտ գալուն նախորդող 120 օրվա ընթացքում ներառվել է բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում: Եթե փոխառությունը ներգրավված է առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով, ապա բանկի կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

18) Փոխառության պայմանագրով հստակ սահմանվում է այն հարաբերակցությունը, ըստ որի՝ սույն հավելվածի 17-րդ ենթակետով սահմանված փոխարկումն իրականացնելու նպատակով փոխառությունը պետք է փոխարկվի հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի:

19) Փոխառության պայմանագրով սահմանվում է, որ փոխառության պայմանագրի փոփոխության և (կամ) լուծելու դեպքում անհրաժեշտ է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, առանց որի պայմանագրի ցանկացած փոփոխությունը և (կամ) լուծումը պարտադիր իրավական ուժ չունեն (կողմերի համար չեն առաջացնում իրավական հետևանքներ):

2. Սույն կանոնակարգի իմաստով՝ ֆինանսական վիճակի վատթարացում է համարվում հետևյալ իրավիճակներից որևէ մեկի ի հայտ գալը.

1) բանկի հիմնական կապիտալի համարժեքությունը նվազում է 10.5 տոկոսից կամ բանկի ընդհանուր կապիտալի համարժեքությունը նվազում է 12.5 տոկոսից,

2) Կենտրոնական բանկը գրավոր կերպով տեղեկացնում է բանկին այն մասին, որ կապիտալի գործիքի դուրսգրումը կամ փոխարկումը հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի՝ անհրաժեշտ է, քանի որ առանց դրա բանկի մոտ կառաջանան (հնարավոր է, որ առաջանան) օրենքով սահմանված անվճարունակության կամ սնանկության հիմքեր,

3) Կենտրոնական բանկը գրավոր կերպով տեղեկացնում է բանկին այն մասին, որ առանց «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով սահմանված վարկի տրամադրման կամ Կենտրոնական բանկի կամ պետական այլ օժանդակության բանկի մոտ կառաջանան (հնարավոր է, որ կառաջանան) օրենքով սահմանված անվճարունակության կամ սնանկության հիմքեր:

3. Այն դեպքերում, երբ փոխառության ներգրավման արդյունքում տվյալ փոխատուից ներգրավված ստորադաս փոխառության արժեքը կգերազանցի բանկի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10, 20, 50 կամ 75 տոկոսը, կամ փոխատուի՝ բանկի կանոնադրական կապիտալում ունեցած ձայնի իրավունք տվող մասնակցության և բանկին տրամադրած փոխառության հանրագումարը կգերազանցի բանկի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10, 20, 50 կամ 75 տոկոսը, ապա նախքան փոխառության գումարը (կամ դրա մի մասը) բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկելը, փոխատուն պետք է ստանա բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի համաձայն:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 3-ի 2-րդ կետի աղյուսակում.

ա. աղյուսակի 3-րդ տողում «Ն1» բառը փոխարինել «Ն11, Ն12» բառերով,

բ. աղյուսակը լրացնել նոր տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

32	Հաշվետվություն երկարաժամկետ ստորադաս փոխառությունների վերաբերյալ	36	(տարեկան, յուրաքանչյուր փոփոխության դեպքում)

2) Կանոնակարգ 3-ի 6-րդ կետի.

ա. 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«1-ին էջում ներկայացվում և ամփոփվում են հիմնական տնտեսական նորմատիվների (բացառությամբ՝ պարտադիր պահուստավորման նորմատիվի) հաշվարկին մասնակցող միջին ամսական ցուցանիշներն ու տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված՝ համաձայն Կանոնակարգ 2-ի: 1-ից 10-րդ սյունակներում՝ բացառությամբ 8-րդ սյունակի, ամփոփվում են, համապատասխանաբար, հիմնական կապիտալի, ընդհանուր կապիտալի, ընդհանուր ակտիվների, վարկային ռիսկի, արտարժութային ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, կապիտալի գործիքների գնային ռիսկի, բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների նորմատիվային միջին ամսական մեծությունները, իսկ 8-րդ սյունակում՝ գործառնական ռիսկի նորմատիվային մեծությունը: 4-րդ սյունակի վարկային ռիսկի հաշվարկն իրականացվում է 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ էջերի համաձայն: 11-րդ և 13-րդ սյունակների տվյալները վերցվում են սույն կանոնակարգի ձև թիվ 14 «Հաշվետվություն Ն31 և Ն32 նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ» հաշվետվությունից: Եթե բանկը թույլ չի տվել մեկ փոխառուի և բանկի հետ կապված մեկ անձի գծով բանկի ռիսկի առավելագույն չափի նորմատիվների խախտում, ապա 11-րդ և 12-րդ սյունակներում ներկայացվում են, համապատասխանաբար, մեկ փոխառուի և բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի ամենամեծ գումարները: Եթե նորմատիվները խախտվել են, ապա 11-րդ և 12-րդ սյունակների 1-ին տողում ցույց է տրվում ամենամեծ խախտումն առաջացնող գումարը, իսկ հաջորդ տողերում՝ խախտում առաջացրած բոլոր այլ գումարները՝ ըստ նվազման հաջորդականության: 13-րդ և 14-րդ սյունակներում, համապատասխանաբար, լրացվում են խոշոր փոխառուների և բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն գումարները: Բանկը հաշվետվությանը կից ներկայացնում է տեղեկանք՝ խախտում առաջացրած բոլոր գումարների տրամադրման պահի դրությամբ խախտման փաստի առկայության մասին: 1-ին էջի «Արժույթը» սյունակում լրացվում են երկրորդ խմբի այն արտարժույթները, որոնք ներկայացված են սույն հաշվետվության 18-րդ էջի երրորդ աղյուսակում:».

բ. Վերջին պարբերությունում «20-րդ» բառը փոխարինել «19-րդ» բառով, ինչպես նաև «2, 3, 4, 5, 6, 7 և 8-րդ» բառերը փոխարինել «3, 4, 5, 6, 7, 8 և 9-րդ» բառերով.

գ. Կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«20-րդ էջում ներկայացվում են բանկի հետ կապված այն անձանց գծով Ն41 և Ն42 նորմատիվների հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը համաձայն Կանոնակարգ 2-ի, որոնց դեպքում տեղի են ունեցել

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հունիսի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498), 15.08.2014):

նշված նորմատիվների խախտումներ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում (օրինակ՝ պարտավորության ծագման պահին), սակայն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ խախտումը վերացվել է: Աղյուսակը լրացվում է նույն սկզբունքով, ինչ որ սույն հաշվետվության 19-րդ էջում ներկայացված աղյուսակը: Աղյուսակի վերջին սյունակում լրացվում է խախտման օրը: Հաշվետվության 20-րդ էջում ներկայացման համար նախատեսված յուրաքանչյուր Ն42 նորմատիվի խախտման դեպքի համար ներկայացվում է առանձին 20-րդ էջ:»:

3) Կանոնակարգ 3-ի 9-րդ կետի.

ա. 4-րդ պարբերությունը 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Աղյուսակում պահանջվող ակտիվի պայմանագրային ժամկետը ակտիվի պայմանագրային վերջնաժամկետն է, այսինքն՝ ակտիվի գծով առանձին դրամական հոսքերը (մայր գումարի մասնակի մարումները) ըստ վերջիններիս պայմանագրային ժամկետների չեն ներկայացվում: Միևնույն ժամանակ, այն պայմանագրերը, որոնք պարունակում են ենթապայմանագրեր, ներկայացվում են ըստ ենթապայմանագրերի և այն ժամկետային սյունակներում, որոնց համապատասխանում է տվյալ ենթապայմանագրի վերջնաժամկետը:».

բ. 17-րդ ենթակետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն խմբում ընդգրկված (45), (46) և (47) ենթատողերի հանրագումարը չի կարող տարբերվել «G. Առևտուր» տողում արտացոլված գումարից:».

գ. 21-րդ ենթակետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն խմբում ընդգրկված ենթատողերի հանրագումարը չի կարող տարբերվել «K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» տողում արտացոլված գումարից:».

դ. 28-րդ ենթակետը «որոնք ապահովված են տվյալ անշարժ գույքով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև կառուցապատման իրավունքի գրավադրմամբ կառուցման նպատակով տրամադրված վարկերը» բառերով.

ե. 28-րդ ենթակետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն խմբում ընդգրկված ենթատողերի հանրագումարը չի կարող տարբերվել «Հիփոթեքային վարկեր» տողում արտացոլված գումարից:».

զ. 30-րդ ենթակետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Վարկառուի գործունեության հիմնական խումբը ըստ շրջանառության ծավալում ունեցած կշիռների որոշելու դեպքում՝ վարկառուի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ճշգրտվի ըստ բանկի՝ վարկերի գծով մոնիտորինգի իրականացման ցիկլի: Այն դեպքում, երբ վարկառուի շրջանառության ծավալը հավասարաչափ բաժանվել է երկու կամ ավելի խմբերի, անհրաժեշտ է առաջնորդվել նախորդ ժամանակաշրջաններից ամենավերջին անհավասարաչափ բաշխման արդյունքներով:».

է. 31-րդ ենթակետի 1-ին նախադասությունը վերջից լրացնել հետևյալ բառերով.

«, ընդ որում, ակտիվների ժամկետանց և/կամ երկարածգված օրերը հաշվի են առնվում միայն այն դեպքում, եթե վերջիններս փոփոխում են ակտիվի պայմանագրային վերջնաժամկետը, այսինքն՝ պայմանագրի վերջնաժամկետի ավարտից հետո մայր գումարի գծով առաջացող ժամկետանց և/կամ երկարաձգված օրերը գումարվում են վերջնաժամկետին:»:

4) Կանոնակարգ 3-ի 10-րդ կետի.

ա. 3-րդ պարբերությունը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Աղյուսակներ 1-ի, 2-ի և 2.1-ի «Տարբերություն (+/-)» սյունակներում ներկայացված թվերի բացասական լինելու դեպքում, նրանք արտացոլվում են «-» նշանով:».

բ. 4-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

««Տարբերությունը (+/-)» տողում արտացոլվում է՝ արտարժութային դիրքի երկար լինելու դեպքում (թիվը դրական է), «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» և «Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը» տողերի տարբերությունը, արտարժութային դիրքի կարճ լինելու դեպքում (թիվը բացասական է) «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» և «Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը» տողերի հանրագումարը: Աղյուսակներ 3-ում, 4-ում և 4.1-ում ներկայացված թվերի բացասական լինելու դեպքում, նրանք արտացոլվում են «-» նշանով:»:

5) Կանոնակարգ 3-ի 12-րդ կետի.

ա. 3-րդ պարբերությունը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Այն պարտատոմսերը, որոնք զեղչատոկոսով են, ներկայացվում են անվանական արժեքի և զեղչի գումարի տարբերության չափով:».

բ. 18-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

««Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր» տողում լրացվում են ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը: Ընդ որում, արժեթղթերը տարանջատվում են ըստ մարմանը մնացած օրերի:».

գ. 19-րդ պարբերության 1-ին նախադասության վերջում «տոկոսները» բառից հետո լրացնել «(զեղչատոկոսները)» բառը.

դ. 33-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ

«Խոշոր» պարտավորություններ» տողում լրացվում են նույն անձանց գծով բոլոր այն պարտավորությունների անվանական արժեքների և անվանական տոկոսների հանրագումարները, որոնց հաշվեկշռային արժեքների հանրագումարները կազմում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:»:

6) Կանոնակարգ 3-ի 16-րդ կետի.

ա. 1-ին պարբերությունում «2 էջից» բառերը փոխարինել «4 էջից» բառերով,

բ. Կետը վերջից լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3-րդ և 4-րդ էջերում ներկայացվում են այն անձանց գծով Ն31 և Ն32 նորմատիվների հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը՝ համաձայն Կանոնակարգ 2-ի, որոնց դեպքում տեղի են ունեցել նշված նորմատիվների խախտումներ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում (օրինակ՝ պարտավորության ծագման պահին), սակայն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ խախտումը վերացվել է: Աղյուսակները լրացվում են նույն սկզբունքով, ինչ որ սույն հաշվետվության 1-ին և 2-րդ էջերում ներկայացված աղյուսակները: 3-րդ էջում ներկայացված աղյուսակի վերջին սյունակում լրացվում է խախտման օրը: Հաշվետվության 4-րդ էջում ներկայացման համար նախատեսված յուրաքանչյուր դեպքի համար ներկայացվում է առանձին 4-րդ էջ»:

7) Կանոնակարգ 3-ի 19-րդ կետի 12-րդ պարբերությունում «3-րդ և 4-րդ էջերում ցպահանջ միջոցների» բառերը փոխարինել «4-րդ էջում ցպահանջ միջոցների» բառերով:

8) Կանոնակարգ 3-ի 20-րդ կետում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

ա. 1-ին ենթակետում «իրականացված բոլոր գործառնությունները» բառերը փոխարինել «ֆինանսական բոլոր փոխհարաբերությունները» բառերով.

բ. 2-րդ ենթակետից հետո ավելացնել նոր 2.1 պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հաշվետվության մեջ լրացվող արտարժույթով արտահայտված բոլոր գումարները (բացառությամբ՝ I աղյուսակի «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Պասիվ» մասում լրացվող տվյալների) վերածվում են դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով կամ հաշվարկային փոխարժեքի միջոցով հաշվարկված քրոս-կուրսով:».

գ. 4-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

դ. 6-րդ ենթակետում «(մայր գումարների)» բառերից հետո ավելացնել «և դրանց հետ կապված ստացվելիք/վճարվելիք անվանական տոկոսների հաշվեկշռային» բառերը.

ե. 8-րդ պարբերությունում «վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները» բառերից հետո լրացնել «՝ անկախ այն բանից, թե պարտքային գործիքը, վարկը կամ ավանդը գործում է, թե ոչ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ» բառերը.

զ. 9-րդ ենթակետից հանել «՝ թողնելով նախորդ ժամանակաշրջանի համապատասխան տողերը դատարկ:» բառերը.

է. 19-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ֆինանսական ածանցյալ գործիքները ներառում են ոչ ռեզիդենտների հետ ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն, սվոփ և այլ ածանցյալ գործիքների զուտ դիրքերը, ընդ որում, գործիքի իրական արժեքի բացասական մնացորդն արտացոլվում է «Պասիվ» մասում, իսկ իրական արժեքի դրական մնացորդը՝ «Ակտիվ» մասում:».

ը. 20-րդ ենթակետի առաջին նախադասությունից հանել «տվյալներ» բառը.

թ. 22-րդ ենթակետը վերջից լրացնել նոր՝ «Ընդ որում, լրացվում է պահանջների և պարտավորությունների միայն ժամկետանց մասը:» նախադասությամբ.

ժ. 26-րդ ենթակետում ««Պասիվ» մասի վերաբերյալ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև «Ավանդներ» բաժնում արտացոլված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների վերաբերյալ» բառերը.

ժա. 26-րդ ենթակետում «գրանցման երկիրը» բառերը փոխարինել «գրանցման երկրի՝ Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը (ISO կոդ)» բառերով, իսկ «Հավելված 1-ում» բառերը՝ «Հավելված 18.2-ում» բառերով.

ժբ. 26-րդ ենթակետի «բ5» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«բ5. Եթե Ֆ-ն, Մ-ն, Պ-ն, Ի-ն կամ Տ-ն տվյալ բանկի կամ վարկային կազմակերպության համար հանդիսանում է ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող սուբյեկտ (ուղղակի ներդրողի և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների մանրամասն սահմանումները տես IV աղյուսակի բացատրություններում), ապա համապատասխան տառերը գրվում են շտրիխներով (Ֆ՛, Մ՛, Պ՛, Ի՛ կամ Տ՛):»,

ժգ. 26-րդ ենթակետում լրացնել նոր՝ «բ6» պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«բ6. Տ-ն ներառում է ֆիզիկական անձանց և տնային տնտեսությունները:».

ժդ. 26-րդ ենթակետի գ պարբերությունում «օվերդրաֆտ» բառից հետո լրացնել «, փոխառություն» բառը.

ժե. 33-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում, տոկոսագումարներն արտացոլվում են համախառն հիմքով՝ առանց շահութահարկի զտման:».

ժզ. 37-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Բոլոր բաժիններ-ը լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ անվանական գումարների (մայր գումարների) և դրանց հետ կապված ստացվելիք/վճարվելիք անվանական տոկոսների հաշվեկշռային մնացորդների հիման վրա:».

ժէ. 41-րդ ենթակետից հանել «(չի վերաբերում հաշվեգրված տոկոսներին, որոնք ներառվում են յուրաքանչյուր գործիքի հետ մեկտեղ)» բառերը:

9) Կանոնակարգ 3-ի 21-րդ կետում.

ա. 10-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի տեսակը և ստանում է հետևյալ արժեքը.

«1» - SPOT տեսակի գործառնություններ (բացառությամբ՝ սվոփ գործառնությունների մաս կազմող գործառնությունների)»,

բ. Կետը վերջից լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հաշվետվության երկրորդ էջը լրացվում է սույն հաշվետվության առաջին էջի լրացման համար նախատեսված կանոնների համաձայն: «Ֆիզիկական անձ/Տնտեսության ճյուղ» սյունակում լրացվում է համապատասխան ճյուղի թվային ցուցիչը՝ հետևյալ սկզբունքով. «1» – ֆիզիկական անձ (անհատ ձեռներեց), «2» - գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն/ձկնաբուծություն, «3» – հանքագործական արդյունաբերություն, «4» – սննդի արդյունաբերություն, «5» – խմիչքների և ծխախոտի արդյունաբերություն, «6» – այլ մշակող արդյունաբերություն, «7» – էլեկտրաէներգիայի արտադրություն, էլեկտրականության, գազի, ջրի մատակարարում, «8» – շինարարություն, «9» – առևտուր, «10» – փոխադրումներ և պահեստային տնտեսություն, «11» – կեցության և հանրային սննդի կազմակերպում, «12» – տեղեկատվություն և կապ, «13» – ֆինանսական և ապահովագրական գործունեություն, «14» – այլ ճյուղեր: Տնտեսության ճյուղերի դասակարգումն իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի թիվ 6 հաշվետվությամբ սահմանված սկզբունքների:

«Կանխիկ/անկանխիկ» սյունակում լրացվում է «1» - կանխիկ գործարքների համար կամ «2» - անկանխիկ գործարքների համար:»:

10) Կանոնակարգ 3-ի 25-րդ կետի.

ա. 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«բ. «ստացված», եթե տեղի է ունեցել արտասահմանից դեպի ՀՀ կատարված փոխանցումների ստացում: Այս մասում բացառություն են կազմում որպես միջնորդ օղակ արտասահմանից ստացված և անմիջապես ՀՀ տարածքում գործող մեկ այլ բանկի փոխանցված միջոցները: Եթե հաշվետու առևտրային բանկը ստանում է հանձնարարական արտասահմանից, որպեսզի ստացված միջոցները մուտքագրի իր մոտ սպասարկվող առևտրային բանկի հաշվին, ապա այդ ստացումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է շահառուին վճարումը ապահովող (շահառուի հաշվին միջոցները մուտքագրող/շահառուին կանխիկ վճարող) բանկը: Միաժամանակ բացառություն են կազմում այն փոխանցումները, որոնց դեպքում և՛ վճարողը, և՛ շահառուն, կամ և՛ վճարողի, և՛ շահառուի հաշիվները գտնվում են ՀՀ տարածքում, իսկ վճարումները կատարվում են արտասահմանյան փոխանցումների համակարգերով:».

բ. 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

««8) Փոխանցման նպատակը» սյունակում լրացվում է «առևտրային», «ոչ առևտրային» կամ «հաշվից հաշիվ փոխանցումներ» տարբերակը:

«Հաշվից հաշիվ փոխանցումներ» են համարվում այն միջազգային փոխանցումները, որոնց դեպքում հաճախորդը տվյալ բանկում ունեցած իր հաշվից փոխանցում է իրականացրել իր՝ արտասահմանյան բանկում ունեցած հաշվին կամ արտասահմանյան բանկում ունեցած իր հաշվից միջոցներ է փոխանցել տվյալ բանկում ունեցած իր հաշվին:

Սույն հաշվետվության իմաստով՝ ֆիզիկական անձանց համար ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցումներ են համարվում.

ա. հաճախորդի անունով արտերկրից ստացված (արտերկիր փոխանցված) անհատույց ֆինանսական միջոցները, որոնց նպատակը ընթացիկ կարիքների բավարարումն է, մասնավորապես՝ ընթացիկ ֆինանսական օգնությունը և նվիրատվությունները (բացառությամբ՝ անշարժ գույքի ձեռքբերման, ներդրումների և շինարարական աշխատանքների իրականացման համար ստացված/փոխանցված ֆինանսական օգնությունը), նպաստները, թոշակները և այլ նմանատիպ միջոցները,

բ. աշխատանքի դիմաց ստացված (վճարված) աշխատավարձը, երբ աշխատողը աշխատել է արտերկրում տեղակայված կազմակերպությունում և աշխատավարձը ստանում է՝ գտնվելով արդեն իր երկրում, բանկային փոխանցման միջոցով,

գ. երբ աշխատողը աշխատում է ՀՀ-ում տեղակայված այնպիսի կազմակերպությունում, որտեղ աշխատավարձը ստանում է արտերկրից աշխատավարձի ուղղակի փոխանցման միջոցով:

Մնացած բոլոր դեպքերում, այդ թվում՝ անշարժ գույքի ձեռքբերման, շինարարական աշխատանքների իրականացման համար կատարվող փոխանցումները, այդ թվում՝ նաև այս նպատակներով տրամադրվող անհատույց ֆինանսական օգնությունը և նվիրատվությունները չպետք է դիտել որպես ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցում՝ դիտարկելով որպես «առևտրային»:

Եթե արտերկրից ՀՀ փոխանցումներում առկա են այնպիսի դեպքեր, որտեղ փոխանցման նպատակը հստակ նշված չէ, և չկան համապատասխան տեղեկություններ նշված փոխանցումը դասակարգելու համար, ապա բանկը պետք է որպես կողմնորոշիչ ցուցանիշներ օգտագործի հետևյալը.

ա. Եթե ֆիզիկական անձի կողմից իրականացված փոխանցման (ստացման) շահառուն (վճարողը) իրավաբանական անձ է, ապա նշված միջոցը պետք է դասակարգել որպես «առևտրային»,

բ. եթե փոխանցումն իրականացնողը (ստացողը) ֆիզիկական անձ է, ապա այն պետք է դիտարկել որպես ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցում/ստացում և ընդգրկել «ոչ առևտրային» սյունակում միայն այն դեպքում, եթե փոխանցվող գումարի չափը չի գերազանցում 10 000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք գումարը ներառյալ:

Սույն հաշվետվության իմաստով՝ իրավաբանական անձանց համար ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցումներ են դրամաշնորհները, նվիրատվությունը և այլ անհատույց ստացված/փոխանցված միջոցները:

Եթե հաճախորդի կողմից փոխանցվող/ստացվող գումարի նպատակը ըստ նշված կանոնների չի դասակարգվում որպես «ոչ առևտրային», ապա այն նշվում է որպես «առևտրային» բնույթ ունեցող:».

գ. 11-րդ ենթակետը «փոխարժեքով» բառից հետո լրացնել «, ընդ որում, տվյալները լրացնել ստորակետից հետո առնվազն երկու նիշ ճշտությամբ» բառերով:

11) Կանոնակարգ 3-ի 26-րդ կետի 9-րդ պարբերությունը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, ֆինանսաբանկային համակարգում աշխատանքային փորձը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:»:

12) Կանոնակարգ 3-ի 27-րդ կետի 2-րդ պարբերությունում «լրացվում է» բառերը փոխարինել «լրացվում և ներկայացվում է» բառերով:

13) Կանոնակարգ 3-ի 33-րդ կետում «2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» 18-18.2-րդ կետերի» բառերը փոխարինել «2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ի» բառերով:

14) Կանոնակարգ 3-ը լրացնել նոր՝ 33.2.-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«33.2. Հաշվետվություն ձև թիվ 36-ում ներկայացվում են հաշվետու բանկին տրամադրված՝ Կանոնակարգ 2-ի Հավելված 10-ի պահանջները բավարարող երկարաժամկետ ստորադաս փոխառության (սույն կետում այսուհետ՝ փոխառություն) և այդ փոխառությունը տրամադրած անձի (սույն կետում այսուհետ՝ անձ) վերաբերյալ տեղեկություններ: Հաշվետվությունը լրացվում է հետևյալ սկզբունքների համաձայն.

1) «Անձի անունը և ազգանունը (անվանումը)» սյունակում լրացվում է փոխառություն տրամադրող անձի անունը և ազգանունը, եթե փոխառություն տրամադրողը ֆիզիկական անձ է, կամ նրա անվանումը, եթե փոխառություն տրամադրողն իրավաբանական անձ է:
2) «Անձի անձնագրային տվյալները (հարկային հաշվառման համարը)» սյունակում լրացվում է անձի փոխառություն տրամադրող անձի անձնագրի (բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի) համարը, եթե փոխառություն տրամադրողը ֆիզիկական անձ է, կամ նրա հարկային հաշվառման համարը, եթե փոխառություն տրամադրողը իրավաբանական անձ է:
3) «Անձի ռեզիդենտությունը» սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»՝ համաձայն սույն կանոնակարգում ներառված՝ ռեզիդենտության որոշման համար նախատեսված հարցաթերթիկի արդյունքների:
4) «Փոխառության ներգրավման ամսաթիվը» սյունակում լրացվում է փոխառության փաստացի ստացման ամսաթիվը, հետևյալ սկզբունքով՝ XX.XX.XXXX (օր.ամիս.տարի):
5) «Փոխառության մարման ամսաթիվը» սյունակում լրացվում է փոխառության մարման (սկզբնական պայմանագրով նախատեսված) ամսաթիվը, հետևյալ սկզբունքով՝ XX.XX.XXXX (օր.ամիս.տարի):
6) «Փոխառության երկարաձգման ամսաթիվը» սյունակում լրացվում է փոխառության պայմանագրի երկարաձգման արդյունքում ձևավորված մարման ամսաթիվը, հետևյալ սկզբունքով՝ XX.XX.XXXX (օր.ամիս.տարի):
7) «Փոխառության արժույթը» սյունակում լրացվում է փոխառության արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի:
8) «Համախառն հաշվեկշռային մնացորդը» սյունակի «Ընդամենը» մասում լրացվում է հաշվետու օրվա դրությամբ փոխառության հաշվեկշռային արժեքը (ներառյալ՝ փոխառության գծով հաշվարկված, բայց դեռ չվճարված տոկոսները):
9) «Համախառն հաշվեկշռային մնացորդը» սյունակի «մայր գումարի մնացորդը» մասում լրացվում է հաշվետու օրվա դրությամբ փոխառության մայր գումարի մնացորդը:
10) «Համախառն հաշվեկշռային մնացորդը» սյունակի «հաշվեգրված տոկոսներ» մասում լրացվում է հաշվետու օրվա դրությամբ փոխառության գծով անվանական տոկոսադրույքով հաշվարկված, բայց դեռ չվճարված տոկոսների գումարը:

11) «Ընդհանուր կապիտալի հաշվարկում մասնակցող գումարը» սյունակում լրացվում է ընդհանուր կապիտալի հաշվարկին ընդգրկվող երկարաժամկետ ստորադաս փոխառության գումարը՝ համաձայն Կանոնակարգ 2-ի պահանջների:»:

15) Կանոնակարգ 3-ը լրացնել նոր՝ 40.3.-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«40.3. Թիվ 36 հաշվետվությունը ներկայացվում է մինչև յուրաքանչյուր փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 6-րդ աշխատանքային (բանկային) օրը:»:

16) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 142-րդ բաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

17) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 3 հաշվետվության առաջին էջը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

18) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 3 հաշվետվության երկրորդ էջի 8-րդ սյունակի անվանումից հանել «(ոչ ավելի, քան հիմնական կապիտալի 50%)» բառերը:

19) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 3 հաշվետվության 19-րդ էջը շարադրել նոր խմբագրությամբ Հավելված 3-ի (կցվում է), ինչպես նաև նույն հաշվետվությունը լրացնել նոր աղյուսակով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է):

20) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 6 հաշվետվության «I. Վարկային ներդրումներ, ավանդներ, լիզինգ, ֆակտորինգ և ռեպո համաձայնագրեր՝ ըստ ժամկետների» և «IV. Չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ՝» աղյուսակների «անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկեր» տողից հետո լրացնել նոր՝ «անշարժ գույքի կառուցապատման հիփոթեքային վարկեր» տող:

21) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 6 հաշվետվության «II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկված պահուստների չափը» աղյուսակում «Ընդամենը» տողերից հետո լրացնել մեկական «այդ թվում՝ լրացուցիչ պահուստավորում» տող:

22) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 11 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 5-ի (կցվում է):

23) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 14 հաշվետվության առաջին և երկրորդ էջերի աղյուսակներում 1-ին սյունակներից հետո լրացնել նոր սյունակ՝ հետևյալ բովանդակությամբ.

Փոխառուի հարկային հաշվառման համարը (անձնագրային տվյալները)
1.1

24) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 14 հաշվետվությունը լրացնել նոր՝ 3-րդ և 4-րդ էջերով՝ համաձայն սույն որոշման Հավելված 6-ի (կցվում է):

25) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 15 հաշվետվության աղյուսակում երկրորդ սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ հետևյալ բովանդակությամբ.

Փոխառուի հարկային հաշվառման համարը (անձնագրային տվյալները)
2.1

26) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 17 հաշվետվության «III. Ներգրավված միջոցների միջին արդյունավետ տոկոսադրույքների վերաբերյալ» աղյուսակից հանել «Ցպահանջ» սյունակը:

27) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 18.1 հաշվետվությունը լրացնել նոր՝ 2.1 պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Եթե ուղղակի ներդրողը ֆիզիկական անձ է, ապա համարվում է ուղղակի ներդրման փոխհարաբերության մեջ իր տնային տնտեսության անդամների հետ: Այն դեպքում, երբ նույն տնային տնտեսության անդամներն ունեն ներդրումներ նույն ընկերության բաժնետիրական կապիտալում, նրանց ներդրումը դիտվում է համատեղ:»:

28) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 19 հաշվետվությունը լրացնել նոր էջով՝ համաձայն սույն որոշման Հավելված 7-ի (կցվում է):

29) Կանոնակարգ 3-ը լրացնել նոր՝ «Հաշվետվություն երկարաժամկետ ստորադաս փոխառությունների վերաբերյալ» ձև թիվ 36-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 8-ի (կցվում է):

30) Կանոնակարգ 3-ում ներառված՝ ռեզիդենտության որոշման համար նախատեսված հարցաթերթիկի նախավերջին պարբերությունում «գրանցման վայրից» բառերը փոխարինել «գործունեության իրականացման վայրից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի սեպտեմբերի 1-ից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 14-րդ, 15-րդ և 29-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ից, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, 2-րդ ենթակետի «ա» պարբերության, և 17-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

3 հուլիսի 2014 թ., N 147-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

142 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

1420 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով

14200	
14200PC	20 (ընդհանուր պահուստ)
14200PS	20 (հատուկ պահուստ)
14200PA	20 (լրացուցիչ պահուստ)
14201	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ վարկային կազմակերպությունների գծով
14201PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ վարկային կազմակերպությունների գծով (ընդհանուր պահուստ)
14201PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ վարկային կազմակերպությունների գծով (հատուկ պահուստ)
14201PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ վարկային կազմակերպությունների գծով (լրացուցիչ պահուստ)
14202	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ներդրումային ընկերությունների գծով
14202PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ներդրումային ընկերությունների գծով (ընդհանուր պահուստ)
14202PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ներդրումային ընկերությունների գծով (հատուկ պահուստ)
14202PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ներդրումային ընկերությունների գծով (լրացուցիչ պահուստ)
14203	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ապահովագրական ընկերությունների գծով
14203PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ապահովագրական ընկերությունների գծով (ընդհանուր պահուստ)
14203PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ապահովագրական ընկերությունների գծով (հատուկ պահուստ)
14203PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ապահովագրական ընկերությունների գծով (լրացուցիչ պահուստ)
14204	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ֆինանսական կազմակերպությունների գծով
14204PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ֆինանսական կազմակերպությունների գծով (ընդհանուր պահուստ)
14204PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ֆինանսական կազմակերպությունների գծով (հատուկ պահուստ)
14204PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ֆինանսական կազմակերպությունների գծով (լրացուցիչ պահուստ)

1421 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով

14210	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական առևտրային կազմակերպությունների գծով
14210PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական առևտրային կազմակերպությունների գծով (ընդհանուր պահուստ)
14210PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական առևտրային կազմակերպությունների գծով (հատուկ պահուստ)
14210PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական առևտրային կազմակերպությունների գծով (լրացուցիչ պահուստ)
14211	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ առևտրային կազմակերպությունների գծով
14211PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ առևտրային կազմակերպությունների գծով (ընդհանուր պահուստ)
14211PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ առևտրային կազմակերպությունների գծով (հատուկ պահուստ)
14211PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ առևտրային կազմակերպությունների գծով (լրացուցիչ պահուստ)
14212	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ հիմնարկների գծով
14212PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ հիմնարկների գծով (ընդհանուր պահուստ)
14212PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ հիմնարկների գծով (հատուկ պահուստ)
14212PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ հիմնարկների գծով (լրացուցիչ պահուստ)
14213	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով
14213PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով (ընդհանուր պահուստ)
14213PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով (հատուկ պահուստ)
14213PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով (լրացուցիչ պահուստ)
14214	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ոչ առևտրային կազմակերպությունների գծով
14214PC	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ոչ առևտրային կազմակերպությունների գծով (ընդհանուր պահուստ)
14214PS	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ոչ առևտրային կազմակերպությունների գծով (հատուկ պահուստ)
14214PA	Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ ոչ առևտրային կազմակերպությունների գծով (լրացուցիչ պահուստ)

14215 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆիզիկական անձանց գծով
14215PC Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆիզիկական անձանց գծով (ընդհանուր պահուստ)
14215PS Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆիզիկական անձանց գծով (հատուկ պահուստ)
14215PA Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆիզիկական անձանց գծով (լրացուցիչ պահուստ)
14216 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ անհատ ձեռնարկատերերի գծով
14216PC Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ անհատ ձեռնարկատերերի գծով (ընդհանուր պահուստ)
14216PS Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ անհատ ձեռնարկատերերի գծով (հատուկ պահուստ)
14216PA Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ անհատ ձեռնարկատերերի գծով (լրացուցիչ պահուստ)
14217 Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ անձանց գծով
14217PC Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ անձանց գծով (ընդհանուր պահուստ)
14217PS Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ անձանց գծով (հատուկ պահուստ)
14217PA Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ այլ անձանց գծով (լրացուցիչ պահուստ)

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ն 1.1, Ն 1.2, Ն 2.1, Ն 2.1.1, Ն 2.1.2, Ն 2.2, Ն 2.2.1, Ն 2.2.2, Ն 3.1, Ն 3.2, Ն 4.1, Ն 4.2 և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ

Ձև թիվ 3
(ամսական)

Բանկի անվանումը _____
Ամսաթիվը ____ թ-ից մինչև ____ թ.

(հզ. դրամ)

Հոսուկիտի ցուցանիշ	Հոսուկիտի մասնակցությունը	Հոսուկիտի մասնակցությունը	Ռիսկով կշռված ակտիվներ					Բարձր միջնակարգ ակտիվներ	Գործառնական ռիսկ	Մեկ փոխառուի գծով ռիսկի գումարը	Բանկի հետ կապված մեկ անձանց գծով ռիսկի գումարը	Խոշոր մասնակցություններ գծով ռիսկի գումարը	Բանկի հետ կապված անձանց ռիսկի գումարը
			Ընդամենը ռիսկ կշռված	Շուկայական ռիսկ			Գործառնական ռիսկ						
				Ընդամենը	Տոկոսադրույքի ռիսկ	Դրամավարկային ռիսկ							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

Ն 1.1 Նորմատիվի մեծությունը (1/ (4+(8.33)* (5+6+7+8)))	Ն 1.2 Նորմատիվի մեծությունը (2/ (4+(8.33)* (5+6+7+8)))	Ն 2.1 Նորմատիվի մեծությունը (9/3)	Ն 2.2 Նորմատիվի մեծությունը (9/10)	Ն 3.1 Նորմատիվի մեծությունը (11/2)	Ն 4.1 Նորմատիվի մեծությունը (12/2)	Ն 3.2 Նորմատիվի մեծությունը (13/2)	Ն 4.2 Նորմատիվի մեծությունը (14/2)

Ն 2.1.1 Նորմատիվի մեծությունը	Ն 2.2.1 Նորմատիվի մեծությունը

Արժույթը	Ն 2.1.2 Նորմատիվի մեծությունը	Ն 2.2.2 Նորմատիվի մեծությունը

Բանկի վարչության նախագահ՝ _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ _____

Հավելված 3

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

Ն4.1 և Ն4.2 Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը
(շարունակություն)

Կանոնակարգ 2-ի համաձայն բանկի հետ կապված անձանց նկատմամբ ունեցած պահանջները							
Հ/Հ	Կատարվող գործարքի (ներդրման) տեսակը, ակտիվի տեսակը, ապագա դրամական հոսքերի տեսակը	Փոխառուի կարողության հաշվառման համար կիրառվող արտաքին վարկանիշը (ըստ լինելու դեպքում)	Ժամկետային վարկի մնացորդը	Երկարաժամկետ վարկի մնացորդը	Հետհաշվեկշռային երաշխավորությունները, ակտիվներին վերաբերող ֆծերի, քոմիտենտների և օվերդրաֆտների չօգտագործված մասեր	Ժամկետային այլ փոխառությունների և բանկի ընդառաջ պարտավորությունների մնացորդը	Երկարաժամկետ և ժամկետային այլ փոխառությունների և բանկի ընդառաջ պարտավորությունների մնացորդը
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
Ընդամենը			**0**	**0**	**0**	**0**	**0**
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
11							
12							
13							
…							
30							

Կանոնակարգ 2-ի համաձայն բանկի հետ կապված անձանց նկատմամբ ունեցած պահանջները										
Այլ անձին նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների կամ երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող գումարի չափով)		**Ընդամենը (3+4+5+6+7+8+9)**	**Դեպարտի կորուստների պահուստ**	**Ընդամենը ռիսկով չկշռվող հոդված (10-11)**	**Միջբանկային ավանդներ, թղթակցային հաշիվներ, օստրերկիրյա կառավարություններ և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջներ**	**Դեպարտի կորուստների պահուստ**	**Ընդամենը ռիսկով կշռվող հոդված (13-14)**	**Գումարը համապատասխան ռիսկի կշռով**	**Գումարը (12+16)**	**Ն4.2 նորմատիվի հաշվարկման մեջ ընդգրկվող մեծությունը (17 – 8 + հնարավոր կորուստների պահուստ 8-րդ սյունակում ներկված մեծությունների գծով)**
բանկի հետ կապված անձինք	այլ անձինք									
8	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*
0	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	
		0		0			0		0	

Հավելված 4

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

Ն4.1 և Ն4.2 Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը
(շարունակություն)

Կանոնակարգ 2-ի համաձայն բանկի հետ կապված անձանց նկատմամբ ունեցած պահանջները										
Հ/Հ	Կազմակերպության (վարկառուի) անվանումը (անունը, ազգանունը)	Փոխառուի հարկային հաշվառման համարը (անձնագրային տվյալները)	Ժամկետային վարկի մնացորդը	Երկարաժկետ և ժամկետանց վարկի մնացորդը	Հետհաշվեկշռային երաշխավորություններ, ակրեդիտիվներ, գումարներին և վարկային գծերին, քարտերին և օվերդրաֆտներին չօգտագործված մասեր	Ժամկետային և բանկի փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մնացորդը	Երկարաժկետ և ժամկետանց և բանկի փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մնացորդը	Այլ անձին նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների կամ երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող գումարի չափով)		Ընդամենը (3+4+5+6+7+8+9)
								բանկի հետ կապված անձինք	այլ անձինք	
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
Ընդամենը			**0**	**0**	**0**	**0**	**0**		**0**	**0**
1										0
2										0
3										0
4										0
5										0
6										0
7										0
8										0
9										0
10										0
11										0
.....										0

Կանոնակարգ 2-ի համաձայն բանկի հետ կապված անձանց նկատմամբ ունեցած պահանջները									
Հնարավոր կորուստների պահուստ	Ընդամենը ռիսկով չկշռվող հոդված (10-11)	Միջբանկային ավանդներ, բոթակցային հաշիվներ, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջներ	Հնարավոր կորուստների պահուստ	Ընդամենը ռիսկով կշռվող հոդված (13-14)	Գումարը համապատասխան ռիսկի կշռով	Գումարը (12+16)	Ն42 նորմատիվի հաշվարկման մեջ ընդգրկվող մեծությունը (17 – 8 + հնարավոր կորուստների պահուստ 8-րդ սյունակում նշված մեծությունների գծով)	Խախտման դրության ընդհանուր կապիտալ	Խախտման ամսաթիվը
11	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*	*19*	*20*
0	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**		**0**
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			
	0			0		0			

Հավելված 5

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

Ձև թիվ 11
(ամսական, եռամսյակային, տարեկան)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ

Բանկի անվանումը _____
Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

(հզ. դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան
Մեծությունը ժամանակաշրջանի սկզբում	x
Ընդհանուր կապիտալ	0
Հիմնական կապիտալ	0
Սովորական բաժնետոմսեր + էմիսիոն եկամուտ - զեղչ	
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	
Գլխավոր պահուստ	
Չբաշխված շահույթ՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	
Արտոնյալ բաժնետոմսեր՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ, այդ թվում՝	0
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության	
Սովորական բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության	
Ոչ նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության	
Նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության	
Գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերության	
Նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերության	
Բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ	
Հետաձգված հարկային ակտիվների և հետաձգված հարկային պարտավորությունների դրական տարբերություն	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «թ» պարբերության	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժ» պարբերության	
Այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժա» պարբերության	
Այլ կազմակերպություններում կատարված փոխադարձ ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժբ» պարբերության	
Լրացուցիչ կապիտալ	0
Բանկի գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «ա» ենթակետի	
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	
Արտոնյալ բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «գ» ենթակետի	
Բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «դ» ենթակետի	
Այլ պահուստներ (բացի Կանոնակարգ 2-ով նախատեսված բացառություններից)	
Փոփոխություն ժամանակաշրջանի ընթացքում	x
Ընդհանուր կապիտալ	0
Հիմնական կապիտալ	0
Սովորական բաժնետոմսեր + էմիսիոն եկամուտ - զեղչ	
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	
Գլխավոր պահուստ	
Չբաշխված շահույթ՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	
Արտոնյալ բաժնետոմսեր՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	

Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ, այդ թվում՝	0
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության	
Սովորական բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության	
Ոչ նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության	
Նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության	
Գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերության	
Նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերության	
Բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ	
Հետաձգված հարկային ակտիվների և հետաձգված հարկային պարտավորությունների դրական տարբերություն	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կանոնադրական կապիտալ ներում ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «թ» պարբերության	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժ» պարբերության	
Այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժա» պարբերության	
Այլ կազմակերպություններում կատարված փոխադարձ ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժբ» պարբերության	
Լրացուցիչ կապիտալ	0
Բանկի գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «ա» ենթակետի	
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	
Արտոնյալ բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «գ» ենթակետի	
Բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «դ» ենթակետի	
Այլ պահուստներ՝ (բացի Կանոնակարգ 2-ով նախատեսված բացառություններից)	
Մեծությունը ժամանակաշրջանի վերջում	x
Ընդհանուր կապիտալ	0
Հիմնական կապիտալ	0
Սովորական բաժնետոմսեր + էմիսիոն եկամուտ - զեղչ	
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	
Գլխավոր պահուստ	
Չբաշխված շահույթ՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	
Արտոնյալ բաժնետոմսեր՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ, այդ թվում՝	0
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության	
Սովորական բաժնետոմսեր՝ Ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության	
Ոչ նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության	
Նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության	
Գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերության	
Նյութական ակտիվներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերության	
Բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ	
Հետաձգված հարկային ակտիվների և հետաձգված հարկային պարտավորությունների դրական տարբերություն	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «թ» պարբերության	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժ» պարբերության	
Այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժա» պարբերության	
Այլ կազմակերպություններում կատարված փոխադարձ ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժբ» պարբերության	
Լրացուցիչ կապիտալ	0
Բանկի գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «ա» ենթակետի	
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	
Արտոնյալ բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «գ» ենթակետի	
Բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «դ» ենթակետի	
Այլ պահուստներ (բացի Կանոնակարգ 2-ով նախատեսված բացառություններից)	

Հավելված 6

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

ՀՀ	Կազմակերպության անվանումը (կառավարման ոլորտը)	Կազմակերպության (կառավարման ոլորտի) համարը (ծածկագիրը)	Ամսաթիվը	Վճարման վիճակի մասին	Հետաձգված ծախսերի, արտաբյուջետային հաշիվների, վերադարձվող ավանսների և կանխավճարների մասին	Արտոնյալ վարկերի և վճարումների մասին	Ընդհատված վճարումների մասին	Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց գծով	Ընդամենը	Այլ անձին (որը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող գումարի) չափով	
										Խոշոր փոխառուների մասով	Ոչ խոշոր փոխառուների մասով	
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	
Ընդամենը			**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	
1											0	
2											0	
3											0	
4											0	
5											0	
6											0	
7											0	
8											0	
9											0	
10											0	
11											0	
12											0	
13											0	
14											0	
15											0	
.....											0	

Հետաձգված ծախսերի տոկոսադրույք	Ընդամենը՝ ռիսկով չկշռվող հոդվածներ (11-12)	Միջբանկային ավանդներ, վարկեր, թղթակցային հաշիվներ, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջներ		Հետաձգված կորուստների պահուստ	Ընդամենը՝ ռիսկով կշռվող հոդված (14+15-16)	Գումարը հաշվառումից զերծ ռիսկի կշռով (17 տողի)	Գումարը (13+18)	Ն.32 ցուցանիշի հաշվարկի մեջ ընդգրկվող մնացորդը (19-9 + հնարավոր կորուստների պահուստ 9-րդ սյունակում ընդգծված մնացորդների գծով)	Խախտման դրության ընդհանուր կարգավիճակ	Խախտման ամսաթիվը
		փոխառուի գծով	փոխառուի հետ փոխկապակցված անձանց գծով							
12	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*	*19*	*20*	*21*	*22*
0.0	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		
	0				0		0	0		

ՀՀ	Ընտանիքի (փոխառուի) տարեկան միջին եկամուտը	Հաշվարկային (փոխառուի) ընտանիքի հաշվառված միավոր ընդհանուր թվաքանակը (անձերի թվաքանակով տրվելիք)	Տվյալ փոխառուի տեղ փոխանցված գումարի ամբողջ	Այն անձանց անունները (ամբողջությամբ), որոնց փոխառուի հետ տեղափոխված են գումարները, ինչպես նաև նրանց հետ ընտանեկան հարաբերությունները	Ժամկետային վկայի վերադարձման ամսաթիվը	Եղած գումարից վերադարձված գումարը	Հաշվարկային ընտանիքի միջին ամսական եկամուտի չափից ավելի գումարը	Ժամկետային վկայի գումարի վճարման ենթակա տոկոսագումարը	Վճարված տոկոսագումարից հաշվարկային ընտանիքի միջին ամսական եկամուտի չափից ավելի գումարի համար հաշվարկված տոկոսագումարը	Այն անձի (անձանց) անունը (ամբողջությամբ), որոնց գումարը փոխանցվել է, ինչպես նաև նրանց հետ ընտանեկան հարաբերությունները, ինչպես նաև հաշվարկային ընտանիքի միջին ամսական եկամուտի չափից ավելի գումարի համար հաշվարկված տոկոսագումարը փոխանցվել է (անձանց) հասցեները (փոստային ինդեքսները)
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
Ընդամենը										
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										
12										
13										
14										
15										
16										

| Ընդամենը (5+6+7+8+9+10) | Ֆինանսական կոոպտատների պահուստ | Ընդամենը՝ ռիսկով չկշռվող հոդվածներ (11-12) | Միջբանկային ու ավանդներ, կարվկներ, բոթակցային հաշիվներ, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի ձկատմամբ պահանջներ | Ֆինանսական կոոպտատների պահուստ | Ընդամենը՝ ռիսկով կշռվող հոդված (14-15) | Գումարը համապատասխան փոխ կշռով | Գումարը (13+17) | Խոսխոսքոսն ոսոսոս

Հավելված 7

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ՝ ըստ ճյուղերի

Հ/Հ	Գործարքի տեսակը	Փոխարկվող արժույթներ (գնվող / վաճառվող)	Առքի ծավալ (արտար-ժույթով)	Առքի միջին կշռված փոխարժեք	Վաճառքի ծավալ (արտար-ժույթով)	Վաճառքի միջին կշռված փոխարժեք	Միջին փոխարժեք	Ֆիզիկական անձ/ տնտե-սության ճյուղ	Կանխիկ/ անկանխիկ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

Հավելված 8

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հունիսի 24-ի թիվ 147-Ն որոշմամբ

Ձև թիվ 36
(տարեկան, յուրաքանչյուր փոփոխության դեպքում)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երկարաժամկետ ստորադաս փոխառությունների վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

(հզ. դրամ)

Հ/Հ	Ստացված (ընդունված) ստորադաս փոխառության գումարը	Ստացված ստորադաս փոխառության գումարի (ընդունված ստորադաս փոխառության) մարման ժամկետը	Ստացված փոխառության արժույթը	Ստացված ստորադաս փոխառության գումարի մարված մասը	Ստացված ստորադաս փոխառության գումարի մարման ենթակա մասը	Ստացված ստորադաս փոխառության գումարի մարման ենթակա տոկոսները	Ստացված ստորադաս փոխառության գումարի մարման ենթակա տուգանքները	Համախառն հաշվեկշռային մնացորդ			Ստացված ստորադաս փոխառության գումարի մարման ենթակա տոկոսների տարեկան տոկոսադրույքը
								ընդամենը	այդ թվում		
									ընթացիկ մասը	երկարաժամկետ մասը	
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*
Ընդամենը												
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												
13												
14												
15												
16												
17												
18												
19												

Մասնակցի կատարած կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և համապատասխան միջոցներն անկանխիկ եղանակով ստանալու համար ներկայացվող դիմումի ձևը և ներկայացման կարգը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-67-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Մասնակցի կատարած կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և համապատասխան միջոցներն անկանխիկ եղանակով ստանալու համար ներկայացվող դիմումի ձևը և ներկայացման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 160-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 160-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՏԱՐԱԾ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-67-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ մասնակիցների ռեեստրը վարողի կայքէջի կամ հաշվի օպերատորի միջոցով մասնակիցների ռեեստրը վարողին՝ մասնակցի կատարած կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և համապատասխան միջոցներն անկանխիկ եղանակով ստանալու համար ներկայացվող դիմումի (այսուհետ՝ դիմում) ձևը (թղթային և էլեկտրոնային), դիմումի ներկայացման և համապատասխան միջոցները մասնակցին վճարելու կարգը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***մասնակից***՝ ըստ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով կիրառվող նշանակության,

2) ***կուտակային վճար***՝ ըստ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով կիրառվող նշանակության,

3. Սույն կարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-1 ՀՕ-244-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունները:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույն կարգի իմաստով դիմումատու է համարվում մասնակիցը կամ նրա լիազորված անձը, որը ներկայացնում է սույն կարգով նախատեսված դիմումը:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.2014 թ. (ՀՀՊՏ N 20 (499)[1], 20.08.2014):

5. Դիմումի ձևը բաղկացած է դիմերեսից (լրացվող մաս)՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի (կցվում է) և դարձերեսից (լրացման ուղեցույց)՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի (կցվում է): Դիմերեսում ներառվող տեղեկատվությունը լրացվում է դարձերեսի ուղեցույցին համապատասխան:

6. Մասնակիցների ռեեստրը վարողին դիմումը լիազորված անձի կողմից հաշվի օպերատորի միջնորդությամբ ներկայացնելու դեպքում լիազորված անձը հաշվի օպերատորին դիմումի հետ ներկայացնում է նաև դիմումը ներկայացնելու համար լիազորված լինելու փաստը հավաստող՝ պատշաճ ձևով կազմված լիազորագիր:

ԳԼՈՒԽ 4. ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Մասնակիցների ռեեստրը վարողին դիմումն առանց հաշվի օպերատորի միջնորդության ներկայացնելու համար մասնակիցն էլեկտրոնային դիմումը լրացնում և ներկայացնում է մասնակիցների ռեեստրը վարողի պաշտոնական կայքէջի միջոցով:

8. Մասնակիցների ռեեստրը վարողին դիմումը հաշվի օպերատորի միջնորդությամբ ներկայացնելու համար դիմումատուն լրացնում է թղթային դիմումը: Հաշվի օպերատորը նույնականացնում է դիմումատուին նրա անձը հաստատող փաստաթղթի միջոցով, հավաստիանում, որ վերջինս իրավասու է դիմումը ներկայացնել, որից հետո դիմումատուից ստացված թղթային դիմումում լրացված տվյալների հիման վրա լրացնում է էլեկտրոնային դիմումը:

9. Սույն կարգի 8-րդ կետի համաձայն լրացված էլեկտրոնային դիմումը տպվում է երկու օրինակից: Եթե դիմումատուն համաձայն է լրացված էլեկտրոնային դիմումի հետ, ապա ստորագրում է դրա՝ տպված երկու օրինակները:

10. Սույն կարգի 9-րդ կետի համաձայն տպված դիմումը դիմումատուի կողմից ստորագրվելուց հետո հաշվի օպերատորը մասնակիցների ռեեստրը վարողի տեղեկատվական համակարգ է մուտքագրում սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն լրացված էլեկտրոնային դիմումը:

11. Սույն կարգի 9-րդ կետի համաձայն դիմումատուի կողմից ստորագրված դիմումներից մեկ օրինակը տրամադրվում է դիմումատուին, իսկ մյուսը՝ դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենի, իսկ դիմումը լիազորված անձի կողմից ներկայացնելու դեպքում՝ լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենի և նրա՝ լիազորված լինելու փաստը հավաստող՝ պատշաճ ձևով կազմված լիազորագրի պատճենի հետ ենթակա են արխիվացման հաշվի օպերատորի կողմից:

12. Մասնակիցների ռեեստրը վարողը մերժում է դիմումի ընդունումը, եթե դիմումը լրացվել է թերի կամ սխալ կամ հակասում է Օրենքին կամ այլ իրավական ակտերին:

ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Մասնակիցների ռեեստրը վարողը սույն կարգով սահմանված դիմումը ստանալուց հետո Օրենքով սահմանված ժամկետում կազմակերպում է Օրենքով նախատեսված չափով մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումն ու մարման արդյունքում ստացված միջոցների միանվագ վճարումը սույն կարգով սահմանված դիմումում նշված մասնակցի բանկային հաշվին:

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 160-Ն որոշմամբ

ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՏԱՐԱԾ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՉԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար	2. անուն	3. ազգանուն

4. ծննդյան ամսաթիվ	5. սեռ	6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ	7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար

8. քաղաքացիություն	9. կենսական շահերի կենտրոն	10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար	11. ՀՎՀՀ

Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ

12. ստացման եղանակ				13. լեզու							
	12.1. փոստով		12.2. էլեկտրոնային փոստով		13.1. հայերեն		13.2. ռուսերեն		13.3. անգլերեն		

Գ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ				
14. փոստային ինդեքս	15. երկիր	16. վարչատարածքային միավոր	17. համայնք (վարչական շրջան)	18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան
19. հեռախոսի համար		20. բջջային հեռախոսի համար		21. էլեկտրոնային փոստի հասցե
ԽՆԴՐՈՒՄ ԵՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԻՄ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՉԵՆՔ ԲԵՐՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԸ ՄԱՐԵԼ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ԻՄ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ: ՍՈՒՅՆ ԿԵՏԻ ԻՄԱՍՏՈՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԻ ՄԻՆՉԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:				
ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԵՄ, ՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԸ ՄԱՐՎԵԼՈՒ ԵՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ: ՄԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ Է ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱ ԳՆՈՎ: ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ Է ԳԱՆՁՎԵԼ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 2% ՄԱՐՄԱՆ ՎՃԱՐ: Մասնակցի/լիազորված անձի ստորագրություն _____				
Դ. ՄԱՍՆԱԿՑԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ				
22. բանկային հաշիվը		23. բանկի անվանումը		
24. ամսաթիվ	25. մասնակցի ստորագրություն	26. լիազորված անձի անուն, ազգանուն		27. լիազորված անձի ստորագրություն
էջը լրացնելիս օգտվեք դիմումի դարձերեսին տեղադրված ուղեցույցից				

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 160-Ն որոշմամբ

Մասնակցի կատարած կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և համապատասխան միջոցներն անկանխիկ եղանակով ստանալու դիմումի լրացման ուղեցույց

1. «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (սույն վանդակը լրացվելիս 2-21-րդ վանդակները լրացվում են ինքնաշխատ, եթե մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ հնարավորությունն ապահովված է),
2. «2. անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
3. «3. ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4. «4. ծննդյան ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ 01/01/1990,
5. «5. սեռ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի սեռը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ իգական՝ Ի, արական՝ Ա,
6. «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող վավեր փաստաթղթի տեսակը,
7. «7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի վավեր անձնագրի սերիան և համարը կամ անձը հաստատող այլ վավեր փաստաթղթի նույնականացման համարը, եթե «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում լրացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված անձնագրից բացի այլ փաստաթուղթ, կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի անձնագրի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի նույնականացման համարը,
8. «8. քաղաքացիություն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի քաղաքացիությունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, իսկ քաղաքացիության բացակայության դեպքում լրացվում է «քաղաքացիություն չունեցող անձ»,
9. «9. կենսական շահերի կենտրոն» վանդակում պարտադիր լրացվում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի կենսական շահերի կենտրոնը (կենսական շահերի կենտրոնն այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը,

որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը (բնակության վայրն այն վայրն է, որտեղ անձը մշտապես կամ առավելապես ապրում է), և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը),

10. «10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հաշվառման համարը,
11. «11. ՀՎՀՀ» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը,
12. «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-աձև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),
13. «13. լեզու» դաշտում ձախից V-աձև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվությունը ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն, ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունը ուղարկվում է հայերեն,
14. «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,
15. «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,
16. «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
17. «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
18. «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
19. «19. հեռախոսի համար» վանդակում պարտադիր լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
20. «20. բջջային հեռախոսի համար» վանդակում պարտադիր լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21. «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
22. «ԽՆԴՐՈՒՄ ԵՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԻՄ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՉԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԸ ՄԱՐԵԼ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ԻՄ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ: ՍՈՒՅՆ ԿԵՏԻ ԻՄԱՍՏՈՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԻ ՄԻՆՉԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԵՄ, ՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԸ ՄԱՐՎԵԼՈՒ ԵՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ: ՄԱՐՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ Է ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱ ԳՆՈՎ: ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ Է ԳԱՆՁՎԵԼ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 2 % ՄԱՐՄԱՆ ՎՃԱՐ: Մասնակցի/լիազորված անձի ստորագրություն_____» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի կամ իր լիազորված անձի ստորագրությունը:
23. «22. բանկային հաշիվը» վանդակում պարտադիր լրացվում է ՀՀ տարածքում գործող բանկում գտնվող մասնակցի բանկային հաշիվը, որին մասնակիցը ցանկանում է, որ մասնակիցների ռեեստրը վարողը փոխանցի մասնակցի կատարած կուտակային վճարների հաշվին մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելու արդյունքում ձևավորված միջոցները միանվագ վճարի ձևով,
24. «23. բանկի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ գտնվում է «22. բանկային հաշիվը համարը» վանդակում նշված բանկային հաշիվը,
25. «24. ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը, (օր/ամիս/տարի ֆորմատով), մասնավորապես՝ 01/01/2014,
26. «25. մասնակցի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին մասնակցի կողմից, իսկ եթե դիմումը ներկայացվել է մասնակցի լիազորված անձի կողմից, ապա վանդակը չի լրացվում,
27. «26. լիազորված անձի անուն, ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի լիազորված անձի անունը և ազգանունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին լիազորված անձի կողմից,
28. «27. լիազորված անձի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի լիազորված անձի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին վերջինիս կողմից:

«Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների քանակական և արժութային սահմանափակումները» կանոնակարգ 10/30-ը՝ հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների արդյունավետ տարատեսականացումը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների քանակական և արժութային սահմանափակումները» կանոնակարգ 10/30-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին գործող կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները պարտավոր են սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 3 ամսվա ընթացքում իրենց կողմից կառավարվող կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կանոնները համապատասխանեցնել սույն որոշման պահանջներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 161-Ն

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 161-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/30

ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն ստորև բերված նշանակությունը.

1) ***արտասահմանյան պետություն***՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կամ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) անդամ պետություն.

2) ***օտարերկրյա բանկ***՝ ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից լիցենզավորված և վերահսկվող ֆինանսական կազմակերպություն.

3) ***օտարերկրյա թողարկող***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետով նախատեսված արժեթղթի թողարկող:

2. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունները:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

3. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող՝ բոլոր տեսակի արտարժույթով արտահայտված ներդրումների չափը չպետք է գերազանցի տվյալ ֆոնդի ակտիվների 50 տոկոսը:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.2014 թ. (ՀՀՊՏ N 20 (499)[1], 20.08.2014):

4. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին ոչ փոխարկելի արտարժույթով կատարվող ներդրումների չափը չպետք է գերազանցի տվյալ ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 3 տոկոսը:

ԳԼՈՒԽ 3. ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

5. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 75 տոկոսից ավելին չի կարող ներդրվել բաժնային արժեթղթերում:

6. Բանկային հաշիվներում և ավանդներում (այդ թվում՝ բանկում միջոցների ավանդադրումը հավաստող արժեթղթերում) (այսուհետ՝ բանկային ավանդ) կատարվող ներդրումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 50 տոկոսը:

7. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսից ավելին չի կարող ներդրվել որպես բանկային ավանդ մեկ բանկում («Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն փոխկապակցված ճանաչված բանկերում):

8. Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 60 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկման մեջ (տրանշում) ներդրումների չափը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:

9. Արտասահմանյան պետությունների կամ այդ պետությունների կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 40 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկման մեջ (տրանշում) ներդրումների չափը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:

10. Սույն կանոնակարգի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված արժեթղթերում ներդրումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 80 տոկոսը:

11. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 30 տոկոսից ավելին չի կարող ներդրվել Հայաստանի Հանրապետության համայնքների, արտասահմանյան պետության տեղական կառավարման մարմնի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում:

12. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսից ավելին չի կարող ներդրվել «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արժեթղթավորման հիմնադրամների թողարկած արժեթղթերում:

13. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսից ավելին չի կարող ներդրվել մեկ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերում, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով:

14. Փոխկապակցված թողարկողների արժեթղթերում ներդրումների չափը չի կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 15 տոկոսը:

15. Մեկ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերում ներդրումներ կարող են կատարվել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի մինչև 25 տոկոսի չափով, եթե թողարկողը միջազգային ֆինանսական կազմակերպություն է:

16. Մեկ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերում ներդրումներ կարող են կատարվել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի մինչև 25 տոկոսի չափով, եթե դրանք ապահովված պարտատոմսեր են: Ապահովված պարտատոմսեր են համարվում՝

1) բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն թողարկված ապահովված հիփոթեքային պարտատոմսերը.
2) օտարերկրյա բանկերի թողարկած պարտքային արժեթղթերը, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցները ներդրվում են այնպիսի ակտիվներում, որոնք՝
   ա. այդ պարտքային արժեթղթերի վավերականության ամբողջ ժամանակահատվածի համար բավարար ապահովություն (ծածկույթ) են դրանց գծով ամրագրված պարտավորությունների կատարման համար, և
   բ. թողարկող բանկի անվճարունակության կամ սնանկության դեպքում առաջնահերթորեն օգտագործվում են այդ պարտքային արժեթղթերի գծով դրանց սեփականատերերի հանդեպ պարտավորությունների կատարման (արժեթղթի մայր գումարի (անվանական արժեքի) և հաշվեգրված տոկոսների փոխհատուցման) համար:

17. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել

1) մեկ թողարկողի ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 10 և ավելի տոկոսում, և (կամ)
2) մեկ թողարկողի ձայնի իրավունք չտվող բաժնային արժեթղթերի ավելի քան 10 տոկոսում, և (կամ)
3) մեկ թողարկողի թողարկած պարտքային արժեթղթերի ավելի քան 60 տոկոսում, և (կամ)
4) այլ ֆոնդի փայերի կամ բաժնետոմսերի ավելի քան 25 տոկոսում:

18. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 50 տոկոսից ավելին չի կարող ներդրվել ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում: Ընդ որում, ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում ներդրումների չափը չի կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 5 տոկոսը, եթե դրանք՝

1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆոնդերի դեպքում բաց, հրապարակային, ստանդարտ, տարատեսականացված ներդրումային ֆոնդեր չեն,
2) արտասահմանյան պետությունում գրանցված ֆոնդերի դեպքում՝ բաց և հրապարակային ներդրումային ֆոնդեր չեն, որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն ներդրումային ֆոնդի ակտիվների առնվազն 90 տոկոսը պետք է ներդրվի միայն բանկային ավանդներում, պետական պարտատոմսերում, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ թույլատրվող արժեթղթերում կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ իրացվելի ակտիվներում:

19. Մեկ ներդրումային ֆոնդի (մեկ կառավարչի կամ փոխկապակցված կառավարիչների կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերի) փայերում (բաժնետոմսերում) ներդրումների չափը չի կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 25 տոկոսը:

20. Մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 25 տոկոսը, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆոնդի ակտիվներում ընդգրկված ներդրումային գործիքների դեպքում հնարավոր չէ հստակ որոշել որևէ կոնկրետ պետության մասնակցության աստիճանը:

21. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (բացառությամբ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:

22. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (այդ թվում՝ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 30 տոկոսը:

23. Ածանցյալ գործիքներում ներդրումներն իրականացվում են միայն հեջավորման նպատակով, երբ տվյալ կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները ներառում են այդ ածանցյալի հիմքում առկա հիմնական արժեթուղթը, կամ տվյալ ֆոնդին բնորոշ է հեջավորվող ռիսկը: Մեկ անձի հետ ածանցյալ գործիքով կնքված գործարքի չափը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսը, եթե գործարքի կողմը բանկ է, և չի կարող գերազանցել 5 տոկոսը, եթե գործարքի կողմն այլ ֆինանսական կազմակերպություն է: Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված բոլոր ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի տվյալ ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքը:

24. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա բանկում, որն ունի առնվազն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Baa» խմբի՝ «Baa3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-» վարկանիշ:

25. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա թողարկողների պարտքային արժեթղթերում, որոնք (երաշխավորված արժեթղթերի դեպքում՝ երաշխավորողը) ունեն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Baa» խմբի՝ «Baa3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-» կամ ավելի բարձր վարկանիշ:

26. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ներդրումային սահմանափակումների հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքը:

27. Սույն կանոնակարգի 5-23-րդ կետերով նախատեսված ներդրումային սահմանափակումները տարածվում են կամավոր կենսաթոշակային ֆոնդի վրա տվյալ ֆոնդին առաջին կամավոր կենսաթոշակային վճարը կատարելու օրվանից 6 ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 104-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ը հաստատելու մասին» թիվ 301-Ն որոշման նախաբանից հանել ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը,» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 162-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 309-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի կազմն ու առավելագույն չափը» կանոնակարգ 10/12-ը հաստատելու մասին» թիվ 309-Ն որոշման նախաբանում «45» թիվը փոխարինել «40» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 163-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 313-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 14-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի ««Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի ուղղությունները և այդ ծախսերի ու կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների առավելագույն չափերը» կանոնակարգ 10/25-ը հաստատելու մասին» թիվ 313-Ն որոշման նախաբանում «68» թիվը փոխարինել «64» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 165-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 9-ի թիվ 184-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 7-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 9-ի «Կամավոր կուտակային կենսաթոշակային ավանդի պայմանագրին ներկայացվող պարտադիր պահանջները սահմանելու մասին» թիվ 184-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «67-րդ հոդվածի 4-րդ մասը» բառերը փոխարինել «63-րդ հոդվածի 7-րդ մասը» բառերով:

2. Որոշման 1-ին կետի 19-րդ ենթակետում «կուտակային վճարների» բառերը փոխարինել «կամավոր կենսաթոշակային վճարների» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 166-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 317-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Ապահովագրական ընկերությունից պարտադիր աուդիտետի ժառանգման կարգը և աուդիտետի ժառանգման դիմումի ձևը հաստատելու մասին» թիվ 317-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «56-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 61-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը» բառերը փոխարինել «57-րդ հոդվածի 5-րդ մասը» բառերով:

2. Որոշման հավելվածի 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերում «մասով» բառը փոխարինել «կետով» բառով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 167-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 318-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասը և 62-րդ հոդվածի 6-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Կուտակային կենսաթոշակային աուդիտետի պայմանագրում ներառվող էական պայմանների մասին» թիվ 318-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «57-րդ հոդվածի 6-րդ կետը, 66-րդ հոդվածի 5-րդ կետը» բառերը փոխարինել «52-րդ հոդվածի 5-րդ մասը, 62-րդ հոդվածի 6-րդ մասը» բառերով:

2. Որոշման հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետում «՝ պահպանելով սույն կարգի 11-րդ և 13-րդ կետերով նախատեսված պայմանները» բառերը փոխարինել «, պայմանով, որ դրանք չեն կարող վատթարացնել կուտակային կենսաթոշակային աուդիտետի պայմանները» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 168-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 319-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Աուդիտետի մնացորդային գումարի հաշվարկման և այլ ապահովագրական ընկերության փոխանցման կարգի մասին» թիվ 319-Ն որոշման նախաբանում «58» թիվը փոխարինել «53» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 169-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 320-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Կուտակային կենսաթոշակային ավանդի գումարը այլ բանկում բացված կուտակային կենսաթոշակային ավանդային հաշվին փոխանցելու համար բանկի կողմից գանձվող վճարի առավելագույն չափը սահմանելու մասին» թիվ 320-Ն որոշման նախաբանում «67-րդ հոդվածի 1.1-րդ մասը» բառերը փոխարինել «63-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 170-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 333-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության ընդհանուր կանոնները սահմանելու մասին» թիվ 333-Ն որոշման նախաբանում «87-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերը փոխարինել «81-րդ հոդվածի 9-րդ մասի» բառերով, իսկ «9» թիվը փոխարինել «8» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 171-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած մասնակիցների՝ ֆոնդերի կառավարիչների միջև բաշխման կարգը սահմանելու մասին» թիվ 310-Ն որոշման նախաբանում «39» թիվը փոխարինել «34» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 172-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 172-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի, դրանց ընդհանուր հաշվարկային արժեքի, ինչպես նաև մասնակցի միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարի մասին տեղեկանքի ձևը հաստատելու մասին» թիվ 172-Ն որոշման նախաբանում «54» թիվը փոխարինել «49» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 173-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 315-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Պարտադիր կամ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման փոխանցման նպատակով կառավարչի ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 315-Ն որոշման նախաբանում «32» թիվը փոխարինել «27» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 174-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 328-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ներդրումային ֆոնդերի կառավարիչների ինքնալուծարման (լուծարման) ընթացակարգը կարգավորող կանոնակարգը համապատասխանեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, 80-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը, 82-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 83-րդ հոդվածի 5-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի «դ» ենթակետը, 33-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ը հաստատելու մասին» թիվ 328-Ն որոշման նախաբանի երկրորդ պարբերությունում ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերը փոխարինել ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 175-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի ««Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ը հաստատելու մասին» թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժե-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

քի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 9-րդ կետում «ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման» բառերը փոխարինել «կառավարչի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու» բառերով,

2) Կանոնակարգի 17-րդ կետը «պարտքային արժեթղթի» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն Կանոնակարգի 17.1 կետով նախատեսված դեպքի,» բառերով,

3) Կանոնակարգը 17-րդ կետից հետո լրացնել 17.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«17.1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված՝ Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված պետական արժեթղթերը գնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հիման վրա:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 176-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մայիսի 5-ի թիվ 135-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հնարավորություն տալ երաշխիքային ֆոնդի կառավարչին կանխատեսելու հնարավոր հատուցման դեպք ի հայտ գալու հավանականությունը և նվազեցնելու իրացվելիության ռիսկի բացասական հետևանքները,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից երաշխիքային ֆոնդը կառավարող անձին հաշվետվությունների տրամադրման կարգը և պայմանները» կանոնակարգ 10/15-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 177-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 177-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/15

«ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԱՆՁԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է.
1) մասնակիցների ռեեստրը վարողի կողմից երաշխիքային ֆոնդը կառավարող անձին հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) տրամադրման կարգը և պայմանները,
2) հաշվետվության ներկայացման ժամկետի խախտման դեպքում երաշխիքային ֆոնդի կառավարչի կողմից այդ մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տեղեկացման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
1) ***Երաշխիքային ֆոնդը կառավարող անձ***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված երաշխիքային ֆոնդը կառավարող անձ,
2) ***Օրենք***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն Օրենքով կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Հաշվետվությունը (համաձայն Հավելված 1-ի) մասնակիցների ռեեստրը վարողը տրամադրում է երաշխիքային ֆոնդը կառավարող անձին Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով *էքսել* ֆորմատով՝ ֆոնդը կառավարող անձի կողմից նախօրոք ռեեստրը վարողին տրված հասցեով, իսկ այդ համակարգի խափանման դեպքում՝ մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

5. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո տրամադրվող, սույն կանոնակարգով սահմանված ճշգրտված հաշվետվությունը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 4-րդ կետի համաձայն: Ընդ որում, միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մի քանի ճշգրտված հաշվետվության ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին ճշգրտված հաշվետվությունը:

6. Եթե ներկայացվող հաշվետվությունը հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չի կրել, ապա անհրաժեշտ է ներկայացնել գրություն:

7. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ այլ տեխնիկական թերություն:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԱՆՁԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8. Մասնակիցների ռեեստրը վարողը յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ), երաշխիքային ֆոնդը կառավարող անձին է տրամադրում հաշվետվություն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված մասնակիցների կողմից կատարված սոցիալական վճարների և կենսաթոշակային հաշվում առկա միջոցների վերաբերյալ:

9. Սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված հաշվետվության համար որպես հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետվությունը երաշխիքային ֆոնդը կառավարող անձին ներկայացման ամսվա 1-ին օրվանից 1 տարի կտրվածքով ընկած ժամանակաշրջանը: Հաշվետվության մեջ լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 61 և ավելի տարեկանը լրացող՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված այն մասնակիցների (բացառությամբ արդեն կենսաթոշակ ստացող կամ ստացած մասնակիցների, այն մահացած մասնակիցների, որոնց համար մասնակիցների ռեեստրը վարողը շարունակում է վարել կենսաթոշակային հաշիվները մինչև փայերի ժառանգումը կամ ժառանգման ժամկետի ավարտը, և այն անձանց, որոնք իրենց պարտադիր կենսաթոշակային հաշվում առկա միջոցները ստացել են նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը) վերաբերյալ տվյալները, որոնց պարտադիր

կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի հաշվարկային արժեքների հանրագումարը՝ հաշվետու օրվա դրությամբ փոքր է տվյալ մասնակցի կատարած սոցիալական վճարների ամբողջ գումարի (ճշգրտված տարեկան գնաճով) 120%-ից:

10. Հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանին նախորդող օրվա ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով:
2) ***«Մասնակցի տարիքը»*** սյունակի «տարի» ենթասյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 61 և ավելի տարեկանը լրացող մասնակիցների տարիքը՝ ըստ յուրաքանչյուր տարիքի (61 տարեկան, 62 տարեկան, 63 տարեկան և այլն), իսկ «ամիսը» ենթասյունակում լրացվում է ամսվա թիվը, որի ընթացքում լրանում է մասնակցի համապատասխան տարիքը (հունվար ամսվա համար նշվում է 1, փետրվար ամսվա համար՝ 2, մարտ ամսվա համար՝ 3 և այլն): Ընդ որում, մասնակիցների տարիքները լրացվում են ըստ մասնակիցների տարիքները լրանալու հերթականության և աճման կարգի:
3) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է «Մասնակցի տարիքը» սյունակում նշված յուրաքանչյուր տարիքին համապատասխանող մասնակիցների քանակը (օրինակ, մասնակիցների քանակը, որոնց 61 տարեկանը լրանում է հունվար ամսին կամ մասնակիցների քանակը, որոնց 63 տարեկանը լրանում է փետրվար ամսին և այլն):
4) ***«Սոցիալական վճարների համախառն մեծությունը»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա դրությամբ մասնակիցների կողմից կատարված սոցիալական վճարների ընդհանուր գումարը՝ ըստ «Մասնակցի տարիքը» սյունակում նշված յուրաքանչյուր տարիքի:
5) ***«Սոցիալական վճարների համախառն մեծությունը (ճշգրտված տարեկան գնաճով)»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա դրությամբ մասնակիցների կողմից կատարված սոցիալական վճարների ընդհանուր գումարը՝ ճշգրտված տարեկան գնաճով՝ ըստ «Մասնակցի տարիքը» սյունակում նշված յուրաքանչյուր տարիքի:
6) ***«Կենսաթոշակային հաշվում առկա միջոցների համախառն մեծությունը»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա դրությամբ մասնակցի պարտադիր կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի հաշվարկային արժեքների հանրագումարը:

11. Հաշվետվությունը սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ ռեեստրը վարողի կողմից երաշխիքային ֆոնդը կառավարող անձին ներկայացնելու դեպքում երաշխիքային ֆոնդը կառավարող անձը հաշվետվության ներկայացման վերջնաժամկետին հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին Սի-Բի-էյ-ևեթ համակարգի միջոցով, մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով գրություն է ներկայացնում Կենտրոնական բանկ: Սույն կետը չի գործում, եթե երաշխիքային ֆոնդը կառավարող անձը Կենտրոնական բանկն է:

Հավելված 1

«Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից երաշխիքային ֆոնդը կառավարող անձին հաշվետվությունների տրամադրման կարգը և պայմանները» կանոնակարգ 10/15-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Հաշվետու օր _____

Մասնակցի տարիքը		Քանակը	Սոցիալական վճարների համախառն մեծությունը	Սոցիալական վճարների համախառն մեծությունը (ճշգրտված տարեկան գնաճով)	Կենսաթոշակային հաշվում առկա միջոցների համախառն մեծությունը	Սոցիալական վճարների (ճշգրտված տարեկան գնաճով) և կուտակային հաշվում առկա միջոցների տարբերությունը (5-6)
տարի	ամիս					
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
Կենսաթոշակային հաշվում առկա միջոցներ ≤Կատարած սոցիալական վճարների (ճշգրտված տարեկան գնաճով) 100%						
Կատարած սոցիալական վճարների (ճշգրտված տարեկան գնաճով) 100% < Կենսաթոշակային հաշվում առկա միջոցներ ≤Կատարած սոցիալական վճարների (ճշգրտված տարեկան գնաճով) 110%						
Կատարած սոցիալական վճարների (ճշգրտված տարեկան գնաճով) 110%< Կենսաթոշակային հաշվում առկա միջոցներ ≤Կատարած սոցիալական վճարների (ճշգրտված տարեկան գնաճով) 120%						

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 326-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով Երաշխիքային ֆոնդը կառավարող անձին կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկատվության տրամադրման գործընթացը կարգավորող կանոնակարգը համապատասխանեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Երաշխիքային ֆոնդը կառավարող անձին կենսաթոշակային գաղտնիքի տրամադրման կարգը» կանոնակարգ 10/21-ը հաստատելու մասին» թիվ 326-Ն որոշմամբ հաստատված «Երաշխիքային ֆոնդը կառավարող անձին կենսաթոշակային գաղտնիքի տրամադրման կարգը» կանոնակարգ 10/21-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի որոշման նախաբանի առաջին պարբերությունում «վճարների» բառը փոխարինել «հատկացումների» բառով,

2) Կանոնակարգի որոշման նախաբանի երկրորդ պարբերությունում «21.1-րդ հոդվածի 1-ին մասը» բառերը փոխարինել «23-րդ հոդվածի 1-ին մասը» բառերով,

3) Կանոնակարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում «երաշխիքային ֆոնդի կառավարիչ» բառերը փոխարինել «երաշխիքային ֆոնդը կառավարող անձ» բառերով,

4) Կանոնակարգի 4-րդ կետում «վճարների» բառը փոխարինել «հատկացումների» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 178-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 325-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման գործընթացը կարգավորող կանոնակարգը համապատասխանեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասը, 47-րդ հոդվածի 6-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի ««Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ը հաստատելու մասին» թիվ 325-Ն որոշմամբ հաստատված «Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի որոշման նախաբանի առաջին պարբերությունում «վճարների» բառը փոխարինել «հատկացումների» բառով,

2) Կանոնակարգի որոշման նախաբանի երկրորդ պարբերությունում «18-րդ հոդվածի 5.1-րդ մասը, 52-րդ հոդվածի 6-րդ մասը» բառերը փոխարինել «19-րդ հոդվածի 6-րդ մասը, 47-րդ հոդվածի 6-րդ մասը» բառերով,

3) Կանոնակարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում «երաշխիքային ֆոնդի կառավարիչ» բառերը փոխարինել «երաշխիքային ֆոնդը կառավարող անձ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 179-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ներդրումային ֆոնդերի կառավարիչների նորմատիվները կարգավորող կանոնակարգը համապատասխանեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերը և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 26-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերը, 37-րդ հոդվածի 3-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ը հաստատելու մասին թիվ 119-Ն որոշման նախաբանի առաջին պարբերությունում «30-րդ հոդվածը ու 42-րդ հոդվածի 3-րդ մասը» բառերը փոխարինել «26-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերը ու 37-րդ հոդվածի 3-րդ մասը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 180-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով համապատասխանեցնել կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների վերաբերյալ իրավական ակտը «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններին,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի «Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, Որոշման նախաբանում և Որոշմամբ հաստատված «Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ի (այսուհետև՝ Կանոնակարգ) վերնագրում «Պարտադիր կուտակային կենսաթոշակային» բառերը փոխարինել «կուտակային» բառով,

2) Որոշման նախաբանի առաջին պարբերությունում «կենսաթոշակային համակարգի» բառերը փոխարինել «բաղադրիչի» բառով, և «պարտադիր կուտակային կենսաթոշակային» բառերը փոխարինել «կուտակային» բառով,

3) Որոշման նախաբանի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նպատակ ունենալով բացահայտել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցությունը, ինչպես նաև հրապարակել վերլուծություններ կուտակային բաղադրիչում նշանակալի զարգացումների մասին և դրանով իսկ ապահովել կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների և հանրության վստահությունը կուտակային բաղադրիչի թափանցիկության նկատմամբ և»,

4) Կանոնակարգի 1-ին կետում «պարտադիր» բառը հանել,

5) Կանոնակարգի 6-րդ կետի 7-րդ ենթակետում «կուտակային վճար» բառերը փոխարինել «փայերի ձեռքբերման վճար» բառերով,

6) Կանոնակարգի 6-րդ կետի 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերում, 27-րդ կետում, 29-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում, 35-րդ կետի 1-ին ենթակետում, 43-րդ կետում, 44-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերում, 46-րդ կետում, 46-րդ կետի 1-ին ենթակետում «կուտակային վճար» բառերը իրենց բոլոր հոլովաձևերով փոխարինել «կուտակային հատկացում» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

7) Կանոնակարգի 7-րդ կետի 7-րդ ենթակետում հանել «, միջոցների փոխանցում քաղաքացիությունից հրաժարվողներին» բառերը,

8) Կանոնակարգի 30-րդ կետում՝

ա. 3-րդ ենթակետում «61-րդ հոդվածի 5-րդ մասի» բառերը փոխարինել «58-րդ հոդվածի 4-րդ մասի» բառերով,

բ. 5-րդ և 6-րդ ենթակետերում «մինչև օրենքով սահմանված ժամկետում ժառանգությունը ստանալը կամ ժառանգության ժամկետի ավարտը» բառերը փոխարինել «մինչև այդ փայերն Օրենքով սահմանված կարգով ժառանգի կենսաթոշակային հաշվին փոխանցելը կամ Օրենքով սահմանված կարգով մարելը» բառերով,

9) Կանոնակարգի 35-րդ կետում՝

ա. 5-րդ ենթակետում «52-րդ» բառը փոխարինել «47-րդ» բառով,

բ. 8-րդ ենթակետում «պարտադիր կուտակային կենսաթոշակային» բառերը փոխարինել «կուտակային» բառով,

10) Կանոնակարգի 36-րդ կետի 4-րդ ենթակետում և 42-րդ կետի 4-րդ ենթակետում «60-րդ հոդվածի 1-ին մասով, 60.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 61-րդ» բառերը փոխարինել «49-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 56-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով, ինչպես նաև 57-րդ» բառերով,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

10) (11)* Կանոնակարգի 10-րդ գլխի վերնագրում հանել «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ» բառը,

11) (12) Կանոնակարգի 40-րդ կետում հանել «կուտակային» բառը,

12) (13) Կանոնակարգի Հավելված 1-ի Աղյուսակ 1-ի վերնագրում և աղյուսակում «կուտակային վճար» բառերը իրենց բոլոր հոլովաձևերով փոխարինել «կուտակային հատկացում» բառերով համապատասխան հոլովաձևերով,

13) (14) Կանոնակարգի Հավելված 2-ի աղյուսակ 2-ում «վճարներով» բառը փոխարինել «հատկացումներով» բառով,

14) (15) Կանոնակարգի Հավելված 2-ի աղյուսակ 3-ում հանել «4.5. ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու հիմքով» տողը,

15) (16) Կանոնակարգի Հավելված 4-ի աղյուսակ 2-ում հանել «ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու հիմքով» սյունակը,

16) (17) Կանոնակարգի Հավելված 5-ի աղյուսակ 1-ում «կուտակային վճար» բառերն իրենց բոլոր հոլովաձևերով փոխարինել «կուտակային հատկացում» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 181-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին***

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 33-րդ հոդվածի 1-ին մասը, 35-րդ հոդվածի 3-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. հունիսի 21-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին» թիվ 171-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին»:

2. Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոց-

---

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

ներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):»:

3. Որոշմամբ հաստատված Կանոնակարգ 10/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին»:

2) Կանոնակարգի Հավելված 11-ը և Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի (կցվում են):

3) Կանոնակարգը լրացնել Հավելված 15-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի:

4) Կանոնակարգը լրացնել Հավելված 16-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 182-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 182-Ն որոշմամբ

Հավելված 11

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 10/07-ի

ՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ											
Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ											
1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար									2. անուն		3. ազգանուն
4. ծննդյան ամսաթիվ		5. սեռ		6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ				7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար			
8. քաղաքացիություն		9. կենսական շահերի կենտրոն				10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար					11. ՀՎՀՀ
Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ											
12. ստացման եղանակ							13. լեզու				
	12.1. փոստով		12.2. էլեկտրոնային փոստով					13.1. հայերեն		13.2. ռուսերեն	13.3. անգլերեն
Գ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ											
14. փոստային ինդեքս		15. երկիր		16. վարչատարածքային միավոր			17. համայնք (վարչական շրջան)			18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան	
19. հեռախոսի համար							20. բջջային հեռախոսի համար			21. էլեկտրոնային փոստի հասցե	
Դ. ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐ											
22. միանվագ վճար կատարելու հիմքը											
	22.1. ՀՀ-ից հեռացող օտարերկրացի										
23. դիմումին կից ներկայացվող փաստաթղթի անվանումը						24. ում կողմից է տրված			25. փաստաթղթի համարը		26. տրման ամսաթիվը
27. ստացողի անվանումը			28. բանկային հաշվի համարը			29. բանկի անվանումը			30. բանկի SWIFT/BIC կոդը		31. արտարժույթ
ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐՆ ԻՐ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՉԻ ԳՈՎԱԶԴՈՒՄ ՈՐԵՎԷ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՉԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ԿԵՐՊ ՉԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ: *ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ԸՆՏՐԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:* *ՍՈՒՅՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՒՄ Է ՎՃԱՐ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ:*											
32. ամսաթիվ		33. մասնակցի ստորագրություն			34. լիազորված անձի անուն, ազգանուն				35. լիազորված անձի ստորագրություն		
էջը լրացնելիս օգտվեք դիմումի դարձերեսին տեղադրված ուղեցույցից											

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 182-Ն որոշմամբ

Հավելված 12
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված Կանոնակարգ 10/07-ի

Մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու դիմումի լրացման ուղեցույց

1. «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (սույն վանդակը լրացվելիս 2-21-րդ վանդակները լրացվում են ինքնաշխատ, եթե մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ հնարավորությունն ապահովված է),
2. «2. անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
3. «3. ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4. «4. ծննդյան ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ 01/01/1990,
5. «5. սեռ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի սեռը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ իգական՝ Ի, արական՝ Ա,
6. «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում պարտադիր լրացվում է ՀՀ կառավարության 1999 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող վավեր փաստաթղթի տեսակը,
7. «7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի վավեր անձնագրի սերիան և համարը կամ անձը հաստատող այլ վավեր փաստաթղթի նույնականացման համարը, եթե «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում լրացվել է ՀՀ կառավարության 1999 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված անձնագրից բացի այլ փաստաթուղթ, կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի անձնագրի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի նույնականացման համարը,
8. «8. քաղաքացիություն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի քաղաքացիությունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, իսկ քաղաքացիության բացակայության դեպքում լրացվում է «քաղաքացիություն չունեցող անձ»,
9. «9. կենսական շահերի կենտրոն» վանդակում պարտադիր լրացվում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի կենսական շահերի կենտրոնը (կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը (բնակության վայրն այն վայրն է, որտեղ անձը մշտապես կամ առավելապես ապրում է), և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը),
10. «10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հաշվառման համարը,
11. «11. ՀՎՀՀ» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը,
12. «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-ածև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),
13. «13. լեզու» դաշտում ձախից V-ածև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն, ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունն ուղարկվում է հայերեն,
14. «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,

15. «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,
16. «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
17. «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
18. «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
19. «19. հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
20. «20. բջջային հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21. «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
22. «22. միանվագ վճար կատարելու հիմքը» դաշտում ձախից պարտադիր V-աձև նշումով ընտրություն պետք է կատարվի «22.1. ՀՀ-ից հեռացող օտարերկրացի» վանդակում,
23. «23. դիմումին կից ներկայացվող փաստաթղթի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի անվանումը,
24. «24. ում կողմից է տրված» վանդակում պարտադիր լրացվում է ՀՀ կառավարության պետական լիազորված մարմնի անվանումը, ում կողմից տրվել է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթուղթը,
25. «25. փաստաթղթի համարը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի նույնականացման համարը,
26. «26. տրման ամսաթիվը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի տրման ամսաթիվը,
27. «27. ստացողի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի օտարերկրյա պետությունում ընտրված համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կամ ապահովագրական ընկերության կամ համապատասխան այլ ֆինանսական կազմակերպության անվանումը,
28. «28. բանկային հաշվի համարը» վանդակում պարտադիր լրացվում է «27. ստացողի անվանումը» վանդակում նշված կենսաթոշակային ֆոնդի կամ ապահովագրական ընկերության կամ համապատասխան այլ ֆինանսական կազմակերպության այն բանկային հաշվի համարը, որին մասնակիցների ռեեստրը վարողը պետք է փոխանցի մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարման արդյունքում ստացված միջոցները, միանվագ վճարի ձևով,
29. «29. բանկի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ գտնվում է «28. բանկային հաշվի համարը» վանդակում նշված բանկային հաշվի համարը,
30. «30. բանկի SWIFT/BIC կոդը» վանդակում պարտադիր լրացվում է «29. բանկի անվանումը» վանդակում նշված բանկի SWIFT/BIC (Սվիֆտ/ԲիԱյՍի) կոդը,
31. «31. արտարժույթ» վանդակում պարտադիր լրացվում է այն ազատ փոխարկելի արտարժույթի ISO (ԻՍՕ) կոդը, որով մասնակիցը ցանկանում է, որ մասնակիցների ռեեստրը վարողը փոխանցի իր կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարման արդյունքում ստացված դրամական միջոցները, միանվագ վճարի ձևով «28. բանկային հաշվի համարը» վանդակում նշված բանկային հաշվի համարին,
32. «32. ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը, (օր/ամիս/տարի ֆորմատով), մասնավորապես՝ 01/01/2014,
33. «33. մասնակցի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին մասնակցի կողմից, իսկ եթե դիմումը ներկայացվել է մասնակցի լիազորված անձի կողմից, ապա վանդակը չի լրացվում,
34. «34. լիազորված անձի անուն, ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի լիազորված անձի անունը և ազգանունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին լիազորված անձի կողմից,
35. «35. լիազորված անձի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի լիազորված անձի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին վերջինիս կողմից:

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 182-Ն որոշմամբ

Հավելված 15
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված Կանոնակարգ 10/07-ի

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ/ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ				
Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ				
1. հաճրային ծառայությունների համարանիշ կամ հաճրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար			2. անուն	3. ազգանուն
4. ծննդյան ամսաթիվ	5. սեռ	6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ	7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար	
8. քաղաքացիություն	9. կենսական շահերի կենտրոն	10. անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման (հաշվառման) համար		11. ՀՎՀՀ
Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ				
12. ստացման եղանակ		13. լեզու		
12.1. փոստով	12.2. էլեկտրոնային փոստով	13.1. հայերեն	13.2. ռուսերեն	13.3. անգլերեն
Գ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ				
14. փոստային ինդեքս	15. երկիր	16. վարչատարածքային միավոր	17. համայնք (վարչական շրջան)	18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան
19. հեռախոսի համար		20. բջջային հեռախոսի համար		21. էլեկտրոնային փոստի հասցե
Դ. ՄԱՍՆԱԿՑԻ ՈՐՈՇՈՒՄԸ				
22. մասնակցի որոշումը պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու վերաբերյալ				
22.1. հրաժարվել սեփականությունից		22.2. ընդունել սեփականությունը		
ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԵՄ, ՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԻՆՁ ՉԻ ԱԶԱՏՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ:				
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԱԾ ԱՆՁԸ ՄԻԱՅՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԿԱՐՈՂ Է ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼ ԻՐ ԱՆՈՒՆՈՎ ԲԱՑՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:				
23. ամսաթիվ	24. մասնակցի ստորագրություն	25. լիազորված անձի անուն, ազգանուն		26. լիազորված անձի ստորագրություն
էջը լրացնելիս օգտվեք դիմումի դարձերեսին տեղադրված ուղեցույցից				

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 182-Ն որոշմամբ

Հավելված 16
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված Կանոնակարգ 10/07-ի

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումի լրացման ուղեցույց

1. «1. հաճրային ծառայությունների համարանիշ կամ հաճրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հաճրային ծառայությունների համարանիշը, իսկ հաճրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հաճրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (սույն վանդակը լրացվելիս 2-21-րդ վանդակները լրացվում են ինքնաշխատ, եթե մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ հնարավորությունն ապահովված է),

2. «2. անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
3. «3. ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4. «4. ծննդյան ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ 01/01/1990,
5. «5. սեռ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի սեռը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ իգական՝ Ի, արական՝ Ա,
6. «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող վավեր փաստաթղթի տեսակը,
7. «7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի վավեր անձնագրի սերիան և համարը կամ անձը հաստատող այլ վավեր փաստաթղթի նույնականացման համարը, եթե «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում լրացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված անձնագրից բացի այլ փաստաթուղթ, կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի անձնագրի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի նույնականացման համարը,
8. «8. քաղաքացիություն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի քաղաքացիությունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, իսկ քաղաքացիության բացակայության դեպքում լրացվում է «քաղաքացիություն չունեցող անձ»,
9. «9. կենսական շահերի կենտրոն» վանդակում պարտադիր լրացվում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի կենսական շահերի կենտրոնը (կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը (բնակության վայրն այն վայրն է, որտեղ անձը մշտապես կամ առավելապես ապրում է), և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը),
10. «10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հաշվառման համարը,
11. «11. ՀՎՀՀ» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը,
12. «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-ածև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),
13. «13. լեզու» դաշտում ձախից V-ածև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն, ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունը ուղարկվում է հայերեն,
14. «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,
15. «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,
16. «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
17. «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
18. «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
19. «19. հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
20. «20. բջջային հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21. «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
22. «22. մասնակցի որոշումը պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականության վերաբերյալ» դաշտում ձախից V-ածև նշումով ընտրություն է կատարվում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու կամ ընդունելու օգտին: Ընդ որում «22.1. հրաժարվել սեփականությունից» վանդակում նշում է կատարվում այն դեպքում, երբ մասնակիցը ցանկանում է հրաժարվել ֆոնդի փայերի սեփականությունից, իսկ «22.2. ընդունել սեփականությունը» վանդակում նշում է կատարվում այն դեպքում, եթե մասնակիցը նախկինում հրաժարվել է ֆոնդի փայերի սեփականությունից և այժմ ցանկանում է ընդունել ֆոնդի փայերի սեփականությունը:

23. «23. ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), մասնավորապես՝ 01/01/2014,
24. «24. մասնակցի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին մասնակցի կողմից, իսկ եթե դիմումը ներկայացվել է մասնակցի լիազորված անձի կողմից, ապա վանդակը չի լրացվում,
25. «25. լիազորված անձի անուն, ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի լիազորված անձի անունը և ազգանունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին լիազորված անձի կողմից,
26. «26. լիազորված անձի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի լիազորված անձի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին վերջինիս կողմից:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 289-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և 34-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի ««Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին մասնակցին տրամադրվող տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» կանոնակարգ 8/05.1-ը հաստատելու մասին» թիվ 289-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել «Կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստր վարողի կողմից կուտակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» կանոնակարգ 8/05.1-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):»:

2) Որոշմամբ հաստատված «Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին մասնակցին տրամադրվող տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» կանոնակարգ 8/05.1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. Կանոնակարգի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կանոնակարգ 8/05.1. «Կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստր վարողի կողմից կուտակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները»»:

բ. Կանոնակարգի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կանոնակարգը սահմանում է կուտակային բաղադրիչի մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարելու դեպքում կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գրավոր տեղեկացման ենթակա տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները»:

գ. Կանոնակարգի Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 183-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 183-Ն որոշմամբ

«Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 289-Ն որոշմամբ»

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱՏԱՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ

Կուտակային բաղադրիչի հարգելի մասնակից,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ձեզ համար պատահականության սկզբունքով ընտրվել է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ, քանի որ Դուք համապատասխան ընտրություն չեք կատարել: Այս նամակով մենք չենք հայտնում Ձեզ համար ընտրված կենսաթոշակային կառավարչի և ֆոնդի անվանումները, քանի որ այն հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն:

Ինչպե՞ս կարող եմ տեղեկանալ ինձ համար ընտրված ֆոնդի և կառավարչի մասին:

Ձեզ համար ընտրված կառավարչին և ֆոնդին ծանոթանալու համար Դուք կարող եք՝

- այցելել հաշվի օպերատորին կամ
- մուտք գործել www.epension.am ինտերնետային կայքի «Իմ հաշիվը» ինտերնետային էջը կամ
- օգտվել բանկոմատներից վճարային քարտերի միջոցով, եթե ունեք այդպիսին:

Ի՞նչ կլինի, եթե ես որևէ գործողություն չեմ կատարում:

Մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը Դուք առաջին անգամ թղթային եղանակով կստանաք ընթացիկ տարվա համար Ձեր կենսաթոշակային հաշվի վերաբերյալ հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) Ձեր գործատուի կողմից տրամադրված փոստային հասցեով: Հաշվետվությունը ներառելու է անձնական (գաղտնի) տեղեկություններ, ուստի կարևոր է, որ Դուք համոզված լինեք, որ գործատուի կողմից տրամադրված հասցեն Ձեզ համար նախընտրելի է:

Ինչպե՞ս ճշտեմ կամ հաստատեմ իմ հասցեն:

Դուք կարող եք մինչև հաջորդ տարվա հունվարի 30-ը ցանկացած ժամանակ հաշվի օպերատորի կամ «Իմ հաշիվը» ինտերնետային էջի միջոցով հաստատել Ձեր փոստային հասցեն և ընտրել հաշվետվություն ստանալու Ձեզ համար նախընտրելի եղանակը՝ թղթային կամ էլեկտրոնային: Հաշվի օպերատորին այցելելիս լրացրեք սույն նամակի Հավելվածը և ներկայացրեք այն:

Նշենք նաև, որ հաշվետվության ստացման ամենահարմարավետ եղանակը համարվում է էլեկտրոնային եղանակը, քանի որ զերծ է թղթային տեղեկատվության պահպանման և կորստի ռիսկերից և ապահովում է Ձեր կենսաթոշակային հաշվի անվտանգությունը:

✂ ✂

Հավելված

_____

Անուն *Ազգանուն*

Հանրային ծառայությունների համարանիշ

ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ

_____

(էլեկտրոնային փոստի հասցե)

կամ

_____

(փոստային հասցե)

Ի՞նչ պարբերականությամբ կարող եմ ստանալ հաշվետվությունը հետագայում:

- էլեկտրոնային եղանակով հաշվետվությունը Դուք ստանում եք տարեկան կտրվածքով,
- Թղթային եղանակով հաշվետվությունը Դուք ստանում եք տարեկան կտրվածքով՝ յուրաքանչյուր տարի լրացնելով հաշվետվությունը ստանալու դիմումը:

Ո՞ր դեպքում չեմ ստանում հաշվետվություն:

- Եթե Դուք չեք ընտրում՝ ինչ եղանակով եք հետագայում ցանկանում ստանալ հաշվետվությունը,
- Եթե Դուք հաշվետվության ստացման դիմումի մեջ ընտրում եք «տեղեկատվության ստացման դադարեցում» տարբերակը,
- Եթե Դուք հրաժարվում եք կենսաթոշակային ֆոնդում Ձեր փայերի սեփականությունից:

Ի՞նչ անել, եթե ցանկանում եմ վերականգնել հաշվետվության ստացումը:

- Լրացնում եք հաշվետվության ստացման դիմումը,
- Ընդունում եք կենսաթոշակային ֆոնդի Ձեր փայերի սեփականությունը, որից նախկինում հրաժարվել էիք:

Ի՞նչ արժե տարեկան հաշվետվությունը:

- Հաշվետվությունը տարին մեկ անգամ Դուք ստանում եք անվճար,
- Հաշվետվությունը տարեկան մեկ անգամից ավելի ստանալու դեպքում Ձեզնից կարող է գանձվել որոշակի գումար:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ մանրամասն տեղեկություններ:

- Այցելելով հետևյալ կայքերից որևէ մեկը՝ www.abcfinance.am, epension.am,
- Զանգահարելով 114 (մարզերից՝ 08000 114) թեժ գիծ հեռախոսահամարին:

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը, փոստային հասցեն(երը),
հեռախոսահամար(ներ)ը, ինտերնետային կայքի հասցեն,
էլեկտրոնային հասցեն(երը)
և այլ կապի միջոցներ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով համապատասխանեցնել ներդրումային ֆոնդի կառավարիչների ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ պահանջները սահմանող իրավական ակտը օրենսդրության փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» կանոնակարգ 10/06»-ը հաստատելու մասին թիվ 324-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանի առաջին պարբերությունում «կենսաթոշակային» բառը փոխարինել «ֆոնդերում ներդրողների» բառերով,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

2) Որոշման նախաբանի երկրորդ պարբերությունում հանել ««Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասը, 70-րդ հոդվածի 4-րդ մասը,»» բառերը,

3) Որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» կանոնակարգ 10/06-ի 1-ին կետում հանել «(այդ թվում՝ պարտադիր և կամավոր կենսաթոշակային ֆոնդեր)» բառերը,

4) Որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» կանոնակարգ 10/06-ի 2-րդ կետում հանել «Կուտակային կենսաթոշակների մասին» և» բառերը և «օրենքներում» բառը փոխարինել «օրենք» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 184-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասը, 12-րդ հոդվածի 9-րդ մասը, 25-րդ հոդվածի 2-րդ մասը, 26-րդ հոդվածի 4-րդ մասը և 37-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. մայիսի 24-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09-ը հաստատելու մասին» թիվ 156-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում «ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՓԱՅԵՐԻ ՎԵՐԱԾՄԱՆ և ՓԱՅԵՐԻ ՄԱՐՄԱՆ» բառերը փոխարինել «ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ» բառերով,

2) Որոշման նախաբանում «12-րդ հոդվածի 5-րդ մասը, 29-րդ հոդվածի 2-րդ մասը, 41-րդ հոդվածի 1-ին մասը և 42-րդ հոդվածի 3-րդ մասը» բառերը փոխարինել «12-րդ հոդվածի 9-րդ մասը, 25-րդ հոդվածի 2-րդ մասը, 26-րդ հոդվածի 4-րդ մասը և 37-րդ հոդվածի 3-րդ մասը» բառերով,

3) Որոշման 1-ին կետում «ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման» բառերը փոխարինել «կառավարչի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու» բառերով:

2. Որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի վերնագրում «ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՓԱՅԵՐԻ ՎԵՐԱԾՄԱՆ և ՓԱՅԵՐԻ ՄԱՐՄԱՆ» բառերը փոխարինել «ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ» բառերով,

2) Կանոնակարգի 4-րդ կետում «2-րդ մասով» բառերը փոխարինել «1-ին մասով» բառերով, իսկ «վճարի» բառը՝ «հատկացման» բառով,

3) Կանոնակարգի 5-րդ կետում «11-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «9-րդ հոդվածի 6-րդ մասով» բառերով,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

4) Կանոնակարգի 6-րդ կետում «2-րդ մասով» բառերը փոխարինել «7-րդ մասով» բառերով,

5) Կանոնակարգի 7-րդ կետի.

ա. առաջին պարբերությունում «2-րդ մասով» բառերը փոխարինել «7-րդ մասով» բառերով,

բ. առաջին ենթակետում՝ «39» թիվը փոխարինել «34» թվով,

գ. 2-րդ ենթակետում «վճարի» բառը փոխարինել «հատկացման» բառով, իսկ «վճարին» բառը «հատկացմանը» բառով,

դ. 3-րդ ենթակետում «վճարին» բառը փոխարինել «հատկացմանը» բառով,

6) Կանոնակարգի 10-րդ կետը «ճշտությամբ» բառից հետո լրացնել «(գները կարող են հրապարակվել ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ)» բառերով,

7) Կանոնակարգի 12-րդ կետում «Պարտադիր կուտակային վճարները» բառերը փոխարինել «Կուտակային հատկացումները» բառերով,

8) Կանոնակարգի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԸ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 185-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասը, 15-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 25-րդ հոդվածի 3-րդ մասը և 34-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 3-րդ կետի երկրորդ 25-րդ ենթակետը,

2) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել 26-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«26) մասնակից, մասնակիցների ռեեստրը վարող, կենսաթոշակային հաշիվ, կենսաթոշակային ֆոնդ, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, հաշվի Օպերատոր՝ ըստ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության:»,

3) Կանոնակարգի 56.1-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի «ա» պարբերություններում «հաշվարկման» բառը փոխարինել «հրապարակման» բառով,

4) Կանոնակարգի 56.7-րդ կետի 4-րդ կետը «տրամադրելու» բառից հետո լրացնել «և տեղեկատվության ստացման դադարեցնելու ու տեղեկատվության ստացման վերականգնելու» բառերով,

5) Կանոնակարգի 56.7-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) մասնակցի կողմից կենսաթոշակային հաշվին փոխանցված կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու և ընդունելու կարգի վերաբերյալ:»:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 186-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 211-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի օգոստոսի 30-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ը հաստատելու մասին» թիվ 211-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «պարտադիր կուտակային» բառերը փոխարինել «կուտակային» բառով, իսկ «9-րդ և 10-րդ կետերը» բառերը փոխարինել «8-րդ և 9-րդ կետերը» բառերով:

2. Որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում «ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման» բառերը փոխարինել «կառավարչի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու» բառերով,

2) Կանոնակարգի 11-րդ կետը «ունենալ» բառից հետո լրացնել «(մասնակցի անունով կարող է բացվել)» բառերով,

3) Կանոնակարգի 12-րդ կետի 8-րդ ենթակետում «վճարները» բառը փոխարինել «հատկացումները» բառով,

4) Կանոնակարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետում «պարտադիր կուտակային վճարների» բառերը փոխարինել «կուտակային հատկացումների» բառերով,

5) Կանոնակարգի 20-րդ կետում «Մինչև մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալը մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում, ինչպես նաև օտարերկրյա» բառերը փոխարինել «Օտարերկրյա» բառով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 188-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 322-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից մասնակիցներին ներկայացվող և հրապարակվող հաշվետվությունների կազմման և ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 322-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 189-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին***

Նպատակ ունենալով օպտիմալացնել ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների գրանցումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը, 50-րդ հոդվածի 2-րդ մասը, 104-րդ հոդվածի 1-ին մասը, 114-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը, 179-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 184-րդ հոդվածի 1-ին մասը և 221-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը (այսուհետ՝ Կանոնակարգ կամ Կանոնակարգ 4/05) հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 հուլիսի 2014 թ., N 197-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):
***Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:*
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.2014 թ. (ՀՀԳՏ N20 (499)[1], 20.08.2014):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 197-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/05

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ օպերատոր), Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարներին ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշների ստուգման, գրանցման կարգը, մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը, ինչպես նաև կարգավորում է այդ հարցերի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված այլ հարաբերություններ:

2. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ տեղեկանքները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով, առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքի տվյալների (անվան և ծածկագրի) միջոցով:

3. Նոր ստեղծվող ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են *էքսել* (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

4. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

5. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրերով (դիմումներով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Ընդ որում, սույն կետում նշված միջնորդագրերը (դիմումները) էլեկտրոնային եղանակով Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում դրանք պետք է ներկայացվեն «Փի-Դի-էֆ» ֆորմատով, իսկ ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Դիմող ընկերության անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ֆայլի ընդլայնումը
օրինակ՝								
ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադր. փոփ.	_	250913	.	pdf

6. Սույն կանոնակարգով սահմանված ներդրումային ընկերության գործադիր տնօրենի որակավորման պահանջները և ընթացակարգերը տարածվում են նաև ներդրումային ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների, ինչպես նաև ներդրումային ընկերության ադմինիստրացիայի ղեկավարի և լուծարային կառավարչի վրա:

7. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 58-րդ հոդվածի 1-ին, 114-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ, 179-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված հետևյալ

անձինք, իսկ այդ անձանց գործառույթների պատվիրակման դեպքում այն անձը կամ անձինք, որոնք պատասխանատվություն են կրում պատվիրակված գործառույթների իրականացման համար պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացված որակավորում.

1) ներդրումային ընկերության տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, մասնաճյուղի տնօրենը,
2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,
3) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անուհից ներդրումային ծառայություններ մատուցող կամ նման ծառայություններ մատուցելու առաջարկությամբ հանդես եկող ֆիզիկական անձը,
4) բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը,
5) օպերատորի դիտորդ խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամը (այդ թվում՝ գործադիր մարմնի ղեկավարը և գործադիր տնօրենի տեղակալը), վերահսկող ծառայության ղեկավարը և անդամը, կարգապահական հանձնաժողովի նախագահը կամ նման այլ մարմինների ղեկավարը,
6) Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները (այդ թվում՝ գործադիր տնօրենի տեղակալը) և վերստուգող հանձնաժողովի ղեկավարը և անդամները կամ նման այլ մարմինների ղեկավարը և անդամները:

8. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 58-րդ հոդվածի 1-ին, 114-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ, 179-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված հետևյալ անձանց վրա չի տարածվում սույն կանոնակարգով սահմանված որակավորում ունենալու պահանջը.

1) ներդրումային ընկերության (մասնաճյուղի), օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտի, վարչության, բաժնի, խմբի կամ այլ միավորի) ղեկավարները,
2) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության ղեկավարը,
3) բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները (բացառությամբ, եթե գործադիր տնօրենը կամ նրա տեղակալը հանդիսանում են ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար), գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրենության անդամները, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները: Սույն ենթակետով նշված անձինք որակավորվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշման:

9. Սույն կանոնակարգով նախատեսված որակավորման վկայականներին հավասարեցվում են սույն կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված որակավորումները, դիպլոմները կամ հավաստագրերը:

10. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան որակավորումը ստացած են համարվում և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն նաև սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում աշխատած, գրանցման գործընթացում գտնվող այն անձինք, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և (կամ) զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:

11. Թեկնածուն կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ մեկից ավելի ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայականներ ստանալու համար:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***կենտրոնական բանկ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***որակավորվող անձ***՝ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված որևէ պաշտոնի համար որակավորում ստացած անձ,

3) ***հանձնաժողով***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
4) ***թեկնածու***՝ անձ, որը դիմում է որակավորման ստուգում անցնելու համար,
5) ***ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար***՝ անձ, որն առանց տվյալ ղեկավարի պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները:
6) ***հանրային ծառայությունների համարանիշ***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
7) ***անձնագրի տվյալներ***՝ անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի համարը:
8) ***ֆինանսական վիճակի վատթարացում***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 4/01-ով սահմանված դեպքերից որևէ մեկը:
9) ***«Բարձրագույն կրթություն ունեցող անձ»***՝ անձ, որն ավարտել է Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ստացել է Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական:

13. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԴԻՊԼՈՄՆԵՐԸ ԿԱՄ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

14. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով որակավորման վկայական է տրամադրվում որոշակի պաշտոնում գրանցված այն ղեկավարին, որն ունի սույն կետի աղյուսակում նշված, տվյալ պաշտոնին համապատասխան որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր.

Պաշտոն	Որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր
1. Ներդրումային ընկերության ղեկավարներ, այդ թվում՝	
1.1. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էՖ-ԱՌ-էՄ (FRM) որակավորում կամ է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
1.2. մասնաճյուղի տնօրեն	ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էՖ-ԱՌ-էՄ (FRM) որակավորում կամ է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
1.3. ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավար	է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ ՍԻ-ԱՅ-է3 (CIA) որակավորում կամ ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ.
1.4. ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ ՍԻ-ԱՅ-է3 (CIA) որակավորում կամ ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ.
1.5. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ
2. Բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար	ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էՖ-ԱՌ-էՄ (FRM) կամ է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
3. Օպերատորի ղեկավար, այդ թվում՝	
3.1. գործադիր մարմնի ղեկավար և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էՖ-ԱՌ-էՄ (FRM) որակավորում կամ է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
3.2. կարգապահական հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար	ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էՖ-ԱՌ-էՄ (FRM) որակավորում կամ է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
3.3. վերահսկող ծառայության կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	է3-ՍԻ-ՍԻ-է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ ՍԻ-ԱՅ-է3 (CIA) որակավորում կամ ՍԻ-էՖ-է3 (CFA) որակավորման 2 մակարդակ.

4. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, այդ թվում՝	
4.1. գործադիր մարմնի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակներ կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) որակավորում կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
4.2. վերստուգող հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ ՍԻ-ԱՅ-Է3 (CIA) որակավորում կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ.
5. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձ	ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.

ԳԼՈՒԽ 4
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Կենտրոնական բանկի խորհրդի նիստում հարցազրույցի միջոցով որակավորման ստուգումն անցնում են ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամի պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները:

16. Հարցազրույցը (բացառությամբ՝ լրացուցիչ հարցազրույցի) իրականացվում է խորհրդի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման գործընթացում, որին խորհրդի անդամի մասնակցության համար ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերությունը, օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ են ներկայացնում միջնորդագիր և տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 7-ի և Հավելված 1-ի:

17. Կենտրոնական բանկը ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամների որակավորման ստուգման համար հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ թեկնածուին տեղեկացնում է հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:

18. Հարցազրույցի ժամանակ ստուգվում են թեկնածուի գիտելիքները սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

19. Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամի թեկնածուների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

20. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշում ընդունել նաև առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:

21. Խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում նշված անձը համարվում է խորհրդի անդամի որակավորում ստացած:

22. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամի որակավորումը տրվում է մինչև տվյալ կազմակերպությունում նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:

23. Որակավորում ստացած ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահը և խորհրդի անդամը իրենց պաշտոնավարման ընթացքում Կենտրոնական բանկի կողմից կարող են որակավորման ստուգման նպատակով հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի Կենտրոնական բանկի խորհրդի նիստում:

24. Լրացուցիչ հարցազրույցը կարող է իրականացվել ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ, որի մասին ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկացվում է առնվազն 30 օր առաջ:

25. Լրացուցիչ հարցազրույցն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

26. Լրացուցիչ հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

27. Խորհրդի անդամի գիտելիքների անհամապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում, ինչպես նաև սույն գլխով սահմանված կարգով լրացուցիչ հարցազրույցին անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում այդ անձինք համարվում են որակավորում չունեցող:

28. Օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահը գրանցվում է՝ համաձայն սույն գլխի:

ԳԼՈՒԽ 5
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Որակավորման ստուգում անցնելու նպատակով քննություն հանձնում են ստորև նշված պաշտոներում աշխատելու համար դիմող թեկնածուները՝

1) ներդրումային ընկերության գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, մասնաճյուղի տնօրենը,
2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,
3) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը,
4) բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը,
5) օպերատորի գործադիր մարմնի անդամները (այդ թվում՝ գործադիր մարմնի ղեկավարը և գործադիր տնօրենի տեղակալը), վերահսկող ծառայության ղեկավարը և անդամը կամ նման այլ մարմինների ղեկավարը,
6) Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները (այդ թվում՝ գործադիր տնօրենի տեղակալը), վերստուգող հանձնաժողովի ղեկավարը և անդամները կամ նման այլ մարմինների ղեկավարը և անդամը:

30. Քննությունն անցկացվում է Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կամ Կենտրոնական բանկի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից: Ընդ որում՝ Կենտրոնական բանկի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից անցկացվելու դեպքում քննության թեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

31. Քննությանը հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակին նախորդող ամսվա 10-ը:

32. Թեկնածուները քննությանը մասնակցելու համար պետք է նախապես հերթագրվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում՝ մուտքագրելով հետևյալ տվյալները՝

1) անուն, ազգանուն,
2) որակավորման տեսակ,
3) քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
4) հեռախոսահամար,
5) անձնագրի տվյալները,
6) էլեկտրոնային փոստի հասցեն:

33. Թեկնածուները քննությանը մասնակցում են՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
3) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտը) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը:

34. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:

35. Քննության համար առանձնացված սենյակում թեկնածուն նստում է համապատասխան համակարգչի մոտ՝ ըստ ցուցակի:

36. Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

37. Քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով:

38. Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

39. Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից միանշանակ ճիշտ) պատասխան:

40. Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:

41. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից. մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

ԳԼՈՒԽ 6
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ

42. Թեկնածուները Կենտրոնական բանկում որակավորման ստուգումն անցնում են սույն կանոնակարգի Հավելված 6-ում ներկայացված աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում, «V» նշանը նշանակում է՝ տվյալ թեման վերաբերում է, «-» նշանը՝ չի վերաբերում:

43. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի Հավելված 6-ում սահմանված թեմաների ցանկի հիման վրա:

44. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները, հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ և ենթակա չեն հրապարակման: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:

45. Թեստերը և դրանցում պարունակվող հարցերի քանակը տարբերակվում են ըստ որակավորման հետևյալ տեսակների.

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿ	Հարցերի քանակ
1. Ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի) ղեկավար, այդ թվում՝	
1.1. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, 1.2. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, 1.3. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ,	100 հարց
1.4. Ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրեն,	80 հարց
2. Օպերատորի ղեկավար, այդ թվում՝	
2.1. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ կամ նման այլ մարմնի ղեկավար 2.2. վերահսկող ծառայության կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ,	100 հարց
3. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, այդ թվում՝	
3.1. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ կամ նման այլ մարմնի ղեկավար 3.2. վերստուգող հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	100 հարց
4. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը	40 հարց
5. Բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը	100 հարց

46. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

47. Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում՝ Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել՝ Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության պետի թույլտվությամբ:

48. Թեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է 3-ից 4 պատասխան, որոնցից մեկն է միանշանակ ճիշտ:

49. Թեստի հարցի միանշանակ ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

ԳԼՈՒԽ 7
ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

50. Թեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ.

1) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված, և նրան տրվում է որակավորման վկայական:
2) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված:

51. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են դիմել մասնակցելու քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

52. Թեկնածուի՝ թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Հանձնաժողովը, որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

53. Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 8
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

54. Որակավորման վկայականը տրվում է՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի համար, բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի պաշտոնների համար,
2) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնների համար,
3) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի և ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար,
4) ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,
5) օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
6) օպերատորի վերահսկող ծառայության ղեկավարի և անդամի պաշտոնների համար,
7) Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
8) Կենտրոնական դեպոզիտարիայի վերստուգող հանձնաժողովի ղեկավարի և անդամի պաշտոնների համար,
9) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձի համար, այդ թվում՝
   ա. ***Բրոքեր***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,
   բ. ***Խորհրդատու***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,
   գ. ***Դիլեր***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,
   դ. ***Կառավարիչ***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,
   ե. ***Տեղաբաշխող***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,
   զ. ***Պահառուի աշխատակից***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից:

55. Սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է՝

1) քննության դրական արդյունք ապահոված թեկնածուներին՝ էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով թեկնածուի կողմից քննության մասնակցության հերթագրման ժամանակ ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ քննությունը հանձնելու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

2) սույն կանոնակարգի 0-րդ կետի պահանջները բավարարող ղեկավարի թեկնածուին, սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարի թեկնածուին Կենտրոնական բանկում գրանցվելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

56. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու դեպքում, էլեկտրոնային փոստի խափանման դեպքում կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով թեկնածուն ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

57. Որակավորվող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից) տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

58. Թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 3 տարի ժամկետով, բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետում սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ և սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի կանոնները:

ԳԼՈՒԽ 9
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

59. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-րդ ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրեն, ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձ:

60. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահը ի պաշտոնե կարող է լինել տվյալ ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի (տնօրենության, վարչության) անդամ՝ առանց գործադիր մարմնի (տնօրենության, վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

61. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել համապատասխանաբար ներդրումային ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ:

ԳԼՈՒԽ 10
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

62. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ որպես ղեկավար գրանցման ներկայացված անձը պետք է իրազեկ լինի, համապատասխանաբար, ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեությունը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործարար ծրագրին, ինչպես նաև համապատասխանաբար ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերին:

63. Անձը ստորև նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար պետք է բացի սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներից բավարարի նաև սույն կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված դեպքերի՝

Պաշտոն	Մասնագիտական համապատասխանության չափանիշ
1. Ներդրումային ընկերության ղեկավարներ, այդ թվում՝	
1.1. տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ	ա. բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, բ. բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ
1.2. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում
1.3. մասնաճյուղի տնօրեն	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ
1.4. ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավար	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
1.5. ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ընդ որում, տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու ներքին աուդիտի անդամի համար՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
1.6. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
2. Բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում
3. Օպերատորի ղեկավար, այդ թվում՝	
3.1. դիտորդ խորհրդի նախագահ և անդամ	ա. բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ
3.2. գործադիր մարմնի ղեկավար և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ ղեկավար պաշտոնում
3.3. կարգապահական հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ
3.4. վերահսկող ծառայության կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	ա. բարձրագույն կրթություն և բ. 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
4. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, այդ թվում՝	
4.1. դիտորդ խորհրդի նախագահ և անդամ	ա. բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ
4.2. գործադիր մարմնի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ ղեկավար պաշտոնում
4.3. վերստուգող հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

64. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և (կամ) բարձրագույն կրթություն, ապա ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունեն Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար ղեկավարի թեկնածուի մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովի դրական եզրակացությամբ, ղեկավարի թեկնածուն համարվում է համապատասխանության չափանիշները բավարարող:

65. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպությունում աշխատանքային փորձ է համարվում տվյալ ֆինանսական կազմակերպությունում մասնագիտական գործունեության հետ կապված աշխատանքային փորձը:

66. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է ղեկավարների Կենտրոնական բանկում գրանցման պահին նախորդող 10 տարիներին՝ բացառությամբ խորհրդի անդամի համար նախատեսված աշխատանքային փորձի:

ԳԼՈՒԽ 11
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՁՄՈՒՄ ԿԱՄ ԱՆՈՒՆԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ) ԳՐԱՆՑՈՒՄԸ

67. Ղեկավարների գրանցումը իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ կամ բարդ: Ղեկավարների գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 2-ով:

68. Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
2) թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով, բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված դեպքերի:

69. Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով,
2) թեկնածուի որակավորման առկայության ստուգում:

70. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի և տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի:
2) Կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

71. Ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղերը, օպերատորը և Կենտրոնական դեպոզիտարիան պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

72. Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կամ նրանց կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ:

73. Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի համապատասխան որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 0, 0, 0 կետերի առկայության հիմնավորմամբ գրավոր կամ բանավոր եղանակով չի ծանուցվել անձին բարդ ընթացակարգով գրանցելու մասին, որի դեպքում գործում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

74. Եթե ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ Կենտրոնական բանկի կարծիքով բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները կամ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

75. Եթե ներդրումային ընկերության մասնաճյուղը, Կենտրոնական բանկի կարծիքով, հանդիսանում է ընկերության գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, ապա տվյալ մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

76. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և (կամ) այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր ընկերության և (կամ) ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

77. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան ղեկավարի գրանցումն իրականացվում է բարդ ընթացակարգով այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել ներդրումային ընկերությանը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին, օպերատորին կամ Կենտրոնական դեպոզիտարիային համապատասխան ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցելու հնարավորության մասին:

78. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում ղեկավարների գրանցման օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

79. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

80. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 1-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան դիմում են Կենտրոնական բանկ նույն անձին այլ ղեկավար պաշտոնում գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված տեղեկանքը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն տեղեկանքի 1-ին և 2-րդ կետերի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

81. Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող են չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

82. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը:

83. Ներդրումային ընկերությանը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, կարգավորվող շուկայի օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ որակավորման ստուգման և գրանցման ենթակա չէ, և ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկին տեղեկացնում են նրա՝ որպես խորհրդի նախագահ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով համապատասխան գրություն, որտեղ նշվում է իրավասու մարմնի կողմից որոշման կայացման ամսաթիվը և փոփոխության իրականացման ամսաթիվը:

84. Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե՝

1) առկա են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 2-րդ մասի, 114-րդ հոդվածի 3-րդ մասի կամ 179-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած պայմանները,
2) Անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցի» համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,
3) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 12
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

85. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից՝

1) եթե ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,

2) եթե ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեությունը դադարեցվել է (տվյալ մասնաճյուղի ղեկավարի համար),
3) եթե ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան դիմել են համապատասխան միջնորդությամբ,
4) եթե խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,
5) ներդրումային ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների գրանցման պահից:

86. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան ղեկավարների կազմում փոփոխություններ տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

87. Եթե ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար:

ԳԼՈՒԽ 13
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

88. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների պաշտոնները կարող են զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարների կողմից և թափուր մնալ ոչ ավելի քան 3 ամիս՝ սկսած ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ղեկավարին պաշտոնից փաստացի ազատելու պահից:

89. Սույն կետի աղյուսակի համապատասխան պաշտոնների համար նշված ժամանակավոր պաշտոնակատարների վրա սույն կանոնակարգի 0-րդ կետով նշված եռամսյա ժամկետը չի տարածվում: Ընդ որում, եթե սույն կետում նշված դեպքերում ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պաշտոնավարում է երեք ամսից ավելի, ապա եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր են այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

ՊԱՇՏՈՆ	ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
1. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավար (գործադիր տնօրեն)	Տվյալ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, գործադիր մարմնի անդամ
2. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	Տվյալ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցված գլխավոր հաշվապահի տեղակալ
3. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	Տվյալ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցված ներքին աուդիտի անդամ

90. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը կարող է չունենալ համապատասխան ղեկավարի պաշտոնի համար նախատեսված որակավորում, բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետերով նախատեսված ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների:

91. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար կարող են լինել միայն տվյալ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր տնօրենի տեղակալը կամ գործադիր մարմնի անդամը:

92. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել միայն տվյալ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ունեցող այլ աշխատակիցը:

93. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել ներդրումային ընկերությունում, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղում այլ պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ գրանցված ներքին աուդիտի անդամի), ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

94. Ներքին աուդիտի անդամի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի այլ պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

95. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

96. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

ԳԼՈՒԽ 14
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

97. Սույն կանոնակարգի 0-րդ կետն ուժի մեջ է մտնում 2014 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ մինչ այդ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են *էքսել* ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

98. Մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելը ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորում ստացած անձը կարող է աշխատել որպես ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար մինչև որակավորման ժամկետի ավարտը:

99. Սույն կանոնակարգի 0-րդ կետի աղյուսակի 1.5-րդ պարբերության պահանջները չեն տարածվում մինչև սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելը գրանցված ղեկավարների վրա:

Հավելված 1

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

ՏԵՂԵԿԱՆՔ

Ղեկավարների (պատասխանատու անձի) վերաբերյալ տեղեկություններ

Խնդրում ենք սույն միջնորդագրում նշված անձին գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես ղեկավար և կից ներկայացնում ենք նրա վերաբերյալ տեղեկությունները:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը

☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները**

1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները

(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար Դուք պետք է հանդիսանաք: Ընդ որում՝ սույն միջնորդագրում «ղեկավար» հասկացությունը ներառում է նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց, ֆոնդի պահառուի աշխատակցի և ապահովագրական բրոքերների պատասխանատու անձանց:)

1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)

1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ

- ○ բանկ
- ○ օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- ○ վարկային կազմակերպություն
- ○ ապահովագրական ընկերություն
- ○ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- ○ ապահովագրական բրոքեր
- ○ ներդրումային ընկերություն
- ○ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- ○ կարգավորվող շուկայի օպերատոր
- ○ Կենտրոնական դեպոզիտարիա
- ○ ֆոնդի կառավարիչ
- ○ օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- ○ Բյուրո
- ○ վճարահաշվարկային կազմակերպություն

2. Ղեկավար պաշտոն

2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 կետում նշված կազմակերպությունում

- ○ տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահ (խորհրդի նախագահ)
- ○ տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ),
- ○ գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրենության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար)
- ○ գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ
- ○ տնօրենության (վարչության, գործադիր մարմնի) անդամ
- ○ գլխավոր հաշվապահ
- ○ գլխավոր հաշվապահի տեղակալ
- ○ ներքին աուդիտի ղեկավար
- ○ ներքին աուդիտի անդամ
- ○ բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար
- ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
- ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահի (ղեկավարի) տեղակալ
- ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի անդամ
- ○ մասնաճյուղի կառավարիչ (տնօրեն)
- ○ մասնաճյուղի գործադիր տնօրեն
- ○ մասնաճյուղի գործադիր տնօրենի տեղակալ
- ○ մասնաճյուղի գլխավոր հաշվապահ
- ○ օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
- ○ օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
- ○ օպերատորի վերահսկող ծառայության անդամ
- ○ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ
- ○ պատասխանատու ակտուար
- ○ ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ
- ○ ֆոնդի պահառուի ղեկավար
- ○ ֆոնդի պահառուի աշխատակից
- ○ բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից

2.2. Նշեք՝
- Բանկի ներքին դիտարկումների ստորաբաժանման և պաշտոնի անվանումը, եթե հանդիսանում եք այդ ստորաբաժանման աշխատակից, կամ
- Կիրառելի չէ, եթե չեք հանդիսանում ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:

2.3. Նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1. Անուն, ազգանուն, հայրանուն

3.2. Սեռ՝
- արական
- իգական

3.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4. Ծննդավայր

3.5. Քաղաքացիություն

3.6. Նշեք՝
- անձնագրի տվյալները
- գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
- հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.7. Նշեք՝
- հանրային ծառայության համարանիշը
- կիրառելի չէ

3.8. Նշեք՝
- հաշվառման վայր
- փաստացի բնակության վայր

3.9. Նշեք հեռախոսահամար
- բջջային
- աշխատանքային
- տնային

3.10. Էլեկտրոնային փոստի հասցե

3.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանը

Անուն, ազգանուն, հայրանուն

Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Սովորելու ժամանակաշրջանը (_____թ-ից մինչև _____ թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

4.2. Ի՞նչ լեզուների եք տիրապետում
- հայերեն
- անգլերեն
- ռուսերեն
- այլ (նշել լեզուն)

4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները, ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից. վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում: Եթե այդպիսի անձը բացակայում է, ապա նշեք «Կիրառելի չէ» տարբերակը:

Անունը, ազգանունը	Աշխատանքի վայրը, դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն

- Կիրառելի չէ

5. Ղեկավարների (որակավորվող անձանց) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար
- ○ Ոչ
- ○ Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.4. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1. Նշեք՝
- ○ այն ֆինանսական կազմակերպությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող ընկերությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից
(Ընդ որում, 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմվում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2. Նշեք՝
- ○ այն ֆինանսական կազմակերպությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող ընկերությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:
- o Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3. Նշեք՝
- o Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները կամ նշեք «Կիրառելի չէ» տարբերակը, եթե նման փոխկապակցված անձ չկա

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգի իմաստով՝ միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները:)

Անուն, ազգանուն	Ժամանակահատված (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Անձնագրի տվյալները	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսահամար

- o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք
- o Ոչ
- o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- o Իրազեկ չեմ

7.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ
- o Ոչ
- o Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ
- o Ոչ
- o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- o Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկատվություն

8.1. Նշեք՝
- o Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց)

Անուն, ազգանուն	Անձնագրի համար	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայր	Հեռախոսահամար (բջջային և այլն)

- o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձը չկա:

8.2. Նշեք՝
- o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

- o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել
- o Ոչ
- o Այո, ներկայացնել մանրամասները

10. Այլ փաստաթղթեր

10.1. Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.
Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 39-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ
- o Այո
- o Ոչ

11. Հավաստիացնում եմ, որ
ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,
բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

Հավելված 2

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

N	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
1.	*ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻՆՔ, այդ թվում՝*	
1)	Տնօրենների խորհրդի նախագահը	Բ
2)	Տնօրենների խորհրդի անդամները	Բ
3)	Գործադիր մարմնի ղեկավարը	Բ
4)	Գործադիր մարմնի անդամները	Բ
5)	Գործադիր տնօրենի տեղակալը	Բ
6)	Գլխավոր հաշվապահը	Բ
7)	Գլխավոր հաշվապահի տեղակալը	Բ
8)	Ներքին աուդիտի ղեկավարը	Բ
9)	Ներքին աուդիտի անդամները	Պ
10)	Մասնաճյուղի տնօրենը	Պ
2.	*ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐ, այդ թվում՝*	
1)	Դիտորդ խորհրդի նախագահը	Բ
2)	Դիտորդ խորհրդի անդամները	Բ
3)	Գործադիր մարմնի ղեկավարը	Բ
4)	Գործադիր մարմնի անդամը	Բ
5)	Գործադիր մարմնի ղեկավարի տեղակալը	Բ
6)	Վերահսկող ծառայության ղեկավարը	Բ
7)	Վերահսկող ծառայության անդամը	Պ
8)	Կարգապահական հանձնաժողովի նախագահը	*Բ*
3.	*ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ, այդ թվում՝*	
1)	Դիտորդ խորհրդի նախագահը	Բ
2)	Դիտորդ խորհրդի անդամները	Բ
3)	Գործադիր մարմնի ղեկավարը	Բ
4)	Գործադիր մարմնի անդամները	Բ
5)	Գործադիր տնօրենի տեղակալը	Բ
6)	Վերստուգող հանձնաժողովի ղեկավարը	Բ
7)	Վերստուգող հանձնաժողովի անդամները	Պ

Հավելված 3

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

1. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
2. Միջազգային հաշվարկների բանկ (Bank of International Settlements)
3. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Black Sea Trade and Development Bank)
4. Կարիբյան զարգացման բանկ (Caribbean Development Bank)
5. Կենտրոնական Ամերիկայի տնտեսական ինտեգրման բանկ (Central American Bank of Economic Integration)
6. Լատինական Ամերիկայի զարգացման բանկ (Corporation Andina de Fomento)
7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
8. Եվրոպական հանձնաժողով (European Commission)
9. Եվրոպական ներդրումային բանկ (European Investment Bank)
10. Ներամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
11. Միջազգային արժութային հիմնադրամ (International Monetary Fund)
12. Իսլամական զարգացման բանկ (Islamic Development Bank)
13. Սկանդինավյան զարգացման հիմնադրամ (Nordic Development Fund)
14. Սկանդինավյան ներդրումային բանկ (Nordic Investment Bank)

15. Նավթ արտահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ (OPEC Fund for International Development)
16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Co-operation and Development)
17. Նավթանյութեր արտահանող երկրների կազմակերպություն (Organization of Petroleum-Exporting Countries)
18. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)
    1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
    2) Միջազգային զարգացման ասոցիացիա (International Development Association)
    3) Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
    4) Բազմազգ ներդրումների երաշխավորման գործակալություն (Multinational Investment Guarantee Agency)
    5) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (International Centre for Settlement of Investment Disputes)
19. Վերակառուցման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau (KfW))
20. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների ֆինանսական կազմակերպություններ

Հավելված 4

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ

Սույն վկայականը տրվում է

_____ **-ին** _____

(անուն, ազգանուն) *(անձը հաստատող փաստաթղթի տվյալներ)*

_____

(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև «__» _____ 20__ թ.

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 5

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Ես _____

(անուն, ազգանուն (հանրային ծառայությունների համարանիշը և անձնագրի տվյալները)

_____ թվականին

(քննության անցկացման օր/ամիս/տարի)

մասնակցել եմ _____ որակավորման ստուգման համար նախատեսված քննությանը:

(որակավորման տեսակը)

_____

_____

_____

_____

(բողոքարկման պատճառ հանդիսացած խնդրահարույց հարցի նկարագրությունը)

Դիմող _____

_____

(հեռախոսահամար, էլ. փոստի հասցե)

_____

(ստորագրություն)

«__» _____20__ թ.

Հավելված 6

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

Թեմա	Ներդրումային ընկերություն				Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք						Օպերատոր			Կենտրոնական դեպոզիտարիա		
	Ներդրումային ընկերության տնօրենների (տնօրեն) խորհրդի անդամ, խորհրդի անդամ	Ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրեն: Բացվելուց հետո ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար ստուգումը կատարվում է միայն մեկ տարի հետո	Ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրեն	Ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար, աուդիտոր	բողոքը	տեղաբաշխում	խորհրդատու	դիլեր	արժեթղթերի վերլուծաբան	ներդրումային կառավարիչ	Օպերատորի (կլիրինգային կենտրոնի) խորհրդի անդամ, խորհրդի անդամ	Օպերատորի գործադիր մարմնի անդամ, գործադիր մարմնի անդամ, Օպերատորի գործադիր տնօրենի տեղակալ, Օպերատորի գործադիր տնօրեն	Օպերատորի ներքին աուդիտի ղեկավար, աուդիտոր	Կենտրոնական դեպոզիտարիայի (կլիրինգային կենտրոնի) խորհրդի անդամ, խորհրդի անդամ	Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր տնօրեն, Կենտրոնական դեպոզիտարիայի տնօրեն	Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին աուդիտի ղեկավար, աուդիտոր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը կարգավորող իրավական ակտեր																
«1.1. Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի հիմնական հասկացությունները	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.2. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հիմնական նպատակը և կարգավորման առարկան	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.3. Ազդագիրը, ծրագրային ազդագիրը, դրանց նկատմամբ պահանջները	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.4. Թողարկողի կամ տեղաբաշխողի կողմից ազդագրում տեղեկատվության բաց թողնման կամ խեղաթյուրման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցումը	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	-	-	-	-	-
1.5. Գովազդի նկատմամբ պահանջները	-	V	-	-	-	-	V	-	-	-	-	V	-	-	-	-
1.6. Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի հետգնման պարտավորությունը	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	V	-	-	-	-
1.7. Արժեթղթերի տեղաբաշխումը, տեղաբաշխման կասեցումը, տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունները	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	V	-	-	-	-
1.8. Արժեթղթերի հրապարակային առաջարկն օտարերկրյա թողարկողների կողմից	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.9. Օտարերկրյա պետությունում արժեթղթերի առաջարկի վերաբերյալ տեղեկացման պարտականությունը	-	V	-	-	-	-	V	-	-	-	-	-	-	-	-	-
1.10. Ներդրումային ծառայությունները, դրանց տեսակները	V	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
1.11. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք և նրանց գործունեության շրջանակները	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
1.12. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միությունները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	-	-
1.13. Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան, լիցենզիայի գործողության շրջանակը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.14. Ներդրումային ընկերության գրանցումը և լիցենզավորումը, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.15. Օտարերկրյա ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղը և ներկայացուցչությունը, դրանց գրանցումը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.16. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության մասնաճյուղը և ներկայացուցչությունը, դրանց գրանցումը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.17. Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծառայությունների մատուցումն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից	-	V										V	V	-	-	-
1.18. Ներդրումային ընկերության կառավարման մարմինները և ղեկավարները, դրանց կազմավորումը, իրավասությունները և պարտականությունները ներդրումային ընկերության փոխհարաբերությունները ներդրումային ընկերության խորհրդի հետ	V	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.19. Ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց և ղեկավարների մասնագիտական համապատասխանությունն ու որակավորումը	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-
1.20. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավարների նկատմամբ պահանջները	V	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.21. Ներքին աուդիտը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.22. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.23. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.24. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.25. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի հաճախորդների միջոցների հաշվառումը և պաշտպանությունը	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.26. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից գրանցումներ վարելը	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-

1.27. Ներդրումային ընկերությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները, հատուկ տնտեսական նորմատիվները	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.28. Ներդրումային ընկերությունների Հաշվապահական հաշվառման կազմակերպումը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.29. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.30. Ներդրումային ընկերությունների կողմից հրապարակվող տեղեկատվությունը և հաշվետվությունները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.31. Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության տարեկան աուդիտը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.32. Ներդրումային ընկերության վերակազմակերպումը, միացումը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.33. Ներդրումային ընկերության լուծարումը, ինքնալուծարումը, պահանջների բավարարման հերթականությունը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.34. Ներդրումային ընկերության լուծարային հանձնաժողովը, նրա գործունեությունը, նրա նկատմամբ պահանջները, վերահսկողությունը և հաշվետվությունները	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.35. Օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	-	-
1.36. Օպերատորի գործառնական ռիսկերի կառավարումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.37. Օպերատորի կանոնադրական կապիտալը և ընդհանուր կապիտալը	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.38. Օպերատորի կառավարումը, կառավարման մարմինները, դրանց կազմավորումը, իրավասությունները և պարտականությունները, կառավարման մարմինների փոխհարաբերությունները դիտորդ խորհրդի հետ	-	V	-	-	-	-	-	-	-	-	V	V	V	-	-	-
1.39. Օպերատորի կողմից սահմանվող շուկայի կանոնները, դրանց նկատմամբ պահանջները, գրանցումը Կենտրոնական բանկում	-	V	-	-	V	V	V	V	-	-	V	V	V	-	-	-
1.40. Օպերատորի պարտականությունները	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.41. Շուկայի մասնակիցների հավասարությունը	-	V	-	-	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.42. Առևտրի ազդագիրը, առևտրի ազդագրի հրապարակման պահանջն արժեթղթերի՝ շուկայում առևտրին թույլտվության դեպքում, առևտրի ազդագրի հրապարակումը և արժեթղթերի թույլտվությունը շուկայում առևտրին, այլ պահանջներ	-	V	-	-	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.43. Աճձի և օպերատորի միջև վեճերի լուծումը	-	V	-	V	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.44. Շուկայի մասնակցի պարտավորությունները	-	V	-	V	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.45. Հաշվետու թողարկողի պարտականությունները	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.46. Հաշվետու թողարկողների կողմից տեղեկատվության պարբերական բացահայտումը	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.47. Հաշվետու թողարկողի կողմից էական փաստերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը	-	V	-	-	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.48. Հաշվետու թողարկողի աուդիտոն իրականացնող անձը և հաշվետվությունների աուդիտը	-	V	-	-	-	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.49. Գործարքները շուկայում, դրանց նկատմամբ Կենտրոնական բանկի սահմանած պահանջները	-	V	-	-	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.50. Արժեթղթերի առևտրի կասեցումը և դադարեցումը	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.51. Օպերատորի կողմից գործարքների գրանցումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.52. Հաշվետու թողարկողի կամ ներդրումային ծառայություններ մատուցող անձի սնանկության հատուկ պայմանները	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.53. Օպերատորի կողմից հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը պահպանելու պարտականությունը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.54. Օպերատորին տրամադրվող տեղեկատվությունը, դրա նկատմամբ պահանջները	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.55. Օպերատորի կողմից տեղեկատվության հրապարակումը, հրապարակման կարգը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.56. Շուկան վերահսկելու օպերատորի պարտականությունը	-	V	-	-	-	-	-	-	-	-	V	V	V	-	-	-
1.57. Օպերատորի հաշվետվությունները Կենտրոնական բանկին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.58. Օպերատորի կողմից կիրառվող տույժերը	-	V	-	-	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.59. Ֆոնդային բորսան, նրա անդամները	-	V	-	-	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.60. Բորսայի կանոնները	-	V	-	V	V	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.61. Բորսայում արժեթղթերի ցուցակում, ցուցակման պայմանները	-	V	-	V	V	V	V	V	-	-	V	V	V	-	-	-
1.62. Բաժնետիրական ընկերությունների կողմից արժեթղթերը հանձնելու առաջարկը, առաջարկի պայմանները և դրանց փոփոխումը, արժեթղթերը հանձնելու առաջարկով նախատեսվածից ավելի ներկայացված արժեթղթերի ընդունումը և այլն	V	V	-	-	V	V	V	V	V	-	V	V	V	V	V	V
1.63. Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցությունն ձեռք բերելը, դրա նկատմամբ պահանջները, տեղեկատվության հրապարակումը, մասնակցության ձեռքբերման կամ օտարման հաստատումը	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
1.64. Շուկայի չարաշահումը	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.65. Ներքին տեղեկությունները, դրանց անբարեխիղճ օգտագործման արգելումը, բացահայտումը, բացահայտման հետածգումը, բացահայտումը դրանց արտահոսքի դեպքում	-	V	V	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.66. Ինսայդերը, ինսայդերների ցուցակը	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.67. Թողարկողի կողմից ներքին տեղեկությունների չբացահայտման կամ ոչ ճշգրիտ բացահայտման արդյունքում կրած վնասների փոխհատուցումը	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.68. Ներքին տեղեկությունների կապակցությամբ թողարկողի ընդհանուր պարտականությունները	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.69. Հաշվետու թողարկողի կողմից ներքին կանոններ սահմանելու պարտականությունը	-	-	-	V	-	-	V	-	-	-	-	V	V	-	-	-
1.70. Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումները, դրանց վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.71. Ներդրումային առաջարկությունները	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-	
1.72. Կենտրոնական դեպոզիտարիան, նրա գործառույթները	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	V	V	V
1.73. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալը և ընդհանուր կապիտալը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	V
1.74. Կենտրոնական դեպոզիտարիայի բաժնետոմսերը և բաժնետերերը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	V
1.75. Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարումը, կառավարման մարմինները, դրանց կազմավորումը, իրավասությունները և պարտականությունները, կառավարման մարմինների փոխհարաբերությունները դիտորդ խորհրդի հետ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	V
1.76. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնները և դրանց գրանցումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V
1.77. Կենտրոնական դեպոզիտարիայում առկա տեղեկատվության պահպանումը և պաշտպանությունը	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	-	-	V	V
1.78. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկությունները և հաշվետվությունները	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V
1.79. Կենտրոնական դեպոզիտարիայի վերահսկողական իրավասությունը	-	V	-	V	-	-	-	-	-	V	-	-	-	-	V	V
1.80. Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումը և լիցենզավորումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	-
1.81. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների գների կարգավորումը	-	V	-	V	V	V	-	V	-	V	-	-	-	-	V	V
1.82. Արժեթղթերի պահառությունը, արժեթղթերի պահառության համակարգը	-	V	V	V	-	-	-	-	-	V	-	-	-	-	V	V
1.83. Պահառուներին ներկայացվող պահանջները	-	V	V	V	-	-	-	-	-	V	-	-	-	-	V	V
1.84. Արժեթղթերի հաշիվները	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	V	V
1.85. Պարտադիր կենտրոնացված ռեեստրավարման ենթակա արժեթղթերը	-	V	-	V	-	-	V	-	-	V	-	-	-	-	V	V
1.86. Սեփականության իրավունքի փոխանցման պահը	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	V	V

1.87. Սեփականատերերի ցուցակի տրամադրումը թողարկողին	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	-	-	V	V
1.88. Արժեթղթերի հաշվառկային համակարգը, նրա անդամները	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.89. Արժեթղթերի հաշվառկային համակարգի գործառնական ռիսկերի կառավարումը	-	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.90. Կենտրոնական դեպոզիտարիային տրված փոխանցման հանձնարարականների անվերադարձելիությունը	-	V	-	V	V	V	-	V	-	V	-	V	V	-	V	V
1.91. Վերջնահաշվարկը, վերջնահաշվարկի կատարման ապահովումը	-	V	-	V	V	V	-	V	-	V	-	V	V	-	V	V
1.92. Հաշվարկային համակարգի անդամի սնանկության հատուկ կանոնները	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.93. Կենտրոնական դեպոզիտարիայի սնանկությունը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V
1.94. Կենտրոնական բանկի կողմից պատասխանատվության միջոցներ կիրառելը	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.95. Պատասխանատվությունը գնային չարաշահումների համար	-	V	-	V	V	V	V	V	-	-	-	-	-	-	-	-
1.96. Հսկող անձանց պատասխանատվությունը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.97. Գործարար ծրագիրը	V	V	V	V	-	-	V	-	-	-	V	V	V	V	V	V
1.98. Մասնագիտական որակավորման պահանջը, մասնագիտական որակավորումից զրկելը	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.99. Որակավորված մասնագետներ ունենալու, նրանց կողմից պաշտոններ վարելու նկատմամբ պահանջը	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
1.100. Ղեկավարների նկատմամբ պահանջները	V	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	V	V	V
1.101. Նշանակալից մասնակցությունը	V	V	V	V						V	V	V	V	V	V	V
1.102. Փոխկապակցված անձինք	V	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V	V
II. Ընդհանուր տնտեսական օրենսդրություն և քաղաքացիահրավական հարաբերություններ																
1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք																
1) Իրավաբանական անձինք: Հիմնական դրույթներ	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
2) Ընդհանուր դրույթներ տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների մասին	-	V	-	V	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
3) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	-	V	-	V	V	V	V	V	-	-	-	-	-	-	-	-
4) Բաժնետիրական ընկերություն	-	V	-	V	V	V	V	V	-	V	V	V	V	V	V	V
5) Ոչ առևտրային կազմակերպություններ	-	V	-	-	V	V	V	V	-	-	-	-	-	-	-	-
6) Արժեթղթեր: Հիմնական դրույթներ	-	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
7) Արժեթղթերի տեսակները	-	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
8) Ընդհանուր դրույթներ սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների մասին	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	-	-	V	V	
9) Ընդհանուր դրույթներ գրավի մասին	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
10) Պարտավորության հասկացությունը և կողմերը	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
11) Պարտավորություններ կատարելը	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
12) Պարտավորությունների կատարման ապահովումը	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
13) Անձանց փոփոխվելը պարտավորության մեջ	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
14) Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
15) Պարտավորությունները դադարելը	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
16) Պայմանագիր. հասկացությունը և պայմանները	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
17) Պայմանագիր կնքելը	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
18) Պայմանագիր փոփոխելը և լուծելը	-	V	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
19) Հանձնարարություն	-	V	V	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
20) Կոմիսիա	-	V	V	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
21) Գործակալություն	-	V	V	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
22) Չեկերով հաշվարկներ	-	V	V	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
23) Գույքի հավատարմագրային կառավարում	-	V	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-	-
24) Համատեղ գործունեություն	-	V	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-	-
2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը																
1) Ընդհանուր դրույթներ բաժնետիրական ընկերությունների մասին	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
2) Բաժնետիրական ընկերության ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը	-	V	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
3) Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթեր, ընկերության զուտ ակտիվները	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
4) Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
5) Ընկերության շահութաբաժինները	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
6) Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրը	V	V	-	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V	V
7) Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը ընկերության կողմից	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
8) Խոշոր գործարքներ	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
9) Ընկերության գործարքներում շահագրգռվածություն	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
10) Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
11) Բաժնետիրական ընկերության խորհուրդը և գործադիր մարմինը	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
12) Բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
13) Հաշվառումը և հաշվետվությունները, բաժնետիրական ընկերության մասին տեղեկությունները	V	V	V	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
3. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը																
1) Ընդհանուր դրույթներ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ստեղծումը	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարումը	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմակերպումը և լուծարումը	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
III. Հաշվապահական հաշվառման օրենսդրություն և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (այսուհետ՝ ՀՀՄՍ), հարկային օրենսդրություն																
1) Ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը	-	V	V	V	-	-	V	-	-	-	-	V	V	-	V	V
2) Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3) Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
4) Կազմակերպության ղեկավարի իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
5) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, դրա նշանակությունը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
6) Ներդրումային ընկերության ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը, այդ հաշվետվությունների պոտենցիալ սպառողները/օգտագործողները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7) Համախմբված հաշվետվությունների կազմման դեպքերը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8) Հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
9) Ներդրումային ընկերությունների պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտման համար	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10) Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V

11) Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
12) Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
13) Հաշվապահական հաշվառման գրանցամատյանները	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
14) Ստորագրության իրավունքը հաշվապահական հաշվառման փաստաթղթերում	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
15) Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
16) Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
17) Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
18) Ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
19) Ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, դրա կիրառման մասին հրահանգը	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
20) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՍՍ1	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
21) «Պաշարներ» ՀՀՍՍ2	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
22) «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՍՍ7	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
23) «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները և սխալներ» ՀՀՍՍ 8	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
24) «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՍՍ 10	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
25) «Շահութահարկ» ՀՀՍՍ12	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
26) «Հիմնական միջոցներ» ՀՀՍՍ16	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
27) «Վարձակալություն» ՀՀՍՍ17	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
28) «Հասույթ» ՀՀՍՍ18	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
29) «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՍՍ20	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
30) «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՍՍ21	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
31) «Փոխառության ծախսումներ» ՀՀՍՍ23	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
32) «Կապակցված կողմերի բացահայտում» ՀՀՍՍ24	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
33) «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՍՍ 32	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
34) «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՍՍ 34	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
35) «Ակտիվների արժեզրկում» ՀՀՍՍ 36	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
36) «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՍՍ 37	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
37) «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՍՍ 38	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
38) «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՍՍ 39	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
39) «Ներդրումային գույք» ՀՀՍՍ 40	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
40) «Բաժնային արժեթղթերի վրա հիմնված վճարում» ՖՀՍՍ 2	-	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
41) Հարկերի և հարկային արտոնությունների տեսակները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
42) Հարկ վճարողների իրավունքները, պարտականությունները և հսկողությունը հարկերի վճարման նկատմամբ	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
43) Հարկային պարտավորություններից ավելի բյուջե վճարված գումարները հարկ վճարողին վերադարձնելու կարգը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
44) Հարկվող սուբյեկտները և հարկվող օբյեկտը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
45) Համախառն եկամուտը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
46) Համախառն եկամտի նվազեցումները	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
47) Ոչ ռեզիդենտի հարկումը	-	V	V	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
IV. Գործնական խնդիրներ	-	V	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	V	V
V. Այլ																
1) ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և այլ խնդիրներ	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
2) ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները և վերահսկողությունը	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
3) Ներքին հսկողության համակարգը, խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավունքները և պարտականությունները պատշաճ ներքին հսկողության համակարգ ապահովելու գործում,	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V	-
4) Ներդրումային ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման դերը	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5) Խորհրդի փոխհարաբերությունները ներքին աուդիտի ստորաբաժանման հետ (ներդրումային ընկերության դեպքում)	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6) Խորհրդի (դիտորդ խորհրդի) նիստերը, խորհրդին (դիտորդ խորհրդին) կից հանձնաժողովները	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
7) Խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
8) Խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամների նկատմամբ հնարավոր կիրառվող պատասխանատվության միջոցները	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
9) Շահութաբաժինների բաշխում, կանոնադրական հիմնադրամի նվազեցում	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
10) Գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքում	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V	-
11) Ներքին տեղեկատվական համակարգը, խորհրդին ներկայացվող հաշվետվությունները	V	V	V	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
12) Անկախ աուդիտորական ընկերության հիմքերը	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
13) Ռազմավարության մշակման հիմնական սկզբունքները	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
14) Գործադիր մարմնի աշխատանքի գնահատման և վերահսկման սկզբունքները	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
15) Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրությունը	V	V	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V	-
16) Անձնակազմի կառավարման քաղաքականությունը, դրա նշանակությունը, խորհրդի իրավունքները և պարտականությունները անձնակազմի կառավարման գործում	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V	-
17) Գործունեության պլանավորման, գնահատման և որոշումների կայացման հիմնական սկզբունքները	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
18) Ներդրումային ընկերության (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) գործունեությանը բնորոշ ռիսկերի տեսակները	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
19) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առանձնահատկությունները	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
20) Կասկածելի գործառնությունների ղադրեցումը և կասեցումը	V	V	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	-	-	-
21) Ներդրումային ընկերության միջոցների տեղաբաշխման հնարավոր ուղիները, գործառնությունների տեսակները, ներդրումային ընկերության մրցունակությունը միջոցների տեղաբաշխման տեսանկյունից	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
22) Օգտագործվող վճարահաշվարկային համակարգերը, դրանց առանձնահատկությունները, դրանց անվտանգության ապահովման նախապայմանները	V	-	-	-	-	-	-	-	-	-	V	-	V	V	-	V
23) Մարքեթինգային ռազմավարություն/ քաղաքականություն	V	V	-	V	-	-	V	-	-	-	V	-	-	V	-	-
24) Ռիսկերի կառավարում	V	V	-	V	-	-	V	-	-	-	V	V	-	V	V	-
VI. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և ներդրումային ֆոնդերի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտեր																
«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V

Հավելված 7

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____ գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____:

(նշել կազմակերպության տեսակը, անվանումը և ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշված անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Կազմակերպության կառավարման մարմնի իրավասու անձ

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__» _____ 20__ թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել կարգավորվող շուկայի օպերատորի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում լիցենզավորման և գրանցման ընթացակարգերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասը, 108-րդ հոդվածը, 110-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 116-րդ հոդվածի 2-րդ մասը, 221-րդ հոդվածի 1-ին մասը, 222-րդ հոդվածի 14-րդ մասը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 հուլիսի 2014 թ., N 198-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 198-Ն որոշմամբ

«ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/01

Բ Ա Ժ Ի Ն Ի
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
1) Հայաստանի Հանրապետության տարածքում կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) գրանցման և լիցենզավորման կարգը,
2) օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)[1], 15.08.2014):

3) օպերատորի երեք տարվա գործարար ծրագրի ձև և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,
4) օպերատորի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները և տեղեկությունները:
5) օպերատորի տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների և հուսալիության չափանիշները,
6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող կանոնադրություններում, ղեկավարների կազմում, օպերատորի շուկայի կանոններում կատարված փոփոխությունների գրանցման կարգը,

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրման միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը (բացառությամբ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի էֆ» ֆորմատով՝ բացառությամբ գործարար ծրագրին կից աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել ֆորմատով: Օպերատորի գործարար ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

3. Նոր ստեղծվող օպերատորի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

4. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրերի ձևերի) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

5. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

օպերատորի անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	Ֆայլի ընդլայնումը

Օրինակ՝

ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադրական փոփ.	_	250913	.	pdf

6. Գործող օպերատորի կանոնադրությունը (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ է ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

7. Նոր ստեղծվող օպերատորի վրա սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, օպերատորը երբ արդեն միացված է Սի-Բի-էյ-նեթ համակարգին և ստացել է անվտանգության համապատասխան հավաստագրերը, Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունը կրկին ներկայացնում է Կենտրոնական բանկ ՍԻ-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով «Փի Դի էֆ» ֆորմատով էլեկտրոնային-թվային ստորագրությամբ համապատասխան ստորագրությունը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Սույն կանոնակարգով նախատեսված կարգով Կենտրոնական բանկ ներկայացված օպերատորի կանոնադրությունը (դրանցում փոփոխությունները, լրացումները) տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունը (դրանում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գրանցված կանոնադրությունը (դրանցում փոփոխությունները, լրացումները) տրամադրվում է համապատասխան անձին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Նոր ստեղծվող օպերատորի համար սույն կետով սահմանված հնգօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրության էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

9. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում, հայերեն և ոչ

հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

10. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

11. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:

12. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

13. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշները կիրառվում են հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) Եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,
2) Եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշներ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,
3) Եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշներ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

14. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն.

1) հաշվապահական հաշվառման այն ստանդարտների համապատասխան, որոնք «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս և ներկայացնելիս, կամ
2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

15. Սույն կանոնակարգով պահանջվող օտարերկրյա իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին կից աուդիտորական եզրակացությունները ներկայացվում են դրանց առկայության դեպքում, բացառությամբ օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար իրավաբանական անձանցից պահանջվող ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող աուդիտորական եզրակացությունների:

16. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացվի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և/կամ վերահսկողական նպատակներից ելնելով՝ կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

18. Կենտրոնական բանկի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դիմումի, միջնորդագրի կամ ցանկացած այլ միջնորդության քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

19. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի համալրումը (կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացումը) Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում օպերատորի հիմնադիրները (օպերատորը) Կենտրոնական բանկ են ներկայացնում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

20. Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ օպերատորի գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Կենտրոնական բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***«հանձնաժողով»***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
3) ***«Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ»***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ այլ օրենքների համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
4) ***«ֆինանսական խումբ (միություն)»***՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,
5) ***«ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ֆոնդ, Բյուրո, վճարահաշվարկային կազմակերպություն,
6) ***«հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
7) ***«անձնագրի տվյալներ»***՝ անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
8) ***«ֆինանսական հաշվետվություններ»***՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

22. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II
ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3
ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

23. Օպերատորի պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝
   ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է հիմնադիր ժողովի կողմից լիազորված անձի կողմից վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի, ընդ որում, դիմումի մեջ ներառվում է օպերատորի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,
   բ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի,
   գ. օպերատորի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի, իսկ ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, ընդ որում, օպերատորի ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ևս ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի,

դ. օպերատորի բաժնետերերի (մասնակիցների) վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանքը) ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,

ե. շուկայի կանոնների նախագծերը (ներառյալ՝ կանոնների ներդրման անհրաժեշտության հիմնավորումը) կցվում են շուկայի կանոնների գրանցման միջնորդագրին համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,

զ. օպերատորի ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

է. օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց նշանակալից մասնակցության նախնական համաձայնություն ստանալու համար ներկայացվում են սույն կանոնակարգի 3-րդ բաժնով սահմանված փաստաթղթերը,

ը. օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 16-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա նաև նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

3) սույն կանոնակարգով սահմանված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունն ամրագրող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է օպերատորի գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորությունն ամրագրող փաստաթուղթ տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը:

24. Օպերատորին լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի:

25. Օպերատորին գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:

ԳԼՈՒԽ 4
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

26. Լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում օպերատորը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու, ինչպես նաև կորստի մասին ԿԲ ինտերնետային կայքում հրապարակելու համար: Դիմումին կցվում է լիցենզիայի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում), լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը, եթե օրենսդրությամբ նախատեսված է պետական տուրքի վճարում:

27. Կենտրոնական բանկը լիցենզիայի (գրանցման վկայականի) կրկնօրինակը համապատասխան անձին տալիս է նրա կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո տասնօրյա ժամկետում:

28. Կորած լիցենզիան (գրանցման վկայականը) գտնելու դեպքում օպերատորը գտնված լիցենզիան (գրանցման վկայականը) վերադարձնում է Կենտրոնական բանկ:

29. Լիցենզիայի (գրանցման վկայականի) կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

30. Լիցենզիայի (գրանցման վկայականի) կրկնօրինակի կորստի, ոչնչացման, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի (գրանցման վկայականի) նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5
ԼԻՑԵՆԶԻԱՆ (ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

31. Օրենքով սահմանված հիմքերով օպերատորի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում օպերատորը եռօրյա ժամկետում՝ կից գրությամբ լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

32. Օպերատորի լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու մասին որոշումը կայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում օպերատորը կից գրությամբ գրանցման վկայականը, ինչպես նաև օպերատորի ֆիրմային անվանման գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

ԲԱԺԻՆ III
ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 6
ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող օպերատորի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ծայնի իրավունք տվող մասնակցության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավելացման դեպքում, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի,
2) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը,
3) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ օպերատորում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում.
6) նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համապատասխանաբար սույն կանոնակարգի Հավելված 11-ի և Հավելված 12-ի:

34. Եթե իրավաբանական անձ հանդիսացող ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում (միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից) սույն կանոնակարգի 0-րդ կետով ներկայացված փաստաթղթերը (բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի), ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

35. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից Կենտրոնական բանկ չեն ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ.Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

36. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ չի ներկայացնում սույն կանոնակարգի 0-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը, եթե վերջիններս արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել կազմակերպության գրավոր համաձայնությունը այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով կիրառելու համար:

37. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ օպերատորի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող կամ ծայնի իրավունք տվող մասնակցության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասին

համապատասխան ավելացման մտադրություն ունեցող ֆիզիկական անձը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ օպերատորում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համապատասխանաբար սույն կանոնակարգի Հավելված 11-ի և Հավելված 12-ի:

38. Օպերատորի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար, համապատասխան օպերատորի միջնորդությամբ դիմում է Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի,
2) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ օպերատորում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

ԳԼՈՒԽ 7
ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

39. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան օպերատորի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի,
2) կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը,
3) իրավաբանական անձի կանոնադրությունը ոչ ռեզիդենտ անուղղակի նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ, ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց (այդ թվում՝ այն իրավաբանական անձանց, որոնցում օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է նշանակալից մասնակից) մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի և իր հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց մասին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի,
6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ օպերատորում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն:

40. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 4-րդ ենթակետով պահանջվող հաշվետվությունների, եթե դրանք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել գրավոր համաձայնություն այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով օգտագործելու համար:

41. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետի բոլոր ենթակետերով պահանջվող փաստաթղթերը՝ բացառությամբ 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերի: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ.Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

42. Ֆիզիկական անձը նորաստեղծ կամ գործող օպերատորում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան օպերատորի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ օպերատորում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն,
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 11-ի և Հավելված 12-ի:

43. Օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար, համապատասխան օպերատորի միջնորդությամբ դիմում է Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 8
ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

44. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն օպերատորում կամ ավելացնում է իր մասնակցությունը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանաչափերից ավելի՝ ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյակ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

45. Նշանակալից մասնակիցը ձեռք բերված բաժնետոմսերի (բաժնեմասերի)՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 7-րդ մասի օտարման մասին 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի:

ԳԼՈՒԽ 9
ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

46. Եթե ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 6-րդ և 7-րդ գլուխներով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

47. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում միաժամանակ մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար ներկայացվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ օպերատորում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով օպերատորում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

48. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունն օպերատորի կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության միջնորդագիրը (դիմումը):

49. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

50. Եթե օպերատորը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող է հանգեցնել օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա օպերատորը այդպիսի տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահում Կենտրոնական բանկին:

ԲԱԺԻՆ IV
ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 10
ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

51. Օպերատորը մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունները).

1) օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,

52. եթե օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները).

1) խմբի (միության) կառուցվածքը,

2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,

53. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է.

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ

2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

54. Եթե սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա հաշվետվությունները և տեղեկությունները հայերենով, ռուսերենով կամ անգլերենով տեղակայված են ինտերնետային կայքում, ապա հաշվետվությունների կամ տեղեկությունների փոխարեն Կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ինտերնետային կայքի (տնային էջի) հասցեն մինչև տվյալ հաշվետվությունները կամ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը: Ընդ որում, սույն կանոնակարգով սահմանված պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները (տեղեկությունները) ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրելու դեպքում իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող հաշվետվությունների (տեղեկությունների) առկայությունն առնվազն մեկ տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ V
ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 11
ՕՊԵՐԱՏՈՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

55. Օպերատորը պետք է ունենա՝

1) սեփականության իրավունքով, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,

2) կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց,

3) պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի ընկերության ամբողջ տարածքում և միացված լինի համապատասխան կազմա-

կերպությանը, ինչպես նաև տարածքում պետք է տեղադրված լինի պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչ ըստ տարածքի մակերեսի, իսկ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին ու պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով,

4) էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,
5) օպերատորի գործունեության ծավալին և բարդությանը համապատասխան առևտրային, տեղեկատվական և այլ համակարգեր,
6) տեղեկատվական համակարգերի (ներառյալ հեռակոմունիկացիոն համակարգը) գործունեության հետ կապված խնդիրների լուծման նախապայմաններ (անհրաժեշտ է ապահովել այնպիսի տեղեկատվական համակարգ, որի էլեկտրաէներգիայի մատակարարման աղբյուրն անկախ լինի ընդհանուր մատակարարման աղբյուրից: Առևտրային, տեղեկատվական համակարգի անխափան գործունեությունը պետք է ապահովված լինի նաև համակարգչային և տվյալների բազայի՝ մեկ այլ համակարգի առկայությամբ),
7) պայմանների ապահովում, որոնց ներքո տվյալները մուտք են գործում տեղեկատվական համակարգ և վտանգի առկայության դեպքում տալիս են ազդանշան: Տվյալների օգտագործման պայմաններ (բոլոր տվյալները, որոնց մուտքը համակարգ թույլատրված է, պետք է մուտքագրվեն տվյալների բազա, և այն անձանց վերաբերյալ տվյալներ, որոնք այդ տվյալների համակարգ մուտքին հավանություն են տալիս),
8) պայմաններ, որոնք տեղեկատվական համակարգում կապահովեն տվյալների բազայի կանոնավոր ստեղծումը և դրանց՝ 10 տարի ապահով պահպանումը շուկայի օպերատորի տարածքից դուրս,
9) կանոնավոր վերահսկողություն տեխնիկական և համակարգչային ծրագրերի համակարգերի գործունեության նկատմամբ (ժամանակին պետք է թարմացվեն առկա տեխնիկական և համակարգչային ծրագրերը):

56. Նոր ստեղծվող օպերատորը համարվում է սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով պարտավորվել է օպերատորի պետական գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, օպերատորը սահմանված կարգով գրանցվելուց և լիցենզավորվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կենտրոնական բանկ է ներկայացնում տվյալ տարածքի նկատմամբ իր սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

57. Օպերատորի կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թ. հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգով սահմանված տեղեկատվական համակարգերի պահանջներին:

58. Օպերատորը կարող է սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կնքել ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ պատահարները՝ օպերատորին սեփականության, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի և այլ արժեքավոր գույքի՝ հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը:

59. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:

60. Այն դեպքում, երբ սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ապահովագրությունն իրականացնում է ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը, ապա նա պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ «A-»
- Մուդիզ «A3»
- Ա. Մ. Բեստ «A-»
- Ֆիտչ «A-»:

Բ Ա Ժ Ի Ն VI
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 12
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

61. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող օպերատորը փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում՝

1) ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման,
2) օպերատորի կանոնադրությունում կատարված փոփոխությունները: Ընդ որում, սույն ենթակետում սահմանված կանոնադրությունների փոփոխությունները, լրացումները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 17-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
3) օպերատորի շուկայի կանոնների փոփոխությունները (լրացումները):

62. Օպերատորը կանոնադրությունում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ օպերատորի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
2) օպերատորի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ օպերատորի կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
3) օպերատորի փոփոխված կանոնադրությունը,
4) եթե կանոնադրության փոփոխությունը առաջացնում է լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև կից ներկայացվում են հին լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը և պետական տուրքի վճարման անդորրագիրը,
5) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է կանոնադրական կապիտալի ավելացման հետ, օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում օպերատորի կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթուղթը:

63. Եթե օպերատորի կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

1) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը,
2) Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջնորդագրում նշվում է օպերատորի հայտարարությունն այն մասին, որ օպերատորի կողմից գործածվող տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների հուսալիության չափանիշները համապատասխանում են սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված չափանիշներին, իսկ անհնարինության դեպքում պարտավորագիր առ այն, որ գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կապահովի դրանց համապատասխանությունը:

64. Եթե օպերատորի կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է օպերատորի ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա, բացի սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված փաստաթղթերից, Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև ֆիրմային անվանման գրանցման հայտ և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

65. Օպերատորի շուկայի կանոններում կատարված փոփոխությունները (լրացումները) Կենտրոնական բանկում գրանցելու համար օպերատորը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) կանոններում կատարված փոփոխությունները (լրացումները) գրանցելու մասին միջնորդագիր օպերատորի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,
2) օպերատորի շուկայի փոփոխված կանոնների նախագծերը (ինչպես փոփոխությունների (լրացումների) նախագիծը, այնպես էլ փոփոխությունները (լրացումները) ներառող կանոնները),

3) կանոնների փոփոխությունների (լրացումների) ներդրման անհրաժեշտության հիմնավորումը (մանրամասն),
4) քաղվածք դիտորդ խորհրդի արձանագրությունից օպերատորի շուկայի կանոններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու վերաբերյալ,
5) օպերատորի շուկայի կանոնների փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները (առկայության դեպքում):

66. Փոփոխությունները գրանցվում են, կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

67. Գրանցման վկայականի և (կամ) լիցենզիայի նոր օրինակը վարկային կազմակերպությանը տրամադրվում է կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 13
ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

68. Օպերատորը լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում օպերատորի տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների և հուսալիության՝ սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված չափանիշների փոփոխությունների վերաբերյալ գրություն՝ ներկայացնելով նաև օպերատորի կողմից՝ սույն կանոնակարգի գլուխ 11-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը:

69. Օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 18-րդ Հավելվածում նշված գործարար ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել օպերատորի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

ԳԼՈՒԽ 14
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

70. Օպերատորը պարտավոր է բավարարել սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջները սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ մինչ այդ պարտավոր են բավարարել հետևյալ պահանջները.

1) Օպերատորը պետք է ունենա՝
   ա. սեփականության իրավունքով, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,
   բ. կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց,
   գ. պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ),
   դ. էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,
   ե. օպերատորի գործունեության ծավալին և բարդությանը համապատասխան առևտրային, տեղեկատվական և այլ համակարգեր,
   զ. տեղեկատվական համակարգերի (ներառյալ հեռակոմունիկացիոն համակարգը) գործունեության հետ կապված խնդիրների լուծման նախապայմաններ (անհրաժեշտ է ապահովել այնպիսի տեղեկատվական համակարգ, որի էլեկտրաէներգիայի մատակարարման աղբյուրն անկախ լինի ընդհանուր մատակարարման աղբյուրից: Առևտրային, տեղեկատվական համակարգի անխափան գործունեությունը պետք է ապահովված լինի նաև համակարգչային և տվյալների բազայի՝ մեկ այլ համակարգի առկայությամբ),
   է. պայմանների ապահովում, որոնց ներքո տվյալները մուտք են գործում տեղեկատվական համակարգ և վտանգի առկայության դեպքում տալիս են ազդանշան: Տվյալների օգտագործման պայմաններ (բոլոր տվյալները, որոնց մուտքը համակարգ թույլատրված է, պետք է մուտքագրվեն

տվյալների բազա, և այն անձանց վերաբերյալ տվյալներ, որոնք այդ տվյալների համակարգ մուտքին հավանություն են տալիս),

ը. պայմաններ, որոնք տեղեկատվական համակարգում կապահովեն տվյալների բազայի կանոնավոր ստեղծումը և դրանց՝ 10 տարի ապահով պահպանումը շուկայի օպերատորի տարածքից դուրս,

թ. կանոնավոր վերահսկողություն տեխնիկական և համակարգչային ծրագրերի համակարգերի գործունեության նկատմամբ (ժամանակին պետք է թարմացվեն առկա տեխնիկական և համակարգչային ծրագրերը):

2) Օպերատորը կարող է սույն կետի 1-ին ենթակետի «բ», «գ», «դ» պարբերություններով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կնքել ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ պատահարները.

Ներդրումային ընկերությանը, նրա մասնաճյուղին, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին սեփականության, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի և այլ արժեքավոր գույքի հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը:

Նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:

Ընդ որում՝ վերոնշյալ ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ «A-»
- Մուդիզ «A3»
- Ա. Մ. Բեստ «A-»
- Ֆիտչ «A-»:

Հավելված 1
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՊ ԹԻՎ XXXX

ԼԻՑԵՆԶԻԱ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Իրավաբանական անձի անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ ----------

Տրված է «__» _____ 20__ թ.

Հավելված 2
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի_____

Մենք (Ես) ՝ _____
(*օպերատորի անվանումը, տիպը (խումբը) և կազմակերպահիրավական ձևը)*
ստեղծումը նախաձեռնող ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել օպերատորի պետական գրանցման և գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել օպերատորի գործունեության լիցենզիա:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Առդիր՝ _____ էջ:

Ներկայացնում ենք (եմ) ստեղծվող օպերատորի կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. փոստի հասցե)
_____:

Ստորև ներկայացնում ենք (եմ) նաև փոստային հասցեն, որով համաձայն ենք (եմ) ստանալ օպերատորի գործունեության լիցենզիան և գրանցման վկայականը՝

_____:

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական
(կազմակերպության անվանումը)
հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 5/01-ի 11-րդ գլխով սահմանված պահանջներին: Հայտարարում ենք նաև, որ օպերատորի տարածքի և տեխնիկական հագեցվածության չափանիշների հետ կապված փոփոխությունների դեպքերում պարտավոր ենք գրավոր տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, կամ

☐ Պարտավորվում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական
(կազմակերպության անվանումը)
հագեցվածության չափանիշները լիցենզավորվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 5/01-ի 11-րդ գլխով սահմանված պահանջներին և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում կներկայացվի նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Օպերատորի ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 3
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ԴԻՄՈՒՄ

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) լրիվ անվանումը)

համար բացել կուտակային հաշիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնելու համար:

Վճարման հանձնարարական տալու իրավունք ունի (ունեն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

Խնդրում ենք Կենտրոնական բանկի կողմից օպերատորի գրանցման և լիցենզավորման կամ գրանցման և լիցենզավորման մերժման, կանոնադրության փոփոխության գրանցման կամ գրանցման մերժման դեպքում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին առկա միջոցները փոխանցել հետևյալ հաշվին

_____
(բանկի անվանում, հաշվի համար)

_____
(դիմումատուի հայեցողությամբ այլ նշումներ)

Կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի (անձանց) անունը, ազգանունը, ստորագրությունը

«__» _____ 20__ թ.

Հավելված 4
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

Կենտրոնական բանկի նախագահի
_____ -ին

Միջնորդագիր

Հարգելի _____

Խնդրում ենք _____ գրանցել (դիտորդ խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____: Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշված անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը համապատասխանում է իսկականին:

Օպերատորի գործադիր տնօրեն՝

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__» _____ 20__ թ.

Հավելված 5
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՂԵԿԱՎԱՐԻ (ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը
☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները**
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար Դուք պետք է հանդիսանաք)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)*(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)*
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 կետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրենության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ o տնօրենության (վարչության, գործադիր մարմնի) անդամ o գլխավոր հաշվապահ o գլխավոր հաշվապահի տեղակալ o ներքին աուդիտի ղեկավար o ներքին աուդիտի անդամ o բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար) o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահի (ղեկավարի) տեղակալ o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի անդամ o մասնաճյուղի կառավարիչ (գործադիր տնօրեն) o մասնաճյուղի գլխավոր հաշվապահ o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար o օպերատորի վերահսկող ծառայության անդամ o ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ o պատասխանատու ակտուար o ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ o ֆոնդի պահառուի ղեկավար o ֆոնդի պահառուի աշխատակից o բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատող
2.2. Նշեք՝ o Բանկի ներքին դիտարկումների ստորաբաժանման և պաշտոնի անվանումը, եթե հանդիսանում եք այդ ստորաբաժանման աշխատակից o Կիրառելի չէ, եթե չեք հանդիսանում ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:
2.3. Նկարագրեք Ձեր իրավասությունների և պատասխանատվությունների ոլորտները որպես ղեկավար ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

2.4. Նշեք, եթե հանդիսանում եք
- o կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում
- o կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում
- o պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում
- o պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում

3. Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն, հայրանուն

3.2. Սեռ՝
- o արական
- o իգական

3.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4. Ծննդավայր

3.5. Քաղաքացիություն

3.6. Նշեք՝
- o Անձնագրի տվյալները
- o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
- o Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.7. Նշեք՝
- o Հանրային ծառայությունների համարանիշը
- o Կիրառելի չէ

3.8. Նշեք՝
- o Հաշվառման վայր
- o Փաստացի բնակության վայր

3.9. Նշեք հեռախոսահամար
- o բջջային
- o տնային

3.10. Էլեկտրոնային փոստի հասցե

3.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները և դրանք կրելու ժամանակաշրջանները:
Անուն, ազգանուն, հայրանուն
Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (_____ թ-ից մինչև _____թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

4.2. Ինչ լեզուների եք տիրապետում
- o հայերեն
- o անգլերեն
- o ռուսերեն
- o այլ (նշել լեզուն)

4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.4. Նշեք՝
Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից. վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար
- Ոչ
- Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.4. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1. Նշեք՝
- Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից
(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից:)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2. Նշեք՝

- Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:
- Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3. Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները:

(*Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)*

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը)	Անձնագրի տվյալները	Փոխկա-պակցվա-ծության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսա համար (բջջ. և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

7.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1. Նշեք՝
Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալները (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց):

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալներ	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսահամար (բջջ. և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2. Նշեք՝
- Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասները

10. Այլ փաստաթղթեր

10.1. Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:
- Այո
- Ոչ

11. Հավաստիացնում եմ, որ
ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկություններն արժանահավատ են և ամբողջական,
բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան իրավական ակտերով սահմանված հիմքերը:

Ամսաթիվ (օր/ամիս/տարի) *«__» _____ 20__ թ.*

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

Հավելված 6
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ (ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը		Պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, կապի միջոցները	Բաժնետոմսերի (բաժնեմասի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			Քանակը	Տոկոսային մեծությունը	Քանակը	Տոկոսային մեծությունը
1						
2						
..						
Ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Անունը, ազգանունը, բնակության վայրը		Անձնագրի սերիան և համարը	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			Քանակը	Տոկոսային մեծությունը	Քանակը	Տոկոսային մեծությունը
1						
2						
…						

Հավելված 7
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը)
_____
_____ օպերատորին
առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ «__» _____ 20__ թ.

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 8
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

Դիմում

Իրավաբանական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____
(նշվում է նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձի անվանումը)
կողմից
_____ օպերատորում _____
(նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի անվանումը) *(ուղղակի/անուղղակի)*
նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

ՄԱՍ 1.
Լրացվում է օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձ-մասնակցի կողմից

1. Իրավաբանական անձ-մասնակցի (կազմակերպության) տվյալներ

1.1. Անվանումը _____
1.2. Գտնվելու վայրը _____
1.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ համարը _____
(օր/ամիս/տարի)

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ _____
գումար *%*
այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____
գումար *%*

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) ձեռքբերման գինը _____
2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ շուկայական արժեքը _____

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

3.2. Նշել ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝
Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 3.3 կետը

3.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝
ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը/անվանումը _____
բ) Գտնվելու/բնակության վայրը
գ) Վարկի/ փոխառության գումարը _____ դ) Գրավի առարկան _____
ե) Վարկի/ փոխառության ստացման պայմանները և ժամկետները
զ) Ինչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի _____

3.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորվող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/մասնակցության չափը (%)
1.		
2.		

4. Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ
(Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

5. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցությունների վերաբերյալ
Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

6. Տեղեկություններ կազմակերպության ղեկավարների (խորհրդի նախագահ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն և գլխավոր հաշվապահ) վերաբերյալ
ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև Հավելված 5-ը (օպերատորի նշանակալից մասնակից հանդիսացող իրավաբանական անձի գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի համար Հավելված 5-ը պարտադիր է)

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)
1.		
2.		

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Կազմակերպության անվանումը, անձի անունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը	Գտնվելու (բնակության վայրը)	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

8. Տեղեկություններ նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի մասնակիցների վերաբերյալ

Մասնակիցների անվանումը/անունը, ազգանունը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

9. Այլ տեղեկատվություն

9.1. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր և ավելի ժամկետանց/չմարված պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

9.2. Արդյո՞ք կազմակերպության մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐
«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

9.3. Արդյո՞ք կազմակերպությունը պատրաստ է օպերատորի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն: Այո ☐ Ոչ ☐
«Այլ» պատասխան դեպքում ներկայացնել մանրամասները:

9.4. Արդյո՞ք օպերատորի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում Ձեր կողմից առաջարկվում է որևէ փոփոխություն: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

9.5. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն:

10. *Հավաստիացնում եմ, որ*

ա) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության,
բ) բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում ներկայացնում եմ իրավական ակտերով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը իմ միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին, ինչպես նաև Կանոնակարգի 51-րդ և 52-րդ կետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կանոնակարգով սահմանված ժամկետներից առնվազն 5 աշխատանքային օր առաջ ներկայացնել օպերատորին:

Տնօրենի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

ՄԱՍ 2
Լրացվում է օպերատորի կողմից

1. Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
_____կողմից
(նշվում է նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձի անվանումը)

_____ օպերատորի կանոնադրական կապիտալում
_____նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:
(ուղղակի կամ անուղղակի)

2. Հավաստիացնում ենք, որ _____ օպերատորի
(նշվում է օպերատորի անվանումը)
կանոնադրական կապիտալում օպերատորի մասնակցի՝ բաժնետոմսը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:
(Սույն կետը չի տարածվում օպերատորի բաժնետոմսը (բաժնետոմսը) նվիրատվությամբ ձեռք բերելու դեպքում)

Օպերատորի խորհրդի նախագահի կամ օպերատորի գործադիր տնօրենի կամ վարչության նախագահի (եթե այդ լիազորությունները վերապահված են նրան օպերատորի կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի կողմից) անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
(օր, ամիս, տարի)

Հավելված 9
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

Դիմում

Ֆիզիկական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Ես՝ _____, խնդրում եմ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը

_____կարգավորվող շուկայի օպերատորում նշանակալից
(նշվում է օպերատորի անվանումը)

մասնակցություն ձեռք բերելու համար:

ՄԱՍ 1.

Լրացվում է կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձ մասնակցի կողմից

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը

1. Ֆիզիկական անձի տվյալները

1.1. Անունը,ազգանունը,հայրանունը _____

1.2. Սեռը _____

1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի տվյալները _____

Հանրային ծառայությունների համարանիշը _____

1.7. Բնակության վայրը՝
հաշվառման վայր _____

փաստացի բնակության վայր _____
_____

1.8. Հեռախոսահամարը _____

1.9. Էլեկտրոնային փոստի հասցեն _____

1.10. Նշեք նախկինում Ձեր ունեցած բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանը.

Անունը, ազգանունը, հայրանունը	Դրանք կրելու ժամանակաշրջանը	
	Սկիզբ (օր/ամիս/տարի)	Ավարտ (օր/ամիս/տարի)

2. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

2.1. Ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բուհի գտնվելու վայրը	Բուհում սովորելու ժամանակաշրջանը (_____ թ-ից մինչև _____ թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը կամ միջազգային որակավորման մակարդակը
1.					
2.					
3.					
4.					

2.2. Ինչ լեզուների եք տիրապետում

- ○ Հայերեն
- ○ Անգլերեն
- ○ Ռուսերեն
- ○ Այլ (նշել լեզուն)

2.3. Վերջին 10 տարվա աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության տեսակ	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

2.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչվող՝ ֆինանսական համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, ովքեր անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե

- ○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձ չկա:

3. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (բաժնեմասեր)

3.1. Բաժնետոմսերի (բաժնեմասերի) ընդհանուր թիվը _____ _____
գումար *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____
գումար *%*

3.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնեմասի) ձեռքբերման գինը _____

3.3. Բաժնետոմսի (բաժնեմասի) ընթացիկ շուկայական արժեքը _____

4. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)

4.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4.2. Նշեք ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝
Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 4.3 կետը

4.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝

ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը/անվանումը _____

բ) Գտնվելու/բնակության վայրը _____

գ) Վարկի/փոխառության գումարը _____

դ) Գրավի առարկան _____

ե) Վարկի/փոխառության ստացման պայմանները և ժամկետները

զ) Ինչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի

4.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորվող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)
1.		
2.		

5. Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ
(Կենտրոնական բանկը կարող է պահանջել համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

6. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցությունների վերաբերյալ

6.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

Սույն կետում նշված անձանց համար լրացնել սույն կանոնակարգի Հավելված 11-ը:

6.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն

Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը	Գտնվելու (բնակության) վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

8. Այլ տեղեկատվություն

8.1. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք կամ ունեցել եք 30 օր և ավելի ժամկետանց/չմարված պարտավորություններ:
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ): Այո ☐ Ոչ ☐

8.2. Արդյո՞ք Ձեզ մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը:
«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները: Այո ☐ Ոչ ☐

8.3. Արդյո՞ք Դուք պատրաստ եք օպերատորի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն:
«Այլ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները: Այո ☐ Ոչ ☐

8.4. Արդյո՞ք օպերատորի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում Ձեր կողմից առաջարկվում է որևէ փոփոխություն:
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները: Այո ☐ Ոչ ☐

8.5. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկություն

9. Հավաստիացնում եմ, որ

ա) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

բ) բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում ներկայացնում եմ իրավական ակտերով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը իմ միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Անունը, ազգանունը _____

Ստորագրություն_____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

ՄԱՍ 2.

Լրացվում է օպերատորի կողմից

1. Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____
(նշվում է նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի անունը և ազգանունը)

կողմից

_____ օպերատորի կանոնադրական կապիտալում
(նշվում է օպերատորի անվանումը)

նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

2. Հավաստիացնում ենք, որ _____ օպերատորի կանոնադրական կապիտալում օպերատորի մասնակցի՝
(նշվում է օպերատորի անվանումը)

բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:

(Սույն կետը չի լրացվում օպերատորի մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) նվիրատվությամբ ձեռք բերելու դեպքում:)

Օպերատորի խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի
կամ վարչության նախագահի (եթե այդ լիազորությունները
վերապահված է նրանց օպերատորի կանոնադրությամբ
կամ ընդհանուր ժողովի կողմից) անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
(օր, ամիս, տարի)

Հավելված 10
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

Դիմում

Պետության կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____
(նշվում է պետության անվանումը)

կողմից _____ օպերատորում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:
(նշվում է օպերատորի անվանումը)

ՄԱՍ 1.

Լրացվում է օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ակնկալող պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնի կողմից

1. Արդյո՞ք օպերատորի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված տնտեսական ծրագրում Ձեր կողմից առաջարկվում է որևէ փոփոխություն:

☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

2. *Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*
Համաձայն ենք՝ մեր կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնի ղեկավարի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

ՄԱՍ 2.

Լրացվում է օպերատորի կողմից

1. Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____
(նշվում է պետության անվանումը)
կողմից _____ օպերատորի նշանակալից մասնակցություն
(նշվում է օպերատորի անվանումը)

ձեռք բերելու համար:

2. Հավաստիացնում ենք, որ _____ օպերատորի կանոնադրական կապիտալում
(նշվում է օպերատորի անվանումը)
օպերատորի մասնակցի՝ բաժնետոմսը (բաժնեմասը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:
(Սույն կետը չի լրացվում օպերատորի մասնակցի բաժնետոմսը (բաժնեմասը) նվիրատվությամբ ձեռք բերելու դեպքում:)

Օպերատորի խորհրդի նախագահի կամ օպերատորի գործադիր տնօրենի (եթե այդ լիազորությունները վերապահված են նրան օպերատորի կանոնադրությամբ)
անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
(օր, ամիս, տարի)

Հավելված 11
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Նշանակալից մասնակիցը

1.1. Անվանումը (անունը, ազգանունը) _____

1.2. Կազմակերպության անվանումը, որում մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն.

_____

2. Փոխկապակցված իրավաբանական անձի (կազմակերպության) տվյալներ

2.1. Անվանումը

2.2. Գտնվելու վայրը

2.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____համարը_____
օր/ամիս/տարի

3. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի նշանակալից մասնակիցների վերաբերյալ
(*ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել 3.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները)*

3.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

3.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

4. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահի և անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)
1.		
2.		

5. Այլ տեղեկատվություն

5.1. Արդյո՞ք փոխկապակցված իրավաբանական անձն ունի 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

5.2. Արդյո՞ք անձի մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-րդ մասի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐
«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

5.2(5.3)*. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

6. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*
Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 12
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Նշանակալից մասնակիցը

1.1. Անվանումը (անունը, ազգանունը) _____

1.2. Կազմակերպության անվանումը, որում մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն _____

2. Փոխկապակցված ֆիզիկական անձի տվյալներ
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն: Ֆիզիկական անձի համար փոխկապակցված անձինք են համարվում հայրը, մայրը, ամուսինը և չափահաս երեխաները:

2.1. Անունը, ազգանունը _____
2.2. Բնակության վայրը

2.3. Անձնագրի տվյալները _____ _____

2.4. Փոխկապակցվածության տեսակ _____

3. Այլ տեղեկատվություն

3.1. Արդյո՞ք ֆիզիկական անձն ունի 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

3.2. Արդյո՞ք անձի մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

3.3. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

4. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*
Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Օպերատորի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 13
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ես՝ _____
(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

տեղեկացնում եմ, որ_____ -ի
(օպերատորի անվանումը)
կանոնադրական կապիտալում ձեռք եմ բերել նշանակալից մասնակցություն (ավելացրել եմ իմ մասնակցությունն այնպես, որ ձայնի իրավունք տվող մասնակցությունս 20 (50, 75) տոկոս է (տոկոսից ավելի է)՝ կազմելով ____ տոկոս):

_____
(ֆիզիկական անձի համար՝ բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ գրանցման վայրը, կապի միջոցները):

Ստորագրությունը _____ Ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

Հավելված 14
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ես՝ _____
(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

տեղեկացնում եմ, որ իմ կողմից ձեռք բերված բաժնետոմսերի (բաժնեմասերի) օտարման արդյունքում _____-ում իմ՝ ձայնի իրավունք տվող մասնակցությունը
(օպերատորի անվանումը)
նվազում է 10 (20, 50, 75) տոկոսից (10 և ավելի տոկոսով կամ դադարում եմ հսկել _____*-ը)*՝
(օպերատորի անվանումը)
կազմելով ____ տոկոս:

_____
(ֆիզիկական անձի համար՝ բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ գրանցման վայրը, կապի միջոցները):

Ստորագրությունը _____ Ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

Հավելված 15
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ՕՊԵՐԱՏՈՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ)) ԳՐԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

_____
(օպերատորի անվանումը)

որոշում է կայացրել գրանցման ներկայացնել շուկայի կանոնները (կանոններում փոփոխությունները (լրացումները)):

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք շուկայի կանոնների նախագծերը (կանոններում փոփոխությունները (լրացումները)) և դրանց (դրանց փոփոխությունների (լրացումների)) ներդրման անհրաժեշտության հիմնավորումը:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավատացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել օպերատորի շուկայի կանոնները (կանոններում փոփոխությունները (լրացումները)):

Կից՝ __ էջ:

_____
(օպերատորի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը)

_____
(ստորագրություն)

«__» _____ 20__ թ.

Հավելված 16
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

Օպերատորի կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ կենտրոնական բանկում

Ընկերության պետական գրանցման համարը _____

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության լրիվ անվանումը

Հավելված 17
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

Օպերատորի կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է	ԳՐԱՆՑՎԱԾ է
_____ *(ընկերության իրավասու մարմնի անվանումը)*	ՀՀ կենտրոնական բանկում
__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ	__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ
	Ընկերության պետական գրանցման համարը
Փոփոխված է _____ *(իրավասու մարմնի անվանում)*	_____
__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ	
Փոփոխության հերթական համարը _____	
_____ *(իրավասու անձի պաշտոնը)*	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
_____ *(անուն, ազգանուն, ստորագրություն)*	_____ *(անուն, ազգանուն, ստորագրություն)*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության լրիվ անվանումը

Հավելված 18
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի Հավելվածի

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն հավելվածը սահմանում է օպերատորի կողմից Կենտրոնական բանկ երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը:

2. Գործարար ծրագիրը ամբողջական փաստաթուղթ է, որի խնդիրներն են.

1) ծառայել շահագրգիռ անձանց (մասնակիցներ, անդամներ, ներդրողներ, ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք)՝ որպես մի ամփոփ փաստաթուղթ, որով կարող են գնահատվել օպերատորի գործունեության բնույթը և առանձնահատկությունները,
2) օգնել օպերատորի ղեկավարներին պարզաբանելու, հստակեցնելու և հետազոտելու օպերատորի գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները և ծառայելու օպերատորի ղեկավարներին՝ որպես հիմք, որով կարող են գնահատվել օպերատորի փաստացի գործունեության արդյունքները և արդյունավետությունը,
3) օգնել օպերատորին հետևողականորեն իրականացնելու նախանշված նպատակները և խնդիրները պլանավորվող երեք տարիների ընթացքում,

4) Կենտրոնական բանկին ներկայացնել օպերատորի կողմից պլանավորված գործունեությունը, ինչը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա գնահատելու օպերատորի գործունեությունը և նրա ընտրած ռազմավարությունը:

3. Գործարար ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները.

1) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),
2) գնահատելիություն (կատարման արդյունքների գնահատման հնարավորություն),
3) համահունչություն (գործարար ծրագրի առանձին բաժինների և բաժինների գլուխների միջև պատճառահետևանքային կապի, գործարար ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն),
4) կոնկրետություն (վերնագրի՝ ըստ էության ներկայացում, վերնագրից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների՝ ըստ էության դիտարկում),
5) գործարար ծրագրի հիմքում կարող են դրվել նաև այլ, սակայն նշված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

4. Օպերատորը լիցենզավորման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս, ինչպես նաև մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում առաջիկա երեք տարիների իր գործարար ծրագիրը՝ համաձայն սույն հավելվածի: Ընդ որում, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 108-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարար ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներառվում է գործարար ծրագրի կազմում:

5. Գործարար ծրագիրը հաստատվում է օպերատորի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի կողմից:

6. Օպերատորի գործարար ծրագիրն առնվազն ներառում է օպերատորի կողմից ներդրվող առևտրային, տեղեկատվական և այլ համակարգերի, դիմողի կազմակերպական կառուցվածքի, նրա կողմից կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ տեխնիկական միջոցների, ինչպես նաև դրանց տնտեսական ցուցանիշների մանրամասն նկարագրությունը: Գործարար ծրագիրը պետք է ներառի նաև օպերատորի գործունեության նպատակները, խնդիրները և միջոցառումները, կատարվելիք գործարքների վերաբերյալ կանխատեսումները, ցուցակումների կանխատեսվող մակարդակը, կանխատեսվող հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի կանխատեսումը, կառավարման արդյունավետության ցուցանիշների կանխատեսումը (նշված կանխատեսումներն իրականցվում են առնվազն 3 տարվա կտրվածքով), ինչպես նաև գործարար ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը (նախորդ տարվա խնդիրների կատարողականի վերլուծությունը, խնդիրների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնական պատճառները):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում լիցենզավորման և գրանցման ընթացակարգերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 180-րդ հոդվածի 4-րդ մասը, 184-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասը, 185-րդ հոդվածի 2-րդ կետը, 193-րդ հոդվածի 5-րդ մասը, 221-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 222-րդ հոդվածի 14-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշմամբ հաստատված ««Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 հուլիսի 2014 թ., N 199-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 199-Ն որոշմամբ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/02

Բ Ա Ժ Ի Ն Ի
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
1) Հայաստանի Հանրապետության տարածքում Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման կարգը,
2) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)1, 15.08.2014):

3) Կենտրոնական դեպոզիտարիայի երեք տարվա գործարար ծրագրի ձև և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,
4) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները և տեղեկությունները,
5) Կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների և հուսալիության չափանիշները,
6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող կանոնադրություններում, ղեկավարների կազմում, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններում կատարված փոփոխությունների գրանցման կարգը,

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրման միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը (բացառությամբ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի էֆ» ֆորմատով, բացառությամբ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկանքների և գործարար ծրագրին կից աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել ֆորմատով: Կենտրոնական դեպոզիտարիայի գործարար ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

3. Նոր ստեղծվող Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի էֆ» ֆորմատով:

4. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրերի ձևերի) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

5. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	Ֆայլի ընդլայնումը
Օրինակ՝								
ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադրական փոփ.	_	250913	.	pdf

6. Գործող Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրությունը (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ է ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

7. Նոր ստեղծվող Կենտրոնական դեպոզիտարիայի վրա սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, Կենտրոնական դեպոզիտարիան, երբ արդեն միացված է Սի-Բի-էյ-նեթ համակարգին և ստացել է անվտանգության համապատասխան հավաստագրերը, Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունը կրկին ներկայացնում է Կենտրոնական բանկ ՍԻ-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով «Փի Դի էֆ» ֆորմատով էլեկտրոնային-թվային ստորագրությամբ համապատասխան ստորագրությունը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Սույն կանոնակարգով նախատեսված կարգով Կենտրոնական բանկ ներկայացված Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրությունը (դրանում փոփոխությունները, լրացումները) տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունը (դրանում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գրանցված կանոնադրությունը (դրանում փոփոխությունները, լրացումները) տրամադրվում է համապատասխան անձին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Նոր ստեղծվող Կենտրոնական դեպոզիտարիայի համար սույն կետով սահմանված հնգօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրության էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

9. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

10. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

11. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:

12. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, հաշվառման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

13. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշները կիրառվում են հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,
2) եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշներ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,
3) եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշներ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

14. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն.

1) հաշվապահական հաշվառման այն ստանդարտների համապատասխան, որոնք «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս և ներկայացնելիս, կամ
2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

15. Սույն կանոնակարգով պահանջվող օտարերկրյա իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին կից աուդիտորական եզրակացությունները ներկայացվում են դրանց առկայության դեպքում՝ բացառությամբ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար իրավաբանական անձանցից պահանջվող ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող աուդիտորական եզրակացությունների:

16. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացվի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և/կամ վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

18. Կենտրոնական բանկի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դիմումի, միջնորդագրի կամ ցանկացած այլ միջնորդության քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

19. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի համալրումը (կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացումը) Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի հիմնադիրները (Կենտրոնական դեպոզիտարիան) Կենտրոնական բանկ են ներկայացնում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

20. Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Կենտրոնական բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***«հանձնաժողով»***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
3) ***«Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ»***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ այլ օրենքների համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
4) ***«ֆինանսական խումբ (միություն)»***՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,
5) ***«ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ֆոնդ, Բյուրո, վճարահաշվարկային կազմակերպություն,
6) ***«հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
7) ***«անձնագրի տվյալներ»***՝ անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
8) ***«ֆինանսական հաշվետվություններ»***՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

22. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

23. Կենտրոնական դեպոզիտարիայի պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է հիմնադիր ժողովի կողմից լիազորված անձի կողմից վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի, ընդ որում, դիմումի մեջ ներառվում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի,

գ. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի, իսկ ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, ընդ որում, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ևս ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի,

դ. Կենտրոնական դեպոզիտարիայի բաժնետերերի (մասնակիցների) վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանքը) ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,

ե. կանոնների նախագծերը (ներառյալ՝ կանոնների ներդրման անհրաժեշտության հիմնավորումը) կցվում են կանոնների գրանցման միջնորդագրին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,

զ. Կենտրոնական դեպոզիտարիայի ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

է. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց նշանակալից մասնակցության նախնական համաձայնություն ստանալու համար ներկայացվում են սույն կանոնակարգի 3-րդ բաժնով սահմանված փաստաթղթերը,

ը. Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 16-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա նաև նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

3) սույն կանոնակարգով սահմանված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունն ամրագրող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորությունն ամրագրող փաստաթուղթ տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը:

24. Կենտրոնական դեպոզիտարիային լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի:

25. Կենտրոնական դեպոզիտարիային գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:

ԳԼՈՒԽ 4
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

26. Լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու, ինչպես նաև կորստի մասին ԿԲ ինտերնետային կայքում հրապարակելու համար: Դիմումին կցվում է լիցենզիայի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում), լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը, եթե օրենսդրությամբ նախատեսված է պետական տուրքի վճարում:

27. Կենտրոնական բանկը լիցենզիայի (գրանցման վկայականի) կրկնօրինակը համապատասխան անձին տալիս է նրա կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո տասնօրյա ժամկետում:

28. Կորած լիցենզիան (գրանցման վկայականը) գտնելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան գտնված լիցենզիան (գրանցման վկայականը) վերադարձնում է Կենտրոնական բանկ:

29. Լիցենզիայի (գրանցման վկայականի) կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

30. Լիցենզիայի (գրանցման վկայականի) կրկնօրինակի կորստի, ոչնչացման, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի (գրանցման վկայականի) նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5
ԼԻՑԵՆԶԻԱՆ (ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

31. Օրենքով սահմանված հիմքերով Կենտրոնական դեպոզիտարիայի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան եռօրյա ժամկետում՝ կից գրությամբ լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

32. Կենտրոնական դեպոզիտարիայի լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան կից գրությամբ գրանցման վկայականը, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի ֆիրմային անվանման գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

ԲԱԺԻՆ III
ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 6
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ձայնի իրավունք տվող մասնակցության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավելացման դեպքում, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի,
2) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը,
3) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
6) նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համապատասխանաբար սույն կանոնակարգի Հավելված 11-ի և Հավելված 12-ի:

34. Եթե իրավաբանական անձ հանդիսացող ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում (միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից) սույն կանոնակարգի 0-րդ կետով ներկայացված փաստաթղթերը (բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի), ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

35. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից Կենտրոնական բանկ չեն ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա. Մ. Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

36. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ չի ներկայացնում սույն կանոնակարգի 0-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը, եթե վերջիններս արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել կազմակերպության գրավոր համաձայնությունն այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով կիրառելու համար:

37. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող կամ ձայնի իրա-

վունք տվող մասնակցության «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավելացման մտադրություն ունեցող ֆիզիկական անձը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համապատասխանաբար սույն կանոնակարգի Հավելված 11-ի և Հավելված 12-ի:

38. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար, համապատասխան Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ դիմում է Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի,
2) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

ԳԼՈՒԽ 7

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

39. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի,
2) կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը,
3) իրավաբանական անձի կանոնադրությունը ոչ ռեզիդենտ անուղղակի նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ, ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց (այդ թվում՝ այն իրավաբանական անձանց, որոնցում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է նշանակալից մասնակից) մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի և իր հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց մասին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի,
6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն:

40. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնակարգի 4-րդ ենթակետով պահանջվող հաշվետվությունների, եթե դրանք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել գրավոր համաձայնություն այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով օգտագործելու համար:

41. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետի բոլոր ենթակետերով պահանջվող փաստաթղթերը՝ բացառությամբ 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերի: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա. Մ. Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

42. Ֆիզիկական անձը նորաստեղծ կամ գործող Կենտրոնական դեպոզիտարիայում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն:
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 11-ի և Հավելված 12-ի:

43. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար համապատասխան Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ դիմում է Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 8
ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

44. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն Կենտրոնական դեպոզիտարիայում կամ ավելացնում է իր մասնակցությունը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանաչափերից ավելի՝ ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյակ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

45. Նշանակալից մասնակիցը ձեռք բերված բաժնետոմսերի (բաժնեմասերի)՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 7-րդ մասի օտարման մասին 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի:

ԳԼՈՒԽ 9
ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

46. Եթե ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 6-րդ և 7-րդ գլուխներով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

47. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում միաժամանակ մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար ներկայացվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

48. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունը Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության միջնորդագիրը (դիմումը):

49. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

50. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող է հանգեցնել Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա Կենտրոնական դեպոզիտարիան այդպիսի տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահում Կենտրոնական բանկին:

Բ Ա Ժ Ի Ն IV
ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 10
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

51. Կենտրոնական դեպոզիտարիան մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

52. եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները).

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

53. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է.

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

54. Եթե սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա հաշվետվությունները և տեղեկությունները հայերենով, ռուսերենով կամ անգլերենով տեղակայված են ինտերնետային կայքում, ապա հաշվետվությունների կամ տեղեկությունների փոխարեն Կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ինտերնետային կայքի (տնային էջի) հասցեն մինչև տվյալ հաշվետվությունները կամ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը: Ընդ որում, սույն կանոնակարգով սահմանված՝ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները (տեղեկությունները) ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրելու դեպքում իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող հաշվետվությունների (տեղեկությունների) առկայությունն առնվազն մեկ տարվա ընթացքում:

Բ Ա Ժ Ի Ն V
ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 11
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

55. Կենտրոնական դեպոզիտարիան պետք է.

1) ունենա սեփականության իրավունքով, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,
2) ունենա կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց,
3) ունենա ծառայությունների մատուցման պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,
4) ունենա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի ընկերության ամբողջ տարածքում և միացված լինի համապատասխան կազմակերպությանը, ինչպես նաև տարածքում պետք է տեղադրված լինի պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչ՝ ըստ տարածքի մակերեսի, իսկ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին ու պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով,
5) ունենա էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,
6) ապահովի հաճախորդների ազատ մուտքը տարածք՝ հանձնարարագրերի, հարցումների և այլ փաստաթղթերի լրացման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հաշիվներից քաղվածքների և տեղեկանքների ստացման համար,
7) փաստաթղթային արժեթղթերի պահառություն իրականացնելու դեպքում ունենա պահոց և չհրկիզվող պահարան արժեթղթերի հավաստագրերի պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,
8) ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ՝ վարվող արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների և գործառնություններին վերաբերող փաստաթղթերի բնօրինակների պահպանման համար,
9) արժեթղթերի հաշվառման համակարգը էլեկտրոնային եղանակով վարելու դեպքում կիրառի այնպիսի համակարգ, որը կպաշտպանի արժեթղթերի հաշվառման ժամանակ օգտագործվող ողջ տեղեկատվությունը ոչ լիազորված օգտագործումից,
10) հնարավորություն ունենա օգտվելու արժեթղթերի էլեկտրոնային հաշվառման պահուստային համակարգից կամ իրականացնելու արժեթղթերի հաշվառումը թղթային եղանակով, այն դեպքում, երբ հիմնական ավտոմատացման համակարգը շարքից դուրս է եկել կամ այլ պատճառներով հնարավորություն չկա այն օգտագործել,
11) կիրառի արժեթղթերի հաշվառման միայն այնպիսի համակարգչային ծրագիր, որն ապահովում է օրենքով և սույն կետով սահմանված պահանջները,
12) տվյալների և տեղեկատվության կանոնավոր և անխափան փոխանակման հնարավորություն ունենա պահառուի և ռեեստրավարի, պահառուի և օտարերկրյա պահառուի միջև՝ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով,
13) պահպանի արժեթղթերի հաշվառմանն առնչվող փաստաթղթերը (գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը), ինչպես նաև տվյալների բազան առնվազն 70 տարի,
14) այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվառումը իրականացվում է թղթային եղանակով, Կենտրոնական դեպոզիտարիան շաբաթվա վերջում պետք է իրականացնի արժեթղթերի հաշվառման մատյաններում և արժեթղթերի հաշիվներում տվյալ օրվա մուտքագրած տվյալների կրկնօրինակումը և ի պահ հանձնի դրանք Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքի չհրկիզվող պահարանում,
15) սույն կետի 14-րդ ենթակետում նշված տվյալների բազայի կրկնօրինակները պետք է պատրաստվեն այնպիսի եղանակով, որ ցանկացած պահի հնարավոր լինի վերականգնել դրանց սկզբնական տեսքը: Տվյալների բազայի և արժեթղթերի հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակներ կարելի է

չպատրաստել, եթե համապատասխան ժամանակահատվածի ընթացքում տվյալների բազայում և արժեթղթերի հաշվառման հաշիվներում և հաշվառման գրքերում մուտքեր կամ գրառումներ չեն եղել,

16) Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքում Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակցի՝ աշխատանքի վայրից բացակայության դեպքում արժեթղթերի հաշվառմանն առնչվող բոլոր թղթային կրիչով փաստաթղթերը (ներառյալ՝ գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը) պետք է պահվեն չհրկիզվող պահարանում կամ պահոցում:

56. Նոր ստեղծվող Կենտրոնական դեպոզիտարիան համարվում է սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով պարտավորվել է Կենտրոնական դեպոզիտարիային պետական գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, Կենտրոնական դեպոզիտարիան սահմանված կարգով գրանցվելուց և լիցենզավորվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կենտրոնական բանկ է ներկայացնում տվյալ տարածքի նկատմամբ իր սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

57. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգով սահմանված տեղեկատվական համակարգերի պահանջներին:

58. Կենտրոնական դեպոզիտարիան կարող է սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կնքել ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ պատահարները՝ Կենտրոնական դեպոզիտարիային սեփականության, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի և այլ արժեքավոր գույքի՝ հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը:

59. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:

60. Այն դեպքում, երբ սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ապահովագրությունն իրականացնում է ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը, ապա նա պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

Ստանդարտ և Փուրզ	«A-»
Մուդիզ	«A3»
Ա. Մ. Բեստ	«A-»
Ֆիտչ	«A-»:

Բ Ա Ժ Ի Ն VI
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 12
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

61. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Կենտրոնական դեպոզիտարիան փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում՝

1) ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման,
2) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրությունում կատարված փոփոխությունները: Ընդ որում, սույն ենթակետում սահմանված կանոնադրությունների փոփոխությունները, լրացումները պետք է ունենան սույն կանոնակարգի հավելված 17-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
3) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների փոփոխությունները (լրացումները):

62. Կենտրոնական դեպոզիտարիան կանոնադրությունում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
2) Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
3) Կենտրոնական դեպոզիտարիայի փոփոխված կանոնադրությունը,
4) եթե կանոնադրության փոփոխությունն առաջացնում է լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև կից ներկայացվում են հին լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը և պետական տուրքի վճարման անդորրագիրը:
5) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է կանոնադրական կապիտալի ավելացման հետ, Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթուղթը:

63. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

1) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը,
2) Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջնորդագրում նշվում է Կենտրոնական դեպոզիտարիայի հայտարարությունն այն մասին, որ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գործածվող տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների հուսալիության չափանիշները համապատասխանում են սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված չափանիշներին, իսկ անհնարինության դեպքում պարտավորագիր՝ առ այն, որ գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կապահովի դրանց համապատասխանությունը:

64. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է Կենտրոնական դեպոզիտարիայի ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա բացի սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված փաստաթղթերից Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև ֆիրմային անվանման գրանցման հայտ և այլ պահանջվող փաստաթղթեր՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

65. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններում կատարված փոփոխությունները (լրացումները) Կենտրոնական բանկում գրանցելու համար Կենտրոնական դեպոզիտարիան ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) կանոններում կատարված փոփոխությունները (լրացումները) գրանցելու մասին միջնորդագիր՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,
2) Կենտրոնական դեպոզիտարիայի փոփոխված կանոնների նախագծերը (ինչպես փոփոխությունների (լրացումների) նախագիծը, այնպես էլ փոփոխությունները (լրացումները) ներառող կանոնները),
3) կանոնների փոփոխությունների (լրացումների) ներդրման անհրաժեշտության հիմնավորումը (մանրամասն),
4) քաղվածք դիտորդ խորհրդի արձանագրությունից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու վերաբերյալ,
5) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները (առկայության դեպքում):

66. Փոփոխությունները գրանցվում են, կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

67. Գրանցման վկայականի և (կամ) լիցենզիայի նոր օրինակը վարկային կազմակերպությանը տրամադրվում է կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 13
ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

68. Կենտրոնական դեպոզիտարիան լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների և հուսալիության՝ սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված չափանիշների փոփոխությունների վերաբերյալ գրություն՝ ներկայացնելով նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ սույն կանոնակարգի գլուխ 11-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը:

69. Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 18-րդ Հավելվածում նշված գործարար ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

ԳԼՈՒԽ 14
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

70. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է բավարարել սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջները սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում, իսկ մինչ այդ պարտավոր են բավարարել հետևյալ պահանջները.

1) Կենտրոնական դեպոզիտարիան պետք է.

ա. ունենա սեփականության իրավունքով, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,

բ. ունենա կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց,

գ. ունենա ծառայությունների մատուցման պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,

դ. ունենա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ),

ե. ունենա էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,

զ. ապահովի հաճախորդների ազատ մուտքը տարածք՝ հանձնարարագրերի, հարցումների և այլ փաստաթղթերի լրացման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հաշիվներից քաղվածքների և տեղեկանքների ստացման համար,

է. փաստաթղթային արժեթղթերի պահառություն իրականացնելու դեպքում ունենա պահոց և չհրկիզվող պահարան արժեթղթերի հավաստագրերի պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,

ը. ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ՝ վարվող արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների և գործառնություններին վերաբերող փաստաթղթերի բնօրինակների պահպանման համար,

թ. արժեթղթերի հաշվառման համակարգը էլեկտրոնային եղանակով վարելու դեպքում կիրառի այնպիսի համակարգ, որը կպաշտպանի արժեթղթերի հաշվառման ժամանակ օգտագործվող ողջ տեղեկատվությունը ոչ լիազորված օգտագործումից,

ժ. հնարավորություն ունենա օգտվելու արժեթղթերի էլեկտրոնային հաշվառման պահուստային համակարգից կամ իրականացնելու արժեթղթերի հաշվառումը թղթային եղանակով, այն դեպքում, երբ հիմնական ավտոմատացման համակարգը շարքից դուրս է եկել կամ այլ պատճառներով հնարավորություն չկա այն օգտագործել,

ժա. կիրառի արժեթղթերի հաշվառման միայն այնպիսի համակարգչային ծրագիր, որն ապահովում է օրենքով և սույն կետով սահմանված պահանջները,

ժբ. տվյալների և տեղեկատվության կանոնավոր և անխափան փոխանակման հնարավորություն ունենա պահառուի և ռեեստրավարի, պահառուի և օտարերկրյա պահառուի միջև՝ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով,

ժգ. պահպանի արժեթղթերի հաշվառմանն առնչվող փաստաթղթերը (գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը), ինչպես նաև տվյալների բազան առնվազն 70 տարի,

ժդ. այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվառումը իրականացվում է թղթային եղանակով, Կենտրոնական դեպոզիտարիան շաբաթվա վերջում պետք է իրականացնի արժեթղթերի հաշվառման մատյաններում և արժեթղթերի հաշիվներում տվյալ օրվա մուտքագրած տվյալների կրկնօրինակումը և ի պահ հանձնի դրանք Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքի չհրկիզվող պահարանում,

ժե. սույն կանոնակարգի սույն կետի 14-րդ ենթակետում նշված տվյալների բազայի կրկնօրինակները պետք է պատրաստվեն այնպիսի եղանակով, որ ցանկացած պահի հնարավոր լինի վերականգնել դրանց սկզբնական տեսքը: Տվյալների բազայի և արժեթղթերի հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակներ կարելի չպատրաստել, եթե համապատասխան ժամանակահատվածի ընթացքում տվյալների բազայում և արժեթղթերի հաշվառման հաշիվներում և հաշվառման գրքերում մուտքեր կամ գրառումներ չեն եղել,

ժզ. Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքում Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակցի՝ աշխատանքի վայրից բացակայության դեպքում արժեթղթերի հաշվառմանն առնչվող բոլոր թղթային կրիչով փաստաթղթերը (ներառյալ գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը) պետք է պահվեն չհրկիզվող պահարանում կամ պահոցում:

2) Կենտրոնական դեպոզիտարիան կարող է սույն կետի 1-ին ենթակետի «բ», «գ», «դ», «ե», «է», «ը», «ժդ» պարբերություններով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կնքել ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ պատահարները.

Կենտրոնական դեպոզիտարիային սեփականության, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի, արժեթղթերի հավաստագրերի, ծառայությունների մատուցման պայմանագրերի, արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների և գործառնություններին վերաբերող փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի՝ հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը:

Նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:

Ընդ որում՝ վերոնշյալ ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ	«A-»
- Մուդիզ	«A3»
- Ա. Մ. Բեստ	«A-»
- Ֆիտչ	«A-»:

Հավելված 1

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը,
Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում
նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն
ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը
և ժամկետները» կանոնակարգ 5/02-ի Հավելվածի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԿԴ ԹԻՎ XXXX

ԼԻՑԵՆԶԻԱ

Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության

Իրավաբանական անձի անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ ----------

Տրված է «__» _____ 20__ թ.

Հավելված 2

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը,
Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում
նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն
ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը
և ժամկետները» կանոնակարգ 5/02-ի Հավելվածի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____
Մենք (Ես)՝_____
(Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը, տիպը (խումբը) և կազմակերպահիրավական ձևը)
ստեղծումը նախաձեռնող ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել Կենտրոնական դեպոզիտարիայի պետական գրանցման և գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության լիցենզիա:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Առդիր՝ _____ էջ:

Ներկայացնում ենք (եմ) ստեղծվող Կենտրոնական դեպոզիտարիայի կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. փոստի հասցե):

Ստորև ներկայացնում ենք (եմ) նաև փոստային հասցեն, որով համաձայն ենք (եմ) ստանալ Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության լիցենզիան և գրանցման վկայականը՝

_____

☐ Հավաստիացնում ենք, որ _____տարածքը և տեխնիկական
(*կազմակերպության անվանումը)*
հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 5/02-ի 11-րդ գլխով սահմանված պահանջներին:

☐ Պարտավորվում ենք, որ _____տարածքը և տեխնիկական
(կազմակերպության անվանումը)
հագեցվածության չափանիշները լիցենզավորվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 5/02-ի 11-րդ գլխով սահմանված պահանջներին, և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում կներկայացվի նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Կենտրոնական դեպոզիտարիայի ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀՎՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 3

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ի Հավելվածի

ԴԻՄՈՒՄ
ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) լրիվ անվանումը)
համար բացել կուտակային հաշիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնելու համար:

Վճարման հանձնարարական տալու իրավունք ունի (ունեն).

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

Խնդրում ենք Կենտրոնական բանկի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման կամ գրանցման և լիցենզավորման մերժման, կանոնադրության փոփոխության գրանցման կամ գրանցման մերժման դեպքում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին առկա միջոցները փոխանցել հետևյալ հաշվին

_____
(բանկի անվանում, հաշվի համար)

_____
(դիմումատուի հայեցողությամբ այլ նշումներ)

Կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի (անձանց) անունը, ազգանունը, ստորագրությունը

«__» _____ 20__ թ.

Հավելված 4

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 հուլիսի 2014 թ., N 200-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.2014 թ. (ՀՀԳՏ N19 (498)1, 15.08.2014):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 200-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ, ԴՐԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ»
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/01

Բ Ա Ժ Ի Ն 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
1) Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումային ֆոնդի (այսուհետ՝ ֆոնդ) կառավարչի (այսուհետ՝ կառավարիչ) գրանցման ու լիցենզավորման կարգը,
2) օտարերկրյա կառավարչի մասնաճյուղերի լիցենզավորման և գրանցման կարգը,
3) օտարերկրյա կառավարչի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացուցչությունների գրանցման կարգը,
4) Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարչի՝ Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը,
5) կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելուն համաձայնություն տալու կարգը,
6) ներդրումային ընկերությունների՝ որպես կառավարիչ վերալիցենզավորման և վերագրանցման կարգը,
7) կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,
8) կառավարչի, նրա մասնաճյուղի և օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կողմից գործարար ծրագրի ձևը, ինչպես նաև գործարար ծրագրի և դրանում փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,
9 կառավարչին վերաբերող փոփոխությունների գրանցման կարգը,
10) կառավարչի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները,
11) կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները և տեղեկությունները:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրման միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի էֆ» ֆորմատով՝ բացառությամբ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի, կառավարչի մասնաճյուղի՝ գործարար ծրագրին կից աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել ֆորմատով: Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործարար ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

3. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնա-

կան բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով, առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերն ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքի տվյալների (անվան և ծածկագրի) միջոցով:

4. Նոր ստեղծվող կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով: Սույն կետը չի տարածվում ներդրումային ընկերության՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ վերագրանցման և վերալիցենզավորման վրա:

5. Գործող կառավարիչների և դրանց տարածքային ստորաբաժանումների, օտարերկրյա կառավարիչների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

6. Նոր ստեղծվող կառավարիչների, ինչպես նաև օտարերկրյա կառավարիչների նոր ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վրա սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք, երբ արդեն միացված են Սի-Բի-էյ-նեթ համակարգին և ստացել են անվտանգության համապատասխան հավաստագրերը, Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները կրկին ներկայացնում են Կենտրոնական բանկ՝ ՍԻ-ԲԻ-էյ-նեթ համակարգի միջոցով, «Փի Դի էֆ» ֆորմատով՝ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ համապատասխան ստորագրությունը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7. Սույն կանոնակարգով նախատեսված կարգով գրանցման ներկայացված կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ դրանք Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գրանցված կանոնադրությունները տրամադրվում են համապատասխան անձին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Նոր ստեղծվող կառավարիչների, ինչպես նաև օտարերկրյա կառավարիչների նոր ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար սույն կետով սահմանված հնգօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրությունների էլեկտրոնային տարբերակները Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

8. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրերի ձևերի) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

9. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Կառավարչի անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 տառի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ֆայլի հապավումը
օրինակ՝								
ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադրական փոփ.	_	250913	.	pdf

10. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

11. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը

Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:

12. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսվում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

13. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

14. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացվի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

15. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշները կիրառելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,
2) եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,
3) Եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

16. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն.

1) հաշվապահական հաշվառման այն ստանդարտների համապատասխան, որոնք «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս ու ներկայացնելիս, կամ
2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

17. Սույն կանոնակարգով պահանջվող օտարերկրյա իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին կից աուդիտորական եզրակացությունները ներկայացվում են դրանց առկայության դեպքում, բացառությամբ կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար իրավաբանական անձանցից պահանջվող ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող աուդիտորական եզրակացությունների:

18. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական կամ վերահսկողական նպատակներից ելնելով՝ կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

19. Կենտրոնական բանկի կողմից «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դիմումի, միջնորդագրի կամ ցանկացած այլ միջնորդագրի քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

20. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի համալրումը (կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացումը) Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում ապահովագրական ընկերության հիմնադիրները (ապահովագրական ընկերությունը) Կենտրոնական բանկ են ներկայացնում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

21. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի համալրումը (կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացումը) Կենտրոնական բանկում բացվող կու-

տակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում կառավարչի հիմնադիրները (կառավարիչը) Կենտրոնական բանկ են ներկայացնում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

22. Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ ներդրումային ֆոնդերի կառավարիչների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

23. Կառավարիչը կարող է միաժամանակ իրականացնել իր կողմից կառավարվող ֆոնդերի (բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի) թողարկած արժեթղթերի պահառություն, որի համար Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված թույլտվությունը համարվում է բոլոր կառավարիչներին տրված: Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված լրացուցիչ ծառայության վերաբերյալ սույն կանոնակարգով սահմանված դրույթները կիրառվում են այլ անձանց կողմից կառավարվող ֆոնդերի փայերի կամ բաժնետոմսերի՝ կառավարչի կողմից պահառության իրականացման նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2.
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

24. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Օրենք»***՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
2) ***«ծառայություն (ծառայություններ)»***՝ Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ և (կամ) 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված ծառայություն (ծառայություններ),
3) ***«ներդրումային ընկերություն»***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված արժեթղթերի փաթեթի կառավարում իրականացնող ներդրումային ընկերություն,
4) ***«ֆինանսական խումբ (միություն)»***՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,
5) ***«ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ֆոնդ, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն, վճարահաշվարկային կազմակերպություն,
6) ***«ֆինանսական հաշվետվություններ»***՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ,
7) ***«հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
8) ***«անձնագրի տվյալներ»***՝ անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
9) ***«ղեկավար»***՝ Օրենքի 65-րդ հոդվածի համաձայն՝ կառավարչի ղեկավար համարվող անձ,
10) ***«Կանոնակարգ 10/05»***՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05,
11) ***«օտարերկրյա կառավարչի մասնաճյուղ»***՝ օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղ,
12) ***«գործունեության կանոններ»***՝ կառավարչի ղեկավարների և աշխատակիցների գործունեությունը կարգավորող՝ Օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ընթացակարգերը ներառող ներքին կանոններ և կանոնակարգեր,

25. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3.
ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26. Կառավարչի պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ընդ որում,

ա. գրանցման և լիցենզավորման միջնորդագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի դեպքում դիմումում հավաստվում է, որ Կենտրոնական բանկի և մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա կառավարչի գրանցման երկրի համապատասխան ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) ներդրումային ոլորտում համագործակցության վերաբերյալ), ընդ որում, դիմումի մեջ ներառվում է կառավարչի (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի) գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. ստեղծվող կառավարչի ստեղծման մասին հիմնադիր պայմանագիրը (որոշումը),

գ. ծառայության (ծառայությունների) մատուցման թույլտվություն ստանալու միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

դ. գործարար ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի,

ե. կառավարչի հիմնադիրների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի,

զ. ղեկավարների և կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող աշխատակիցների գրանցման միջնորդագրերը ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի և ղեկավարների և կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող աշխատակիցների մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, ընդ որում՝ ղեկավարների և կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող աշխատակիցների վավերացված ստորագրությունների նմուշները ևս ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,

է. կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց նշանակալից մասնակցության նախնական համաձայնություն ստանալու միջնորդագիրը և կից փաստաթղթերը ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի 3-րդ բաժնի,

ը. կառավարչի ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա կառավարչի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

թ. կառավարչի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 15-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2 եթե միջնորդագիր ներկայացնող անձը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրված լիազորագիրը,

3) սույն կանոնակարգի 12-րդ գլխով սահմանված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է կառավարչի գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, ենթավարձակալության դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

4) կառավարչի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 13-ի և Հավելված 14-ի,

5) կառավարչի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 13-ի և Հավելված 14-ի,

6) կառավարչի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,

7) օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի լիցենզավորման դեպքում նաև՝

ա. Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ ստեղծելու վերաբերյալ օտարերկրյա կառավարչի կառավարման համապատասխան մարմնի որոշումը,

բ. իր մայր ընկերության՝ ֆոնդի կառավարման առնվազն մեկ տարվա փորձ ունենալու փաստը հավաստող փաստաթուղթ,

գ. օտարերկրյա կառավարչի գրանցման վկայականի, կանոնադրության կամ այլ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և դրանց՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունները (որոնց վրա դրված նոտարի ստորագրության և կնիքի իսկությունը հաստատված է դիվանագիտական կամ հյուպատոսական կարգով կամ ապոստիլով),

դ. օտարերկրյա կառավարչի՝ իր գրանցման երկրի իրավասու մարմնի կողմից տրված ֆոնդի կառավարման գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը հավաստող փաստաթղթի պատճենը և դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը (որի վրա դրված նոտարի ստորագրության և կնիքի իսկությունը հաստատված է դիվանագիտական կամ հյուպատոսական կարգով կամ ապոստիլով), ինչպես նաև այդ իրավասու մարմնի թույլտվությունը կամ չառարկելու մասին որոշումը կամ այլ փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղ ստեղծելու վերաբերյալ (այդ երկրի օրենսդրությամբ նման պահանջ սահմանված լինելու դեպքում),

ե. օտարերկրյա կառավարչի վերջին երեք տարիների ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած օտարերկրյա կառավարիչը նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունները,

զ. հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա կառավարչի վարկանիշը, ըստ Ստանդարտ և Փուրզ, Ֆիտչ կամ Մուդիզ վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների, առնվազն եղել է «AA-» կամ «Aa3»՝ սույն կետում նշված միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվա դրությամբ,

է. հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ֆոնդի կառավարչի գրանցման վայրի երկրի արժեթղթերի շուկայի կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմինը ստորագրել է Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության (IOSCO) «Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» բազմակողմ համաձայնության հուշագիրը,

ը. մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային կառավարչի կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորությունները օտարերկրյա կառավարչի կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

թ. մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա կառավարչի գրանցման վայրի երկրի ներդրումային ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա կառավարիչը չի խախտել տվյալ երկրի ներդրումային գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում,

ժ. հայտարարություն այն մասին, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա կառավարչի գրանցման վայրի երկիրը համարվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր, և/կամ տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ որևէ հայտարարություն չի հրապարակվել,

ժա. Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա կառավարչի անունով ավանդի ներդրումը հավաստող փաստաթղթեր: Սույն ենթակետով սահմանված ավանդը պետք է առնվազն կազմի 20 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 20 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա կառավարիչը

ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում:

27. Սույն կանոնակարգի 26-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
3) միջազգային կազմակերպություն, կամ
4) միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից սահմանված «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ (Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում):

28. Սույն կանոնակարգի 26-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում սույն կետի 1-3 ենթակետերում նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են՝

1) կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և, որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 26-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

29. Կառավարիչը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 28-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, գրանցման համարները և գտնվելու վայրերը, ինչպես նաև փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, հանրային ծառայությունների համարանիշները, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձնագրի տվյալները:

30. Կառավարչի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, որոնք ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 26-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները, փոխարենը ներկայացվում է սույն կետում նշված հաշվետվությունը (տեղեկությունները), ընդ որում, միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

31. Կենտրոնական բանկը կարող է կառավարչի (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի) գրանցման և լիցենզավորման գործընթացի ժամանակ կառավարչի (օտարերկրյա կառավարչի) հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 26-րդ կետի 6-րդ ենթակետով, իսկ եթե կառավարչի (օտարերկրյա կառավարչի) հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա նաև սույն կանոնակարգի 30-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

32. Եթե սույն կանոնակարգի 26-րդ կետի 6-րդ ենթակետով կամ սույն կանոնակարգի 30-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են, համապատասխանաբար, իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

33. Կենտրոնական բանկի կողմից կառավարչի, օտարերկրյա կառավարչի գրանցման վկայականը տրվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի:

34. Կառավարչի լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի: Ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 1-ում «Ներդրումային ֆոնդի կառավարչին թույլատրվող ծառայությունները» տողում լրացվում են ներդրումային այն ծառայությունները, որոնց մատուցման համար կառավարիչը ստացել է թույլտվություն:

ԳԼՈՒԽ 4.

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՌԱՎԱՐՉԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼԸ, ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

35. Օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչության գրանցման, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու համար նախնական համաձայնության ստացման, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության դադարեցման, ինչպես նաև ժամանակավոր դադարեցման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/01-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/01) համապատասխան դրույթները՝ «ներդրումային ընկերության» և «ներդրումային ծառայությունների» փոխարեն հասկանալով և համապատասխան փաստաթղթերում լրացնելով համապատասխանաբար «ներդրումային ֆոնդի կառավարիչ» և «ներդրումային ֆոնդի կառավարում» (ըստ կիրառելիության): Ընդ որում, ծրագրին, փոփոխությունների գրանցմանը և գործունեության տարածքին և տեխնիկական հագեցվածությանը վերաբերող դրույթների նկատմամբ կիրառվում են համապատասխանաբար սույն կանոնակարգի 12-րդ և 13-րդ գլուխներով, ինչպես նաև սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված պահանջները:

ԳԼՈՒԽ 5.

ԳՈՐԾՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

36. Գործող կառավարիչը ծառայության (ծառայությունների) մատուցման թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) Օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում,

ա. համապատասխան ծառայության (ծառայությունների) մատուցման թույլտվություն ստանալու միջնորդագիրը վավերացվում է կառավարչի իրավասու կառավարման մարմնի կողմից և ներկայացվում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

բ. կառավարչի ծրագրում, կանոնադրության մեջ և գործունեության կանոններում կատարված փոփոխությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար 13-րդ և 14-րդ գլուխների, ինչպես նաև համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի,

2) Կենտրոնական բանկի կողմից իրեն տրված լիցենզիան՝ վերաձևակերպելու նպատակով:

ԳԼՈՒԽ 6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

37. Օտարերկրյա կառավարչի մասնաճյուղերը կարող են գրանցվել և լիցենզավորվել Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե տվյալ կառավարչի գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում կառավարիչների գործունեությունը կարգավորող և վերահսկող իրավասու պետական մարմնի կողմից դրանց նկատմամբ սահմանված կարգավորումը և վերահսկողությունը Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ավելի մեղմ չէ, քան Հայաստանի Հանրապետությունում կառավարիչների համար սահմանված կարգավորումն ու վերահսկողությունը:

38. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն կարող է տրամադրվել Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված այն կառավարչին, որն ունի միջազգային ֆինանսական կազմակերպություն կամ կենսաթոշակային ֆոնդերի (այդ թվում՝ նմանատիպ այլ ներդրումային ֆոնդերի) կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն (այսուհետ սույն գլխում՝ օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն) հանդիսացող առնվազն մեկ մասնակից (բաժնետեր): Ընդ որում, Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության (կազմակերպությունների) և/կամ օտարերկրյա հեղինակավոր կազմակերպության (կազմակերպությունների) ձայնի իրավունք տվող մասնակցությունը պետք է կազմի 50 տոկոսից ավելին, և այդ կազմակերպությունը (կազմակերպությունները) պետք է ունենա որոշիչ ձայն պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ռազմավարությունը սահմանելիս, ինչպես նաև կառավարչի գործադիր մարմինը և ներքին հսկողության համակարգը ձևավորելիս:

39. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչն իր գործունեության ողջ ընթացքում պետք է բավարարի սույն կանոնակարգի 38-րդ կետով սահմանված պահանջը:

40. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 38-րդ կետով նախատեսված՝ ֆոնդերի կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա կազմակերպության հեղինակավոր լինելը գնահատելիս հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

1) միջազգային հեղինակավոր վարկանշող կազմակերպությունների կողմից կազմակերպությանը շնորհված վարկանիշը,
2) ֆինանսական ոլորտում միջազգային համբավ ունեցող վերլուծական և (կամ) խորհրդատվական կազմակերպությունների կողմից հրապարակվող լավագույն կառավարիչների ցանկում ընդգրկվածությունը,
3) կառավարման ներքո գտնվող ակտիվների մեծությունը,
4) կառավարվող ֆոնդերի եկամտաբերությունը,
5) աշխարհի տարբեր երկրներում ներկայացվածության աստիճանը,
6) կազմակերպության բաժնետոմսերը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կամ Եվրոպական Միության անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված լինելը,
7) կազմակերպության կողմից կենսաթոշակային ֆոնդերի կամ նմանատիպ (ըստ ներդրումային քաղաքականության) այլ ֆոնդերի կառավարման բնագավառում փորձը,
8) այլ էական հանգամանքներ:

41. Օտարերկրյա կառավարչի Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղը կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության տարածքում Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն, եթե օտարերկրյա կառավարիչը հանդիսանում է ֆոնդերի կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն: Ընդ որում, Կենտրոնական բանկը օտարերկրյա կառավարչի հեղինակավոր լինելը գնահատելիս հաշվի է առնում սույն կանոնակարգի 40-րդ կետով սահմանված հանգամանքները:

ԳԼՈՒԽ 7.

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

42. Ներդրումային ընկերության՝ որպես կառավարիչ վերագրանցման և վերալիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում

1) Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ ընդ որում,

ա. վերագրանցման և վերալիցենզավորման միջնորդագիրը վավերացվում է ներդրումային ընկերության իրավասու կառավարման մարմնի կողմից և ներկայացվում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի, ընդ որում՝ դիմումի մեջ ներառվում է կառավարչի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. ծառայության (ծառայությունների) մատուցման թույլտվություն ստանալու միջնորդագիրը վավերացվում է ներդրումային ընկերության իրավասու կառավարման մարմնի կողմից և ներկայացվում համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

գ. լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին միջնորդագիրը վավերացվում է ներդրումային ընկերության իրավասու կառավարման մարմնի կողմից և ներկայացվում համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,

դ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն Հավելված 12-ի,

ե. կանոնադրության մեջ փոփոխությունները ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի 13-րդ գլխի,

2) Կանոնակարգ 10/05-ի համաձայն՝ ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող աշխատողների ցուցակը և նրանց մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները,
3) ղեկավարների և կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող աշխատակիցների գրանցման միջնորդագրերը ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի և ղեկավարների և կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող աշխատակիցների մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, ընդ որում, ղեկավարների և կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող աշխատակիցների վավերացված ստորագրությունների նմուշները ևս ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,
4) կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն ստանալու միջնորդագիրը և կից փաստաթղթերը՝ համաձայն սույն կանոնակարգի 3-րդ բաժնի:

ԳԼՈՒԽ 8.

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ, ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Լիցենզիայի, գրանցման վկայականի օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում համապատասխան անձը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի, գրանցման վկայականի կրկնօրինակը ստանալու համար, ինչպես նաև լիցենզիայի, գրանցման վկայականի կորստի մասին Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակելու համար: Դիմումին կից ներկայացվում են նաև լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը (բացառությամբ կորստի, ոչնչացման դեպքի), լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

44. Կենտրոնական բանկը լիցենզիայի, գրանցման վկայականի կրկնօրինակը համապատասխան անձին տալիս է նրա կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

45. Կորած լիցենզիան, գրանցման վկայականը գտնելու դեպքում համապատասխան անձը գտնված լիցենզիան, գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

46. Լիցենզիայի, գրանցման վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

47. Լիցենզիայի, գրանցման, հաշվառման վկայականի կրկնօրինակի կորստի, ոչնչացման, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի, գրանցման, հաշվառման վկայականի նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 9.

ԼԻՑԵՆԶԻԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

48. Օրենքով սահմանված հիմքերով կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կից գրությամբ լիցենզիան, իսկ օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի դեպքում՝ նաև օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

49. Կառավարչի լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում կառավարիչը կից գրությամբ կառավարչի, կառավարչի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող տարածքային ստորաբաժանումների գրանցման վկայականները վերադարձնում է Կենտրոնական բանկ:

50. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, կառավարչի լուծարային հաշվեկշիռը հաստատելու, տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարելու մասին Կենտրոնական բանկի որոշման բողոքարկումը հիմք չէ սահմանված ժամկետում համապատասխան լիցենզիան, գրանցման վկայականը չվերադարձնելու համար:

ԲԱԺԻՆ 3

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 10.

ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆՋԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

51. Կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության նախնական համաձայնություն ստանալու համար փաստաթղթերի (այդ թվում՝ անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերի ու տեղեկությունների) ներկայացման, նշանակալից մասնակցության ձեռքբերմանը համաձայնություն տալու, անձի կողմից նշանակալից մասնակցության ձեռքբերման կամ մասնակցությունն ավելացնելու, նշանակալից մասնակցի կողմից ձեռք բերված բաժնետոմսերի (բաժնեմասերի) օտարման մասին Կենտրոնական բանկին տեղեկացնելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Կանոնակարգ 4/01-ի համապատասխան դրույթները՝ «ներդրումային ընկերության» փոխարեն հասկանալով և համապատասխան փաստաթղթերում լրացնելով «ներդրումային ֆոնդի կառավարիչ»:

52. Որպես կառավարիչ վերագրանցվող և վերալիցենզավորվող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստացած անձինք համարվում են ստեղծվող կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստացած՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կառավարչի կանոնադրական կապիտալում նրանց մասնակցությունն ավելանալու է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափերով:

ԲԱԺԻՆ 4

ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 11.

ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

53. Կառավարիչները, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղերը հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ռեզիդենտների համար, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ ոչ ռեզիդենտների համար.

1) կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,
2) կառավարչի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,
3) կառավարչի (օտարերկրյա կառավարչի) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, ինչպես նաև կառավարչի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների անունը, ազգանունը, պաշտոնը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 28-րդ կետով սահմանված դեպքերի),
4) կառավարչի (օտարերկրյա կառավարչի) հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց, ինչպես նաև կառավարչի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց անունը, ազգանունը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 28-րդ կետով սահմանված դեպքերի):

54. Եթե կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 53-րդ կետի 1-ին ենթա-

կետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները),

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

55. Եթե կառավարչի հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 53-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունը)՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

56. Սույն կանոնակարգի 53-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է՝

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 53-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

57. Սույն կանոնակարգի 53-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե կառավարչի հետ փոխկապակցված իրավաբանական անձը հանդիսանում է՝

1) կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որի համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 53-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

58. Սույն կանոնակարգի 57-րդ կետում սահմանված դեպքերում Կենտրոնական բանկ է ներկայացվում այդ անձանց անվանումները ներառող ցուցակ:

59. Կենտրոնական բանկը կարող է պահանջել կառավարչից (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղից) սույն կանոնակարգի 53-րդ կետի 2-րդ ենթակետով և սույն կանոնակարգի 55-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) սահմանված պարբերականությամբ ներկայացնել Կենտրոնական բանկի կառավարչի (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի) հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով:

ԲԱԺԻՆ 5
ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 12
ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

60. Կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կամ կառավարչի մասնաճյուղը պետք է ունենան.

1) Կառավարչին (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի դեպքում՝ օտարերկրյա կառավարչին) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհա-

տույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող առանձնացված տարածք,

2) Կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում, հաճախորդների և ֆոնդի մասնակիցների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված կառավարչի, օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի կամ կառավարչի մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի պահպանման հիմնական վայրն է իր նախադրամապահոցով: Դրամապահոց ունենալու պահանջը համարվում է պահպանված, եթե կառավարիչն ունի ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ կանխիկ միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր՝ կանխիկ միջոցները բանկի, վարկային կազմակերպության կամ դրանց տարածքային ստորաբաժանումների պահպանությանը հանձնելու մասին: Դրամապահոցի բացակայության պարագայում կառավարիչը և դրա մասնաճյուղը կարող են չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացիա, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը և կառավարչի մոտ կամ նրա մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին և պատին: Սույն ենթակետը չի տարածվում այն կառավարչի կամ կառավարչի մասնաճյուղի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը իրականացնում են բացառապես անկանխիկ գործառնություններ, կամ կանխիկ գործառնությունների իրականացումը պատվիրակել է այլ անձի, որը բավարարում է սույն կետով կառավարչի համար սահմանված պահանջները,

3) ֆոնդի կառավարման, Օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով սահմանված ծառայությունների մատուցման (նման ծառայությունների մատուցման դեպքում) պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,

4) շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր, որոնց էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի ընկերության ամբողջ տարածքում և կառավարչի գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, իսկ կառավարչի մասնաճյուղերի համար՝ միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը կամ այլ համապատասխան կազմակերպությանը, ինչպես նաև կառավարչի գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով,

5) էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պահուստային է: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,

6) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի համար մասնաճյուղ ունենալու դեպքում՝ այնպիսի համակարգչային ծրագրեր, որոնք ապահովում են մասնաճյուղում կատարվող գործարքների ավտոմատ արտացոլումը կառավարչի ծրագրային համակարգում:

61. Այն դեպքում, երբ կառավարիչները Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա կնքել են միացման պայմանագիր, ապա միացող և պահպանվող կառավարիչների գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության սույն գլխով սահմանված պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:

62. Կառավարչի կազմակերպական և տեխնիկական ռեսուրսները պետք է համապատասխանեն նրա կողմից իրականացվող ֆոնդի կառավարման գործունեության բարդությանը, ռիսկայնությանը և կառավարչի գործունեության շրջանակներին՝ մասնագիտական լավագույն փորձի, գործարար վարվելակերպի և կորպորատիվ կառավարման սկզբունքներին համապատասխան: Սույն կետով սահմանված սկզբունքները բավարարելու նպատակով կառավարչի կազմակերպական ռեսուրսների օգտագործումը պետք է ապահովի կառավարչի գործունեության անխափան իրականացումը՝ համաձայն պլանավորված շրջանակների և (կամ) կառավարչի գործունեության կանոնների:

63. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի տեխնիկական և ծրագրային ապահովման համակարգերը պետք է թույլ տան կառավարչին արդյունավետ կերպով իրականացնելու կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված իրեն վերապահված գործառույթները, ներառյալ՝ ֆոնդի պահառուի հետ տեղեկատվության անհրաժեշտ փոխանակումը:

64. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի տեղեկատվական համակարգը պետք է բավարարի հետևյալ սկզբունքները.

1) թույլ տա տվյալների անհատական հաշվառումը յուրաքանչյուր մասնակցի գծով (կատարված կուտակային հատկացումներ (կամավոր կենսաթոշակային վճարներ), մասնակցին պատկանող կենսաթոշակային ֆոնդի փայեր, վճարված կուտակային կենսաթոշակներ (կամավոր կենսաթոշակներ), հաշիվներից կատարված փոխանցումներ (փոխանակված փայեր) և մասնակցին վերաբերող այլ էական տեղեկատվություն),
2) չարտոնագրված մուտքից (այդ թվում՝ չարտոնագրված դիտումից) տվյալների պաշտպանության ապահովման բարձր հուսալիություն,
3) թույլ տա տվյալների պարբերական պահուստային կրկնօրինակում (բեք-ափ քոփի):

65. Կառավարիչը, նրա մասնաճյուղը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը սույն կանոնակարգի 60-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կարող են ունենալ ԲանկերսԲլանկետԲոնդ (Bankers-Blanket-Bond (այսուհետ՝ BBB)) ապահովագրության պայմանագիր, որը ներառում է առնվազն հետևյալ ռիսկերը՝

1) ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,
2) ընկերության գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում ընկերության տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը: Սույն կանոնակարգի 65-րդ կետում նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել կառավարչի բոլոր ակտիվների 1 տոկոսից:

66. Սույն կանոնակարգի 65-րդ կետում նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել կառավարչի բոլոր ակտիվների 1 տոկոսից: Ընդ որում, սույն կանոնակարգի 65-րդ կետում նշված BBB ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերության հետ պայմանագիր կնքելու դեպքում վերջինը պետք է ունենա սույն կետի աղյուսակում նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված համապատասխան վարկանիշից ոչ ցածր վարկանիշ՝

Ստանդարտ և Փուրզ	«A-»
Մուդիզ	«A3»
Ա. Մ. Բեստ	«A-»
Ֆիտչ	«A»:

ԲԱԺԻՆ 6
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 13
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

67. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարիչները և օտարերկրյա կառավարիչների մասնաճյուղերը փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում՝

1) կառավարչի կամ օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրություններում կատարված փոփոխությունները: Ընդ որում, սույն ենթակետում սահմանված կանոնադրությունների փոփոխությունները, լրացումները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 16-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
2) կառավարչի գործունեության կանոններում կատարված փոփոխությունները,
3) ղեկավարների կազմում (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) կատարված փոփոխությունները՝ համաձայն Կանոնակարգ 10/05-ի:

68. Կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ կառավարչի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
2) կառավարչի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ ներկայացուցչություն կամ կառավարչի՝ Հայաստանի Հան-

րապետության ստեղծված տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) կառավարչի, կառավարչի տարածքային ստորաբաժանման, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունը,

4) եթե կանոնադրության փոփոխությունն առաջացնում է լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է լիցենզիայի վերաձևակերպման մասին կառավարչի կամ օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի միջնորդությունը, ինչպես նաև կից ներկայացվում է պետական տուրքի անդորրագիրը:

69. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի գործունեության կանոններում կատարված փոփոխությունները և (կամ) լրացումները (նոր խմբագրությամբ հաստատված գործունեության կանոնները), ինչպես նաև նոր ընդունված գործունեության կանոնները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացվում են՝

1) կանոններում կատարված փոփոխությունները (լրացումները) գրանցելու մասին միջնորդագիր՝ համաձայն հավելված 11-ի՝ կառավարչի կառավարման մարմնի իրավասու անձի ստորագրությամբ,

2) կառավարչի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք գործունեության կանոններում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) փոփոխված կանոնները:

70. Եթե կառավարչի, կառավարչի մասնաճյուղի կամ ներկայացուցչության, օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի, ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխմամբ, ապա սույն կանոնակարգի 69-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև՝

1) նոր առանձնացված տարածքի նկատմամբ կառավարչի (օտարերկրյա կառավարչի) սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

2) կանոնադրության փոփոխությունների գրանցման միջնորդագիր, որտեղ նշվում է կառավարչի (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի) հայտարարությունն այն մասին, որ կառավարչի (օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի, կառավարչի մասնաճյուղի) տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգի 12-րդ գլխով սահմանված չափանիշներին, իսկ անհնարինության դեպքում պարտավորագիր առ այն, որ գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կապահովվի դրանց համապատասխանությունը:

71. Եթե կառավարչի կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է կառավարչի ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա, բացի սույն կանոնակարգի 69-րդ կետում նշված փաստաթղթերից, Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի նաև ֆիրմային անվանման գրանցման հայտ և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

72. Կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված կառավարչի կանոնադրության մեջ կատարված փոփոխությունների գրանցման համար կառավարիչը Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) սույն կանոնակարգի 69-րդ կետով նախատեսված փաստաթղթերը,

2) Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարչի հետ չփոխկապակցված որևէ այլ բանկում կանոնադրական կապիտալի համալրման նպատակով բացված կուտակային հաշվում առկա միջոցների փաստացի մեծությունը հավաստող տեղեկանք,

3) բաժնետոմսերի վերջին թողարկման ազդագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (առկայության դեպքում), եթե վերջինիս գրանցումը չի իրականացվել Կենտրոնական բանկի կողմից:

73. Փոփոխությունները գրանցվում են, կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

74. Եթե կանոնադրության փոփոխությունը ենթադրում է նաև լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի փոփոխություն, ապա Կենտրոնական բանկի կողմից կանոնադրության փոփոխությունը գրանցելուց հետո անձը 3-օրյա ժամկետում հին լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի օրինակը ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ վերաձևակերպման համար:

ԳԼՈՒԽ 14

ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

75. Կառավարիչը, օտարերկրյա կառավարիչի մասնաճյուղը լիցենզիա ստանալուց հետո, իսկ օտարերկրյա կառավարչի ներկայացուցչությունը գրանցվելուց հետո սույն կետում նշված փոփոխությունները

տեղի ունենալու դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ տեղեկությունները.

1) կառավարչի, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի՝ սույն կանոնակարգի գլուխ 30-ով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ այդ փոփոխությունների վերաբերյալ գրություն, որը պարունակում է հայտարարություն առ այն, որ փոփոխված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված չափանիշներին,
2) կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունները,
3) կառավարչի կամ օտարերկրյա կառավարչի ներկայացուցչության ղեկավարների փոփոխության դեպքում՝ ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:

76. Կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը, կառավարչի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարար ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը: Ընդ որում, ծրագրին կից աղյուսակներում փոփոխություն կարող է կատարվել միայն մինչև հունիս ամսվա վերջին օրը: Նշված ժամանակահատվածից հետո փոփոխություն կարող է կատարվել միայն մակրոտնտեսական միջավայրի էական տատանումների կամ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության էական փոփոխությունների (օրինակ՝ Համախառն ներքին արդյունքի, գների, փոխարժեքի էական տատանումներ, ներդրումային կամ ոչ հիմնական նոր ծառայությունների մատուցում) դեպքում:

ԳԼՈՒԽ 15.
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

77. Սույն կանոնակարգի 3-րդ կետն ուժի մեջ է մտնում 2014 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ մինչ այդ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

78. Կառավարիչները, կառավարիչների մասնաճյուղերը պարտավոր են բավարարել սույն կանոնակարգի 12-րդ գլխով սահմանված գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջները սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ մինչ այդ պարտավոր են բավարարել հետևյալ պահանջները.

1) կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կամ կառավարչի մասնաճյուղը պետք է ունենան.

ա. կառավարչին (իսկ օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր կառավարչին) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող առանձնացված տարածք,

բ. Կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում, հաճախորդների և ֆոնդի մասնակիցների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված կառավարչի, օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի կամ կառավարչի մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի պահպանման հիմնական վայրն է իր նախադրամապահոցով: Դրամապահոց ունենալու պահանջը համարվում է պահպանված, եթե կառավարիչն ունի ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ կանխիկ միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր՝ կանխիկ միջոցները բանկի, վարկային կազմակերպության կամ դրանց տարածքային ստորաբաժանումների պահպանությանը հանձնելու մասին: Դրամապահոցի բացակայության պարագայում կառավարիչը և դրա մասնաճյուղը կարող են չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացիա, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը և կառավարչի մոտ կամ նրա մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին և պատին: Սույն ենթակետը չի տարածվում այն կառավարչի կամ կառավարչի մասնաճյուղի վրա, որն իրականացնում է բացառապես անկանխիկ գոր-

ծառնություններ, կամ կանխիկ գործառնությունների իրականացումը պատվիրակել է այլ անձի, որը բավարարում է սույն կետով կառավարչի համար սահմանված պահանջները,

գ. ֆոնդի կառավարման, Օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով սահմանված ծառայությունների մատուցման (նման ծառայությունների մատուցման դեպքում) պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,

դ. պահպանիչ-հակահիրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Սույն ենթակետը չի տարածվում կառավարչի մասնաճյուղի վրա:

2) Կառավարչի գրանցման և լիցենզավորման ժամանակ նոր ստեղծվող կառավարիչը համարվում է սույն կետի 1-ի ենթակետի «ա» պարբերությունով սահմանված պահանջը բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորագիր, որով պարտավորվել է կառավարչի գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը:
3) Այն դեպքում, երբ կառավարիչները, Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա կնքել են միացման պայմանագիր, ապա միացող և պահպանվող կառավարիչների գլխամասային և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության սույն կետով սահմանված պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:
4) Կառավարիչը, նրա մասնաճյուղը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կարող են սույն կետի 1-ին ենթակետի «բ», «գ», «դ» պարբերություններով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կնքել ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ պատահարները՝ կառավարչի, նրա մասնաճյուղի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի, արժեթղթերի, ապահովագրության վկայագրերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի՝ հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը: Նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:
5) Ընդ որում, վերոնշյալ ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ «A-»
- Մուդիզ «A3»
- Ա. Մ. Բեստ «A-»
- Ֆիտչ «A-»:

Հավելված 1

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՆՆՖԿ ԹԻՎ XXXX

ԼԻՑԵՆԶԻԱ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ներդրումային ֆոնդի կառավարչին թույլատրվող ծառայությունները

_____ տրված է՝ _____

_____ տրված է՝ _____

_____ տրված է՝ _____

_____ տրված է՝ _____

_____ տրված է՝ _____

Կառավարչի լրիվ ֆիրմային անվանումը _____

(Օտարերկրյա կառավարչի լրիվ ֆիրմային անվանումը և նրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի անվանումը)

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____

Տրված է՝ «__»_____ 20__ թ.

Գրանցման համարը՝ _____

Հավելված 2

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ (ՕՏԱՐԵՐԿՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Մենք (ես)՝ (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել

_____

(կառավարչի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը)

ներդրումային ֆոնդի կառավարիչ (օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղ) ստեղծելու վերաբերյալ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք (եմ) գրանցման և լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ --- էջ):

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության լիցենզիա:

Ներկայացնում ենք (եմ) ստեղծվող ներդրումային ֆոնդի կառավարչի կոնտակտային անձի (անձանց) տվյալները _____:

(անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. փոստի հասցե)

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական

(կազմակերպության անվանումը)

հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 10/01-ի 12-րդ գլխով սահմանված պահանջներին:

☐ Պարտավորվում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական

(կազմակերպության անվանումը)

հագեցվածության չափանիշները լիցենզավորվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 10/01-ի 12-րդ գլխով սահմանված պահանջներին:

Տարածքի վարձակալության (ենթավարձակալության) դեպքում վարձավճարի չափը կազմում է _____ՀՀ դրամ:

Հավաստիացնում ենք (եմ), որ ՀՀ կենտրոնական բանկի և _____ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա կառավարչի գրանցման երկրի համապատասխան ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) համապատասխան ոլորտում համագործակցության վերաբերյալ:

(Վերաբերում է օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գրանցման և լիցենզիա ստանալու համար ներկայացված դիմումին:)

Հավաստիացնում ենք (եմ), որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:

Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժման:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել կազմակերպությունը և տրամադրել ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիա:

Ներդրումային ֆոնդի կառավարչի (օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի) ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀՎՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____

«__»_____ 20__ թ.

Հավելված 3

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(միջնորդագիր ներկայացնող կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնելու հետ իրականացնել.

1.
- ☐ Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարում
- ☐ Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարում

2.
- ☐ Արժեթղթերի փաթեթի կառավարում

3.
- ☐ Խորհրդատվության տրամադրում կապված իր կողմից կառավարվող արժեթղթերում ներդրումների հետ

4.
- ☐ Փայերի կամ ֆոնդի բաժնետոմսերի պահառություն

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրել նշված ծառայությունների մատուցումը:

Միջնորդագիրը ներկայացնող անձ՝

_____
(կառավարչի (ստեղծվող կառավարչի) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(կապի միջոցները, գտնվելու վայրը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 4

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ԴԻՄՈՒՄ
ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) լրիվ անվանումը)

համար բացել կուտակային հաշիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնելու համար:

Վճարման հանձնարարական տալու իրավունք ունի (ունեն).
_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)
_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)
_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

Խնդրում ենք Կենտրոնական բանկի կողմից ներդրումային ֆոնդի կառավարչի գրանցման և լիցենզավորման կամ գրանցման և լիցենզավորման մերժման, կանոնադրության փոփոխության գրանցման կամ գրանցման մերժման դեպքում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին առկա միջոցները փոխանցել հետևյալ հաշվին
_____
(բանկի անվանում, հաշվի համար)

(Դիմումատուի հայեցողությամբ այլ նշումներ)

Դիմումը ներկայացնող անձ (անձինք)՝

Կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի (անձանց) անունը, ազգանունը, ստորագրությունը

«__»_____ 20__ թ.

Հավելված 5

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Միջնորդագիր

Հարգելի _____

Խնդրում ենք _____ գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____:
Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ:

Հավաստիացնում ենք, որ վերոնշված անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին և վերջինիս ստորագրությունը համապատասխանում է իսկականին:

Ներդրումային ֆոնդի կառավարչի կառավարման մարմնի իրավասու անձ՝
_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__»_____ 20__ թ.

Հավելված 6

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՂԵԿԱՎԱՐԻ (ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը

☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները**

1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները

(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար Դուք պետք է հանդիսանաք)

1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)

1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ
- ○ բանկ
- ○ օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- ○ վարկային կազմակերպություն
- ○ ապահովագրական ընկերություն
- ○ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- ○ ապահովագրական բրոքեր
- ○ ներդրումային ընկերություն
- ○ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- ○ կարգավորվող շուկայի օպերատոր
- ○ Կենտրոնական դեպոզիտարիա
- ○ ֆոնդի կառավարիչ
- ○ օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- ○ Բյուրո
- ○ վճարահաշվարկային կազմակերպություն

2. Ղեկավար պաշտոն

2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 կետում նշված կազմակերպությունում
- ○ տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ),
- ○ գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրենության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար)
- ○ գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ
- ○ տնօրենության (վարչության, գործադիր մարմնի) անդամ
- ○ գլխավոր հաշվապահ
- ○ գլխավոր հաշվապահի տեղակալ
- ○ ներքին աուդիտի ղեկավար
- ○ ներքին աուդիտի անդամ
- ○ բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար
- ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
- ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահի (ղեկավարի) տեղակալ
- ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի անդամ
- ○ մասնաճյուղի կառավարիչ (գործադիր տնօրեն)
- ○ մասնաճյուղի գլխավոր հաշվապահ
- ○ օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
- ○ օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
- ○ օպերատորի վերահսկող ծառայության անդամ
- ○ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ
- ○ պատասխանատու ակտուար
- ○ ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ
- ○ ֆոնդի պահառուի ղեկավար
- ○ ֆոնդի պահառուի աշխատակից
- ○ բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատող

2.2. Նշեք՝
- Բանկի ներքին դիտարկումների ստորաբաժանման և պաշտոնի անվանումը, եթե հանդիսանում եք այդ ստորաբաժանման աշխատակից
- Կիրառելի չէ, եթե չեք հանդիսանում ներքին դիտարկումների մարմնի աշխատակից

2.3. Նկարագրեք Ձեր իրավասությունների և պատասխանատվությունների ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

2.4. Նշեք, եթե հանդիսանում եք՝
- կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում
- կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում
- պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում
- պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում

3. Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն, հայրանուն

3.2. Սեռ՝
- արական
- իգական

3.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4. Ծննդավայր

3.5. Քաղաքացիություն

3.6. Նշեք՝
- Անձնագրի տվյալները
- Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
- Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.7. Նշեք՝
- Հանրային ծառայությունների համարանիշը
- Կիրառելի չէ

3.8. Նշեք՝
- Հաշվառման վայր
- Փաստացի բնակության վայր

3.9. Նշեք հեռախոսահամար
- բջջային
- տնային

3.10. Էլեկտրոնային փոստի հասցե

3.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները և դրանք կրելու ժամանակաշրջանները:
Անուն, ազգանուն, հայրանուն
Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (____թ-ից մինչև ____թ.)	Ֆակուլ-տետը	Մասնագի-տությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

4.2. Ինչ լեզուների եք տիրապետում
հայերեն
անգլերեն
ռուսերեն
այլ (նշել լեզուն)

4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակեր-պության անվանում	Կազմակեր-պության գործու-նեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախո-սահամար	Պաշտոնը, հիմնական պարտա-կանությունները	Ազատմա ն հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.4. Նշեք՝

- Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից. վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար

- Ոչ
- Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.4. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող՝ ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով:

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1. Նշեք՝

- Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2. Նշեք՝

- Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,
- Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3. Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները:

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը)	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխա-տանքի վայր	Պաշտոն	Հեռախո-սահամար (բջջ. և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

7.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1. Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալները (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց).

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսահամար (բջջ. և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2. Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

- Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող փոխկապակցված անձ չկա:

9. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասները

10. Այլ փաստաթղթեր

10.1. Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.
Ծանոթացել եմ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

- Այո
- Ոչ

11. Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական,
բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան իրավական ակտերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ամրակցեք ստորագրության նմուշը

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Հավելված 7

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական անձ հանդիսացող հիմնադիրներ						
Ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը		Պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, կապի միջոցները	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասերով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը
1						
2						
...						
Ֆիզիկական անձ հանդիսացող հիմնադիրներ						
Բնակության վայրը		անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասերով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը
1						
2						

Հավելված 8

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(Միջնորդագիր ներկայացնող ներդրումային ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք որպես կառավարիչ վերագրանցման և վերալիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը (առդիր՝ _____ էջ):

Ստորև ներկայացնում ենք փոստային հասցեն _____,
որով համաձայն կլինենք ստանալ ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության լիցենզիան:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:

☐ Հավաստիացնում ենք, որ _____տարածքը և տեխնիկական
(կազմակերպության անվանումը)

հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 10/01-ի 12-րդ գլխով սահմանված պահանջներին:

☐ Պարտավորվում ենք, որ _____տարածքը և տեխնիկական
(կազմակերպության անվանումը)
հագեցվածության չափանիշները լիցենզավորվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 10/01-ի 12-րդ գլխով սահմանված պահանջներին:

Տարածքի վարձակալության (ենթավարձակալության) դեպքում վարձավճարի չափը կազմում է _____ ՀՀ դրամ:

Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժման:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներդրումային ընկերությունը վերագրանցել և վերալիցենզավորել՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ:

Միջնորդագիրը ներկայացնող անձ՝

_____
(ներդրումային ընկերության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(կապի միջոցները, գտնվելու վայրը)

Հավելված 9

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում մշտանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(միջնորդագիր ներկայացնող ներդրումային ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնելու մասին:

Խնդրում ենք ներդրումային ընկերությունը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ վերագրանցելու և վերալիցենզավորելու մասին միջնորդագիրը բավարարելու դեպքում ուժը կորցրած ճանաչել ներդրումային ընկերությանը տրված լիցենզիան՝ ըստ հետևյալ ներդրումային ծառայության (ծառայությունների) տեսակի (տեսակների).

☐ .....
☐ .....
☐ .....

Խնդրում ենք ներդրումային ընկերության կողմից նախկինում մատուցված հետևյալ ծառայությունները թույլատրել մատուցել որպես կառավարիչ վերագրանցումից և վերալիցենզավորումից հետո (նշել տեսակը).

☐ .....
☐ .....
☐ .....

Հայտարարում ենք, որ կատարել ենք օրենքով սահմանված բոլոր պահանջները ներդրումային ընկերության հաճախորդների օրինական շահերը պաշտպանելու համար:

Միջնորդագիրը ներկայացնող անձ՝

_____
(ներդրումային ընկերության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(կապի միջոցները, գտնվելու վայրը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 10

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ **ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ** Ք. ԵՐԵՎԱՆ	Գրանցված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի _____ թվականի թիվ _____ որոշմամբ **ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____** Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքների՝ սույն վկայականը տրվում է _____ *(անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը)* _____ _____ ներդրումային ֆոնդի կառավարչին առ այն, որ այն գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում: **Գրանցման համարը**_____ **Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ** _____ **Հարկ վճարողի հաշվառման համարը** _____ **Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը** _____ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ _____ «__»_____ 20__ թ.

Հավելված 11

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ) ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(միջնորդագիր ներկայացնող կազմակերպության անվանումը)

որոշում է կայացրել

- ☐ կառավարչի,
- ☐ կառավարչի մասնաճյուղի,
- ☐ օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի

գործունեության կանոններում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու (գործունեության կանոնները նոր խմբագրությամբ հաստատելու, նոր գործունեության կանոններ ընդունելու) մասին (առդիր _____ էջ):

Կից ներկայացնում ենք փոփոխություններով տարբերակը (նոր խմբագրությամբ հաստատված գործունեության կանոնները):

Խնդրում ենք գրանցել կատարված փոփոխությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարչի (օտարերկրյա կառավարչի) կառավարման իրավասու անձ

_____ _____

Անուն, ազգանուն *ստորագրություն*

Հավելված 12

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Նոր ստեղծվող և գործող կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող մասնաճյուղի ծրագիրը ներկայացվում է Կենտրոնական բանկ առաջիկա երեք տարիների համար:

2. Ծրագիրն ամբողջական փաստաթուղթ է, որի խնդիրներն են.

1) ծառայել շահագրգիռ անձանց՝ որպես մեկ ամփոփ փաստաթուղթ, որով կարող են գնահատվել կառավարչի՝ ներդրումային և (կամ) կենսաթոշակային ֆոնդի կառավարման, ինչպես նաև ներդրումային ծառայությունների մատուցման գործունեության բնույթը և առանձնահատկությունները,

2) օգնել կառավարչի ղեկավարներին պարզաբանելու, հստակեցնելու և հետազոտելու կառավարչի գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները, ծառայելու կառավարչի ղեկավարներին՝ որպես հիմք, որով կարող են գնահատվել կառավարչի փաստացի գործունեության արդյունքները և արդյունավետությունը,
3) օգնել կառավարչին հետևողականորեն իրականացնելու նախանշված նպատակները և խնդիրները՝ պլանավորվող ժամանակահատվածում,
4) Կենտրոնական բանկ ներկայացնել կառավարչի կողմից պլանավորված գործունեությունը, ինչը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա գնահատելու կառավարչի գործունեությունը և նրա ընտրած ռազմավարությունը:

3. Ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները.
1) իրատեսություն՝ առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն,
2) գնահատելիություն՝ կատարման արդյունքների գնահատման հնարավորություն,
3) համահունչություն՝ գործարար ծրագրի առանձին բաժինների և բաժինների գլուխների միջև պատճառահետևանքային կապի, ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն,
4) կոնկրետություն՝ վերնագրի՝ ըստ էության ներկայացում, վերնագրից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների՝ ըստ էության դիտարկում:

4. Ծրագրի հիմքում կարող են դրվել նաև այլ, սույն Հավելվածի 3-րդ կետով նախատեսված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

5. Կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը լիցենզավորման փաստաթղթերը (Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի մասնաճյուղի գրանցման) Կենտրոնական բանկ ներկայացնելիս, ինչպես նաև մինչև յուրաքանչյուր հաջորդող օրացուցային տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում իր ծրագիրը: Ընդ որում, ծրագրում ներառվում է նաև Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը:

6. Ծրագիրը հաստատվում է կառավարչի իրավասու մարմնի կողմից: Ծրագրին կից աղյուսակները և գրաֆիկները կազմվում են ցուցանիշների ծրագրային կանխատեսումների հիման վրա: Կանխատեսվող ցուցանիշները պետք է հիմնավորված լինեն կոնկրետ հաշվարկներով և արտացոլեն ծրագրում ամրագրված քաղաքականությունը:

7. Ծրագիրը պարունակում է սույն Հավելվածի Ենթահավելված 1-ով սահմանված ծրագրի ձևի նվազագույն տվյալները: Ծրագիրը կարող է ներառել սույն Հավելվածի Ենթահավելված 1-ով սահմանված ծրագրի ձևի տվյալներից բացի լրացուցիչ տվյալներ:

8. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կողմից ներկայացված ծրագիրը սույն Հավելվածի Ենթահավելված 1-ով նշված ծավալը զգալի չափով գերազանցելու դեպքում լրացուցիչ տվյալները պետք է էական և հիմնավոր դեր կատարեն ծրագրում:

Ենթահավելված 1

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ

Բ Ա Ժ Ի Ն I
ՆԱԽԱԲԱՆ
(3-5 էջ)

Գ Լ ՈՒ Խ 1
ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

1. Ներկայացվում է ներդումային ֆոնդի կառավարչի (այսուհետև՝ կառավարիչ) կառավարման մարմնի դիրքորոշումը նախորդ մեկ տարում կառավարչի փաստացի (բացառությամբ՝ կառավարչի գրանցման և լիցենզավորման ժամանակ ներկայացվող գործարար ծրագրի) և պլանավորվող ժամանակաշրջանում հնարավոր զարգացումների ու ընդհանուր ռազմավարության վերաբերյալ, ներառյալ կառավարչի բոլոր կարևոր տնտեսական ցուցանիշների կանխատեսումն ու վերլուծությունը:

Գ Լ ՈՒ Խ 2
ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
(1,5-2 էջ)

2. Ներկայացվում են կառավարչի մասին ընդհանուր տեղեկություններ, այդ թվում կառավարչի հիմնադրման ամսաթիվը (բացառությամբ՝ լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կառավարչի), կազմակերպական-իրավական ձևը, մասնաճյուղերի թիվը և աշխարհագրական տեղաբաշխումը, կառավարչի ղեկավարների և կառավարչի անունից կամ նրա կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց (ֆոնդի կառավարում իրականացնող ֆիզիկական անձինք) իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվության շրջանակները և կառավարչի հաստիքացուցակում նրանց եղած թիվը, հայեցողությամբ՝ այլ տեղեկատվություն:

3. Ներկայացվում է կառավարչի կազմակերպական կառուցվածքը սխեմատիկորեն (1 էջ):

Գ Լ ՈՒ Խ 3
ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ
(0,5-1 էջ)

4. Ներկայացվում են կառավարչի ծրագրի մշակման հիմքում դրված հիմնական ենթադրությունները, մշակող անձի կամ մշակման աշխատանքները կոորդինացնող անձի վերաբերյալ տվյալները (զբաղեցրած պաշտոնը և հեռախոսի համարը):

Բ Ա Ժ Ի Ն II
ԿԱՌԱՎԱՐՉԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(2-4 էջ)

Գ Լ ՈՒ Խ 4
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
(0.5 էջ)

5. Ներկայացվում է կառավարչի առաքելությունը՝ հեռանկարային նպատակը, որի համար գոյություն ունի կառավարիչը: Առաքելությունը պետք է արտացոլի կառավարչի երկարաժամկետ կտրվածքով դերը, տեղը և առանձնահատկությունները ֆինանսական շուկայում:

Գ Լ ՈՒ Խ 5
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
(0,5-1 էջ)

6. Նշվում են կառավարչի կողմից ընդունված միջնաժամկետ նպատակներն ըստ առաջնահերթության: Նպատակները կարող են լինել և՛ քանակական, և՛ որակական, և՛ ընդհանրական, սակայն իրատեսական և դրանց կատարման արդյունքների տեսանկյունից՝ գնահատելի (չափելի): Նպատակները պետք է արտացոլեն կառավարչի միջնաժամկետ կտրվածքով դերը և տեղը, ինչպես նաև նրա առանձնահատկությունները արժեթղթերի շուկայում:

7. Ներկայացվում է սույն գլխում նշված նպատակների ընտրության հիմնավորումը: Եթե սույն ենթահավելվածի 1-ին կետում նշված նպատակները վերանայվել են, ապա ներկայացվում են դրանց վերանայման պատճառներն ու հիմնավորումը, եթե չեն վերանայվել՝ նպատակների՝ նույնը մնալու հիմնավորումը (բացառությամբ՝ ներդրումային ֆոնդի կառավարման լիցենզիա և (կամ) ծառայության (ծառայությունների) մատուցման թույլտվություն ստանալու համար միջնորդագիր ներկայացնող կազմակերպության և ներդրումային ընկերության, որը միջնորդագիր է ներկայացնում որպես կառավարիչ վերագրանցման և վերալիցենզավորման համար):

Գ Լ ՈՒ Խ 6
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
(0,5-1 էջ)

8. Հակիրճ նկարագրվում են այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում է կառավարիչն իր քաղաքականությունն իրականացնելիս, այդ թվում՝ քաղաքականությունը հետևյալ ոլորտներում.

1) ներդրումային ծառայությունների մատուցման գծով հաճախորդների, ֆոնդերի և ֆոնդի մասնակիցների և գործընկերների հետ հարաբերություններում,
2) կառավարչի ղեկավարների և աշխատակիցների հետ հարաբերություններում
3) կառավարչի ցանկությամբ՝ այլ ոլորտներում:

Գ Լ ՈՒ Խ 7
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ
(2-2,5 էջ)

9. Բնութագրվում է կառավարչի գործառնությունների և ծառայությունների ոլորտը և գործարար հիմնական բնութագրիչների կանխատեսումները պլանավորվող ժամանակաշրջանի համար: Մասնավորապես՝

1) գործունեության հիմնական ուղղությունները՝ բացահայտելով առաջնային նշանակություն ունեցող և զգալի ծավալ կազմող գործունեության տեսակները,
2) կառավարչի նախաձեռնությամբ ստեղծվելիք ֆոնդերի և ենթաֆոնդերի տեսակները՝ ըստ Օրենքով սահմանված տեսակների, և դրանց թիվը՝ ըստ յուրաքանչյուր տեսակի,
3) ֆոնդի կառավարման գործունեության, ինչպես նաև Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված ծառայությունների մատուցման (եթե ստացվել է կամ հայցվում է դրա թույլտվությունը) վերաբերյալ գործարար ընթացակարգերի առավել մանրամասն նկարագրությունը,
4) ներդրումների նպատակային հատվածները (ըստ տնտեսության ոլորտների, աշխարհագրական բաշխվածության, ցանկության դեպքում՝ ըստ այլ չափանիշների),
5) ֆոնդի մասնակիցների, ինչպես նաև Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված ծառայությունների գծով հաճախորդների հիմնական խմբերն ըստ տարածաշրջանների, ռեզիդենտության, իրավական կարգավիճակի և/կամ այլ չափանիշների:

Բ Ա Ժ Ի Ն III
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(ծրագրի սույն բաժինը չի պահանջվում այն ծրագրի համար, որը ներկայացվում է կառավարչի գրանցման և լիցենզավորման, ինչպես նաև ներդրումային ընկերությունը՝ որպես կառավարիչ վերագրանցման և վերալիցենզավորման ժամանակ)
(6-13 էջ)

Գ Լ ՈՒ Խ 8
ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
(1-2 էջ)

10. Ներկայացվում են՝

1) նախորդ պլանային ժամանակաշրջանի նպատակներն ըստ առաջնահերթության,
2) նախորդ պլանային ժամանակաշրջանի խնդիրներն ըստ առաջնահերթության:

Գ Լ ՈՒ Խ 9
ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

11. Ներկայացվում է նախորդ մեկ տարվա խնդիրների կատարման ընթացքը, բացահայտվում են խնդիրների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնական պատճառները (1-3 էջ):

12. Վերլուծվում է կառավարչի գործունեությունը և դրա վրա նախորդ մեկ տարվա ընթացքում կառավարչի ներքին միջավայրում տեղի ունեցած երևույթների ազդեցությունը, նախորդ մեկ տարվա կանխատեսումների և փաստացի ցուցանիշների (տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ) շեղումների (եթե շեղումը կազմում է կանխատեսված ցուցանիշի 10 և ավելի տոկոսը) պատճառները, նախատեսված և փաստացի չկատարված միջոցառումների պատճառները հետևյալ կտրվածքով (2-5 էջ).

1) կառավարչի կապիտալիզացումը,
2) կառավարչի կառավարման ներքո գտնվող ֆոնդի տեսակները և դրանց ցանկում կատարված փոփոխությունները, Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված ծառայությունները,
3) շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը,
4) կառավարման համակարգը, այդ թվում՝
   ա. կորպորատիվ կառավարման վերաբերյալ ներքին կանոնակարգումը,
   բ. ներքին հսկողության համակարգը,
   գ. նախորդ ժամանակաշրջանում առավել կարևոր ռիսկերի ներկայացումը, այդ ռիսկերի գնահատումը և դրանց զսպմանն ուղղված միջոցառումները,
5) տարածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի և ներկայացուցչությունների) տեղաբաշխումը,

6) կադրային քաղաքականությունը՝ աշխատակիցների թիվը և որակավորումը, աշխատակիցների նկատմամբ որակավորման պահանջները, դրանց փոփոխությունը:

13. Վերլուծվում են նախորդ մեկ տարվա ընթացքում արտաքին միջավայրում տեղի ունեցած երևույթների ազդեցությունը կառավարչի քաղաքականության և նրա գործունեության արդյունքների վրա՝ ըստ հետևյալ ազդեցության ոլորտների (1-2 էջ).

1) միջազգային շուկաներում,
2) Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում՝ մանրամասնելով մրցակիցների վարքագծի ազդեցությունը,
3) Հայաստանի Հանրապետության տնտեսությունում,
4) օրենսդրական (Հայաստանի Հանրապետության օրենքների, Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերի և պետական այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի) դաշտում:

Գ Լ ՈՒ Խ 10
ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
(1 էջ)

14. 9-րդ գլխում կատարված վերլուծությունից վեր են հանվում և ամփոփ ներկայացվում են կառավարչի ուժեղ և թույլ կողմերը, որոնք դրական կամ բացասական են ազդել նախորդ ժամանակաշրջանի խնդիրների կատարման ընթացքի վրա:

Բ Ա Ժ Ի Ն IV
ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
(2-4 էջ)

Գ Լ ՈՒ Խ 11
ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
(1,5-3 էջ)

15. Նկարագրվում են կառավարչի արտաքին միջավայրում կառավարչի կողմից կանխատեսվող հիմնական այն երևույթները, փոփոխությունները և դրանց հետ կապված ռիսկերը, որոնց հետ կառավարիչը կարող է բախվել պլանավորվող ժամանակաշրջանում: Մասնավորապես՝

1) միջազգային շուկաներում. նկարագրվում են միջազգային շուկաներում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք կարող են ազդել կառավարչի գործունեության վրա,
2) ներքին տնտեսությունում. նկարագրվում են Հայաստանի Հանրապետության տնտեսությունում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձությունները, որոնք կարող են ազդել կառավարչի գործունեության վրա,
3) ֆինանսական շուկաներում. նկարագրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային հատվածում տեղի ունեցող երևույթների վերաբերյալ սպասումները և դրանց հնարավոր ազդեցությունը կառավարչի գործունեության վրա,
4) օրենսդրական (Հայաստանի Հանրապետության օրենքների, Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերի և պետական այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի) դաշտում:

16. Վերլուծությունը կատարվում է միայն սույն գլխի 15-րդ կետում նշված ոլորտներում կառավարչի կողմից կանխատեսվող փոփոխությունները, երևույթները կառավարչի գործունեության վրա ազդելու տեսանկյունից՝ դիտարկելով դրանք որպես կառավարչի գործունեության զարգացման հնարավորություններ կամ խոչընդոտներ, ռիսկեր, սպառնալիքներ: Խուսափել խիստ վերացական արտահայտություններից: Խուսափել երևույթներ նկարագրելուց՝ առանց ներկայացնելու կառավարչի վրա դրա հնարավոր ազդեցությունը: Եթե նշված ոլորտներից որևէ մեկում զարգացումները կառավարչի գնահատականներով չեն ազդելու նրա գործունեության վրա (օրինակ՝ միջազգային շուկաներում տեղի ունեցող երևույթները), ապա հակիրճ նշվում են դրա պատճառները:

Գ Լ ՈՒ Խ 12
ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
(0,5-1 էջ)

17. 11-րդ գլխում կատարված վերլուծությունից վեր են հանվում և ամփոփ ներկայացվում են արտաքին միջավայրում կանխատեսվող երևույթները՝ որպես կառավարչի համար հետագա զարգացման հնարավորություններ և զարգացմանը խոչընդոտող սպառնալիքներ, վտանգներ, ռիսկեր:

Բ Ա Ժ Ի Ն V
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
(4-7 էջ)

Գ Լ ՈՒ Խ 13
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
(1 էջ)

18. Ներկայացվում են պլանավորվող ժամանակահատվածում իրականացվելիք խնդիրները: Խնդիրները պետք է լինեն խիստ կոնկրետ և դրանց կատարման արդյունքների տեսանկյունից՝ գնահատելի (չափելի): Բոլոր խնդիրները պետք է ուղղված լինեն նպատակներին, բխեն նախորդ ժամանակաշրջանի խնդիրների կատարողականից, կառավարչի թույլ և ուժեղ կողմերից, արտաքին հնարավորություններից և վտանգներից:

Գ Լ ՈՒ Խ 14
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
(3-6 էջ)

19. Ներկայացվում են պլանավորվող ժամանակահատվածում իրականացվելիք խնդիրների լուծման նախատեսվող ուղիները, կառավարչի գործունեության կանխատեսվող արդյունքները: Ընտրված ուղիները պետք է համահունչ լինեն կառավարչի կողմից արդեն վերլուծված և ներկայացված ներքին ուժեղ և թույլ կողմերին, արտաքին հնարավորություններին և սպառնալիքներին ներկայացնելով թույլ կողմերից խուսափելու և ուժեղ կողմերի կիրառման հնարավորությունները խնդիրների լուծման մեջ:

20. Պլանավորվող ժամանակաշրջանում խնդիրների լուծման ուղիները ներկայացվում են կառավարչի կողմից գործունեության հետևյալ կողմերով՝ տալով դրանց ընտրության հիմնավորում.

1) կապիտալիզացիայի ուղիները (կապիտալիզացիայի համար անհրաժեշտ և բավարար մակարդակի ապահովման համար իրականացվելիք միջոցառումների նկարագրությունը և դրանց իրատեսության հիմնավորումը, արտաքին աղբյուրներ, ներքին աղբյուրներ),
2) քաղաքականությունը կառավարվող ֆոնդերի, Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված ծառայությունների տեսակների գծով. կառավարվող ֆոնդերի մեծությունները, ծառայությունների կանխատեսվող ծավալները և կառուցվածքը, ներդրողների և (կամ) հաճախորդների նպատակային խմբերը և միջոցառումները՝ ուղղված շուկայի այդ հատվածի ներդրողների և (կամ) հաճախորդների խմբերի գրավմանը և այլն (եթե կառավարիչը մտադիր է կառավարել կենսաթոշակային ֆոնդ, ապա ներկայացվում է նաև կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների կանխատեսվող թիվը և տարիքային խումբը),
3) յուրաքանչյուր ֆոնդի կանխատեսվող ակտիվների արժեքը և դրանց աճի հետագա զարգացման կանխատեսումը (յուրաքանչյուր ֆոնդի մասով), նման կանխատեսման հիմնավորումը,
4) գործունեության կանխատեսվող ֆինանսական արդյունքները. եկամուտների և ծախսերի կանխատեսվող կառուցվածքը, շահույթը, շահութաբերության ցուցանիշների կանխատեսվող մակարդակները և դրանց հիմնավորումը, շահաբաժինների վճարման քաղաքականությունը,
5) կառավարման համակարգի կատարելագործման ուղիները,
6) տարածաշրջանային քաղաքականություն (տարածքային ստորաբաժանումների տեղաբաշխում և վերակազմավորում),
7) կադրային քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ,
8) մարքեթինգային քաղաքականություն. ինչ մարքեթինգային տեխնոլոգիաներ է կիրառելու կամ շեշտադրելու կառավարիչը պլանավորված գործունեությունը (ֆոնդի կառավարման գործունեության, Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ կամ 4-րդ և 5-րդ մասերով մատուցվող ծառայությունների ծավալներն ընդլայնելու, նոր գործիքները, ծառայությունները ներդնելու, ծառայությունների որակը բարձրացնելու) ապահովելու, պահանջարկը ուսումնասիրելու ուղղությամբ:

Բ Ա Ժ Ի Ն VI
ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
(6-8 էջ)

Գ Լ ՈՒ Խ 15
ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
(1 էջ)

21. Ներկայացվում է, թե ինչ կարգով է կատարվում ծրագրի մշակման գործընթացը, ով է կատարում ծրագրի կատարողականի գնահատումը, կատարման հսկողությունը, ինչ գործընթացով է դա իրականացվում:

Գ Լ ՈՒ Խ 16
ԾՐԱԳՐԻՆ ԿԻՑ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԸ
(5-7 էջ)

22. Ծրագրում նշվում են.
1) ակտիվների ծավալը, կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի մեծությունը՝ համաձայն աղյուսակ 1-ի,
2) կառավարչի եկամուտների և ծախսերի կանխատեսումը՝ ըստ գործունեության տեսակների՝ համաձայն աղյուսակի 2-ի,
3) կառավարվող յուրաքանչյուր տեսակի ֆոնդի վերաբերյալ տվյալներ՝ համաձայն աղյուսակ 3-ի,
4) արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ֆինանսական ակտիվների վերաբերյալ կանխատեսումներ՝ համաձայն աղյուսակ 4-ի,
5) կառավարչի՝ որպես ինստիտուցիոնալ կառույցի կառավարման արդյունավետության ցուցանիշների կանխատեսումները՝ համաձայն աղյուսակ 5-ի:

23. Ծրագրին կից աղյուսակները լրացվում են 3 տարվա կտրվածքով: Եթե ծրագիրը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ 20X թ. փետրվարի 15-ին, ապա սյունակներում ամսաթվերը լրացվում են հետևյալ կերպ.
1) Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ (20(X-1) թ. դեկտեմբերի 31),
2) 1-ին պլանավորվող տարվա հուլիսի 1 (20X թ. հուլիսի 1),
3) 2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1 (20(X+1) թ. հունվարի 1),
4) 2-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1 (20(X+1) թ. հուլիսի 1),
5) 3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1 (20(X+2) թ. հունվարի 1),
6) 3-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1 (20(X+2) թ. հուլիսի 1),
7) 4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1 (20(X+3) թ. հունվարի 1):

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

(հզ. դրամ)

	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին պլանավորվող տարվա հուլիսի 1	2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	2-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	3-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1
1. Ակտիվներ							
1) Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում							
2) Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ							
3) Պահանջներ հաճախորդների նկատմամբ							
4) Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ							
5) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ							
6) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ							
7) Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում							
8) Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ							
9) Հետաձգված հարկային ակտիվներ							
10) Այլ ակտիվներ							
2. Ընդամենը՝ ակտիվներ							
3. Պարտավորություններ և կապիտալ							
1) Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ							
2) Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ							
3) Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն							
4) Կառավարչի թողարկված արժեթղթեր							
5) Հետաձգված հարկային պարտավորություններ							
6) Պահուստներ							
7) Այլ պարտավորություններ							
Ընդամենը՝ պարտավորություններ							
2. Կանոնադրական կապիտալ							
3. Էմիսիոն եկամուտ							
4. Պահուստներ՝							
1) Գլխավոր պահուստ							
2) Վերագնահատման պահուստներ							
5. Չբաշխված շահույթ (վնաս)							
6. Կապիտալի այլ տարրեր							
Ընդամենը՝ կապիտալ							
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ							

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

(հզ. դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին կապիտալիզվող տարվա դրությամբ	2-րդ կապիտալիզվող տարվա դրությամբ	2-րդ կապիտալիզվող տարվա դրությամբ	3-րդ կապիտալիզվող տարվա դրությամբ	3-րդ կապիտալիզվող տարվա դրությամբ	4-րդ կապիտալիզվող տարվա դրությամբ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ							
Տոկոսային և նմանատիպ ծախսեր							
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ							
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ							
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր							
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ							
Եկամուտ շահաբաժիններից							
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից							
Այլ գործառնական եկամուտներ							
Գործառնական եկամուտներ							
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին							
Ընդհանուր վարչական ծախսեր							
Այլ գործառնական ծախսեր							
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)							
Շահույթը (վնասը) մինչև հարկումը							
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)							
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)							
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)							
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)							

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՖՈՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հզ. դրամ)

Ֆոնդի տեսակը				
Ցուցանիշի անվանումը	Փաստացի մեծությունը (նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)	Առաջիկա տարիներ (տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)		
		1-ին	2-րդ	3-րդ
1. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը				
2. Ֆոնդի ակտիվների շահութաբերության մակարդակը				

ԱՂՅՈՒՍԱԿ 4

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հզ. դրամ)

Ցուցանիշի անվանումը	**Փաստացի մեծությունը (նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)**	**Առաջիկա տարիներ (տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)**		
		1-ին	2-րդ	3-րդ
1. կառավարվող դրամական միջոցներ, այդ թվում՝				
1.1. ՀՀ դրամ				
1.2. բոլոր այլ արժույթներ (ծրագիրը ներկայացնելու պահի դրությամբ փոխարժեքով)				
2. կառավարվող արժեթղթեր, այդ թվում՝				
1.1. պետական				
1.2. ոչ պետական				

ԱՂՅՈՒՍԱԿ 5

ԿԱՌԱՎԱՐՉԻ՝ ՈՐՊԵՍ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	Փաստացի մեծությունը (նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)	Առաջիկա տարիներ (տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)		
		1-ին	2-րդ	3-րդ
Կառավարման տնտեսական արդյունավետությունը՝ զուտ շահույթ/համախառն ծախսեր				
Շահութաբերությունն ըստ ակտիվների՝ զուտ շահույթ/համախառն ակտիվներ				
Շահութաբերությունն ըստ կապիտալի զուտ շահույթ/ընդհանուր կապիտալ				
Անձնակազմի կառուցվածքի արդյունավետությունը՝				
Վարչական աշխատողների թիվ (վարչական աշխատողներ են համարվում կառավարչի բուն գործունեությանն ուղղակիորեն առնչվող աշխատողները)				
Սպասարկող աշխատողների թիվ (սպասարկող աշխատողներ են համարվում կառավարչի բուն գործունեությանն ուղղակիորեն չառնչվող աշխատողները (օրինակ՝ հավաքարար, վարորդ)				
վարչական աշխատողների թիվ/սպասարկող աշխատողների թիվ				
Կառավարման արդյունավետությունը՝				
աշխատողների թիվ				
զուտ շահույթ/աշխատողների թիվ				
Կադրերի վերապատրաստում՝ ուսուցման ծախսեր/վարչական աշխատողների թիվ				
Կադրերի վարձատրություն՝ վարչական աշխատողների աշխատավարձ և այլ վճարումներ/վարչական աշխատողների թիվ				
Այլ ցուցանիշներ՝ կառավարչի հայեցողությամբ				
Վաճառքի խթանում՝ գովազդի ծախսեր/ընդհանուր ծախսեր				

Հավելված 13

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Փոխկապակցվածության հիմքը
(այստեղ նշվում են այն անձի մասին տվյալներ, որի միջոցով իրավաբանական անձը հանդիսանում է փոխկապակցված անձ)

Անձի անվանումը
(անունը, ազգանունը, անձնագրի տվյալներ) _____

2. Փոխկապակցված իրավաբանական անձի (կազմակերպության) տվյալներ
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն, ըստ որում՝ սույն տեղեկանքի լրացման ժամանակ միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները:)

2.1. Անվանումը _____
2.2. Գտնվելու վայրը

2.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ համարը _____
օր/ամիս/տարի

2.4. Փոխկապակցվածության տեսակ. _____

3. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի նշանակալից մասնակիցների վերաբերյալ
(ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել 3.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները)

3.1. Չայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք.

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

3.2. Չայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք

Անունը, ազգանունը, անձնագրի համարը	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

4. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահի և անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ *(ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև սույն կանոնակարգի Հավելված 6-ը)*

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)
1.		
2.		

5. Այլ տեղեկատվություն

5.1. Արդյո՞ք փոխկապակցված իրավաբանական անձն ունի 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

5.2. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

6. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*
Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ներդրումային ֆոնդի կառավարչի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 14

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Փոխկապակցվածության հիմքը
(այստեղ նշվում է այն անձի մասին տվյալներ, որի միջոցով ֆիզիկական անձը հանդիսանում է փոխկապակցված անձ)

Անձի անվանումը
(անունը, ազգանունը, անձնագրի տվյալները) _____

2. Փոխկապակցված ֆիզիկական անձի տվյալներ
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն, ընդ որում՝ սույն տեղեկանքի լրացման ժամանակ միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը և չափահաս երեխաները)

2.1. Անունը, ազգանունը _____

2.2. Բնակության վայրը

2.3.Անձնագրի տվյալներ _____ _____

2.4. Փոխկապակցվածության տեսակ _____

3. Այլ տեղեկատվություն

3.1. Արդյո՞ք ֆիզիկական անձն ունի 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

3.2. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

4. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:
Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ներդրումային ֆոնդի կառավարչի կառավարման իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 15

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

Կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____

(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

Ընկերության պետական գրանցման համարը

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ընկերության լրիվ անվանումը

Հավելված 16

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

Կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____

(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է _____

(իրավասու մարմնի անվանում)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխության հերթական համարը _____

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) պետական գրանցման համարը

_____

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

(Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը)

Հավելված 17

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի Հավելվածի

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

Ներկայացնում ենք սույն տեղեկանքում նշված անձի վերաբերյալ տեղեկությունները:

Տեղեկանք
Ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը
☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները**
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ներկայացուցչության ղեկավար Դուք պետք է հանդիսանաք:)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ ○ բանկ ○ վարկային կազմակերպություն ○ ապահովագրական ընկերություն ○ ներդրումային ընկերություն ○ ֆոնդի կառավարիչ ○ վճարահաշվարկային կազմակերպություն
1.3. Նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:
2. Անձնական տվյալներ
2.1. Անուն, ազգանուն, հայրանուն
2.2. Սեռ՝ արական իգական
2.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
2.4. Ծննդավայր
2.5. Քաղաքացիություն
2.6. Նշեք՝ ○ Անձնագրի տվյալները ○ Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում) ○ Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
2.7. Նշեք՝ ○ Հանրային ծառայության համարանիշը ○ Կիրառելի չէ
2.8. Նշեք՝ ○ Հաշվառման վայր ○ Փաստացի բնակության վայր
2.9. Նշեք հեռախոսահամար ○ բջջային ○ տնային

2.10. Էլեկտրոնային փոստի հասցե

2.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները

Անուն, ազգանուն, հայրանուն
Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

3. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

3.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (____թ-ից մինչև ____թ.)	Ֆակուլ-տետը	Մասնա-գիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

3.2. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակեր-պության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսա-համար	Պաշտոնը, հիմնական պարտականու-թյունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք. եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունը արժանահավատ է և ամբողջական և վերոնշված անձի ստորագրությունը համապատասխանում է իսկականին:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն _____
(Ամրակցեք ստորագրության նմուշը)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել ներդրումային ընկերությունների գրանցման և լիցենզավորման ընթացակարգերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերը, 35-րդ հոդվածի 2-րդ մասը, 36-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ մասը, 38-րդ հոդվածի 10-րդ կետը, 40-րդ հոդվածը, 43-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, 44-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերը, 45-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 8-րդ մասերը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 54-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ մասերը, 221-րդ հոդվածի 1-ին մասը, 222-րդ հոդվածի 17-րդ մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը (այսուհետ՝ Կանոնակարգ կամ Կանոնակարգ 4/01) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 հուլիսի 2014 թ., N 201-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.2014 թ. (ՀՀՊՏ N19 (498)1, 15.08.2014):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 201-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/01

Բ Ա Ժ Ի Ն Ⅰ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ Լ Ո Ւ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումային ընկերության գրանցման և լիցենզավորման կարգը,
2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության, ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման կարգը,
3) ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու համաձայնություն ստանալու կարգը,
4) բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին Կենտրոնական բանկին տեղեկացման կարգը,
5) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող կանոնադրություններում, ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման կարգը,
6) ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության դադարեցման (ներառյալ՝ ժամանակավոր դադարեցման) կարգը և պայմանները,
7) ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,
8) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության մասնաճյուղի գործարար ծրագրի ձևը, ինչպես նաև գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,
9) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի և ներդրումային ընկերության մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները,
10) ներդրումային ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքերը,
11) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները և տեղեկությունները:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրման միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի էֆ» ֆորմատով, բացառությամբ՝ ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկանքի և ներդրումային ընկերության,

օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, ներդրումային ընկերության մասնաճյուղի գործարար ծրագրին կից աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել ֆորմատով: Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործարար ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

3. Նոր ստեղծվող ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում՝ ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի էֆ» ֆորմատով:

4. Գործող ներդրումային ընկերությունների և դրանց տարածքային ստորաբաժանումների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

5. Նոր ստեղծվող ներդրումային ընկերությունների, ինչպես նաև օտարերկրյա ներդրումային ընկերությունների նոր ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վրա սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք, երբ արդեն միացված են Սի-Բի-էյ-նեթ համակարգին և ստացել են անվտանգության համապատասխան հավաստագրերը, Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները կրկին ներկայացնում են Կենտրոնական բանկ ՍԻ-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով՝ «Փի Դի էֆ» ֆորմատով էլեկտրոնային-թվային ստորագրությամբ համապատասխան ստորագրությունը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Սույն կանոնակարգով նախատեսված կարգով Կենտրոնական բանկ գրանցման ներկայացված ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի, օտարերկրյա ներդրումային ընկերությունների ներկայացուցչությունների, ներդրումային ընկերությունների՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գրանցված կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) տրամադրվում են համապատասխան անձին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Նոր ստեղծվող ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի, օտարերկրյա ներդրումային ընկերությունների ներկայացուցչությունների համար սույն կետով սահմանված հնգօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրությունների էլեկտրոնային տարբերակները Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

7. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրերի ձևերի) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

8. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Ներդրումային ընկերության անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ընդլայնումը
Օրինակ՝								
ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադրական փոփ.	_	250913	.	pdf

9. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

10. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը

կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:

11. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

12. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

13. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացվի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշները կիրառվում են հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,
2) եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշներ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,
3) եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

15. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն.

1) հաշվապահական հաշվառման այն ստանդարտների համապատասխան, որոնք «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս և ներկայացնելիս, կամ
2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

16. Սույն կանոնակարգով պահանջվող օտարերկրյա իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին կից աուդիտորական եզրակացությունները ներկայացվում են դրանց առկայության դեպքում, բացառությամբ՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար իրավաբանական անձանցից պահանջվող ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող աուդիտորական եզրակացությունների:

17. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և/կամ վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

18. Կենտրոնական բանկի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դիմումի, միջնորդագրի կամ ցանկացած այլ միջնորդության քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

19. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի համալրումը (կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացումը) Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում ներդրումային ընկերության հիմնադիրները (ներդրումային ընկերությունը) Կենտրոնական բանկ են ներկայացնում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

20. Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ ներդրումային ծառայությունների մատուցման կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում

է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն կետով սահմանված Կենտրոնական բանկի պարտավորության չկատարումը կառավարչին չի ազատում օրենքով սահմանված պատասխանատվությունից կամ սահմանափակում երրորդ անձանց նկատմամբ նրա պատասխանատվությունը:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Կենտրոնական բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***«Օրենք»***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
3) ***«հանձնաժողով»***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
4) ***«Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ»***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ այլ օրենքների համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
5) ***«ֆինանսական խումբ (միություն)»***՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,
6) ***«ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ֆոնդ, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն, վճարահաշվարկային կազմակերպություն,
7) ***«ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանում»***՝ ներդրումային ընկերության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն,
8) ***«հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
9) ***«անձնագրի տվյալներ»***՝անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
10) **«ֆինանսական հաշվետվություններ»**՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

22. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ

23. Սույն կանոնակարգի իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ֆինանսական վիճակի առկա կամ հնարավոր վատթարացում են համարվում հետևյալ դեպքերը, երբ.

1) ներդրումային ծառայություններ մատուցող անձը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվը (նորմատիվները) կամ հավանական է հիմնական տնտեսական նորմատիվի (նորմատիվների) խախտումը, և (կամ)
2) ներդրումային ծառայություններ մատուցող անձի մոտ հավանական է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում սահմանված անվճարունակության հիմքերի առաջացումը:

ԳԼՈՒԽ 4
ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

24. Բանկը ներդրումային ծառայությունների մատուցման մասին այդ ծառայությունների մատուցումը սկսելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկին տեղեկացնում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 23-ի:

25. Բանկը սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված տեղեկացմանը կից Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարների մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի, ընդ որում՝ ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ևս ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի,

2) ներդրումային ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնող աշխատակիցների ցուցակը և նրանց մասնագիտական որակավորման վկայականների պատճենները,
3) ներդրումային ծառայությունների մատուցման կանոնների նախագծերը:

ԲԱԺԻՆ II
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 5
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26. Ներդրումային ընկերության պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի, ընդ որում, դիմումի մեջ ներառվում է ներդրումային ընկերության գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. ստեղծվող ներդրումային ընկերության ստեղծման մասին հիմնադիր պայմանագիրը (որոշումը),

գ. ներդրումային ընկերության ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի, իսկ ղեկավարի կամ նրա գործունեության մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի, ընդ որում՝ սույն կանոնակարգի Հավելված 8-ում ներառվում են ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները,

դ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 26-ի,

ե. ներդրումային ընկերության ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա ներդրումային ընկերության ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետի հիման վրա սահմանված՝ Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

զ. ընկերության բաժնետերերի (մասնակիցների) վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանքը) ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի,

է. որպես Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված ներդրումային ընկերության գործունեության կանոնակարգերի նախագծեր ներկայացվում են առնվազն ներդրումային ընկերության գործունեությունը կարգավորող այն բոլոր ներքին իրավական ակտերը, որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է գործող ներդրումային ընկերության համար՝ լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ,

ը. ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց նշանակալից մասնակցության նախնական համաձայնություն ստանալու համար ներկայացվում են սույն կանոնակարգի 3-րդ բաժնով սահմանված փաստաթղթերը,

թ. ներդրումային ընկերության հիմնադիրների ժողովի հաստատած կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

3) սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված պահանջներին բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է ներդրումային ընկերության գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

4) ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 21-ի և Հավելված 22-ի,

5) ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 21-ի և Հավելված 22-ի,

6) ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

27. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում տվյալ ենթակետերում նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող տեղեկությունները,
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
3) միջազգային կազմակերպություն, կամ
4) միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից սահմանված «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ (Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում):

28. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

29. Ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, պետական գրանցման համարները և գտնվելու վայրերը, ինչպես նաև փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, հանրային ծառայությունների համարանիշները, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի տվյալները:

30. Ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները, փոխարենը ներկայացվում է սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հաշվետվությունը (տեղեկությունները), ընդ որում, միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից.

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

31. Կենտրոնական բանկը կարող է ներդրումային ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով, իսկ եթե ներդրումային ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա նաև սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

32. Եթե սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով կամ 0-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են համապատասխանաբար իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկ կարող է ներկայացվել համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

33. Ներդրումային ընկերությանը լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի: Ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 1-ում «Ներդրումային ծառայության անվանումը» տողում լրացվում են ներդրումային այն ծառայությունները, որոնց իրականացման համար ներդրումային ընկերությունը ստացել է լիցենզիա:

34. Ներդրումային ընկերության գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի:

ԳԼՈՒԽ 6
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

35. Օտարերկրյա ներդրումային ընկերությունը մասնաճյուղի պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի:

բ. մասնաճյուղի գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 26-ի,

գ. օտարերկրյա ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 27-ի:

դ. օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի, իսկ ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի, ընդ որում մասնաճյուղի ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի,

ե. որպես Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության կանոնակարգերի նախագծեր ներկայացվում են առնվազն օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեությունը կարգավորող այն բոլոր ներքին իրավական ակտերը, որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է օտարերկրյա ներդրումային ընկերության գործող մասնաճյուղի համար՝ լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ,

զ. օտարերկրյա ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) մասնաճյուղի տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
3) սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր,
4) օտարերկրյա ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 21-ի և Հավելված 22-ի,
5) օտարերկրյա ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 21-ի և Հավելված 22-ի,
6) օտարերկրյա ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,
7) օտարերկրյա ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց համար սույն կանոնակարգի 0-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը,
8) հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության վարկանիշն ըստ Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների առնվազն եղել է «AA-» կամ ըստ Մուդիզ վարկանշային գործակալության կողմից տրամադրված վարկանիշի առնվազն եղել է «Aa3»՝ սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերությունն ունի երկու և ավելի վարկանշող կազմակեր-

պությունների կողմից տրված վարկանիշներ, ապա սույն ենթակետի իմաստով հիմք է ընդունվում դրանցից խստագույնը (ամենացածրը),

9) հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության գրանցման վայրի երկրի արժեթղթերի շուկայի կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմինը ստորագրել է Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության (IOSCO (ԱյՕուԷսՍիՕու)) «Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» բազմակողմ համաձայնության հուշագիրը,

10) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորություններն օտարերկրյա ներդրումային ընկերության կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

11) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերությանը գրանցման վայրի երկրի ներդրումային ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա ներդրումային ընկերությունը չի խախտել տվյալ երկրի ներդրումային գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում,

12) Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության անունով ավանդի ներդրումը հավաստող փաստաթղթեր: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված ավանդը պետք է առնվազն կազմի.

ա. 8 000 000 ՀՀ դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 8 000 000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ներդրումային ընկերությունը դիմել է առանց տիրապետելու հաճախորդի միջոցներին (արժեթղթերին և (կամ) դրամական միջոցներին) հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման և (կամ) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման ծառայության, և(կամ) արժեթղթերում ներդրումների հետ կապված հաճախորդներին խորհրդատվության տրամադրման ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար,

բ. 20 000 000 ՀՀ դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 20 000 000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ներդրումային ընկերությունը դիմել է հաճախորդի միջոցներին (արժեթղթերին և (կամ) դրամական միջոցներին) տիրապետմամբ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման ծառայության և (կամ) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար,

գ. 20 000 000 ՀՀ դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 20 000 000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ներդրումային ընկերությունը դիմել է արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության կամ արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար,

դ. 120 000 000 ՀՀ դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 120 000 000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ներդրումային ընկերությունը դիմել է իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարման ծառայության, արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխման ծառայության, արժեթղթերի պահառության ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար,

ե. միաժամանակ մի քանի տեսակի ծառայությունների մատուցման թույլտվություն ստանալու համար դիմած օտարերկրյա ներդրումային ընկերության կողմից ներդրված ավանդի մեծությունը պետք է բավարարի սույն ենթակետով տվյալ ներդրումային ծառայության կամ ոչ հիմնական ծառայության համար սահմանված չափերից առավելագույնին,

զ. սույն ենթակետով սահմանված ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերությունը ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում՝ սույն ենթակետով սահմանված պայմաններով,

13) հայտարարություն այն մասին, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության գրանցման վայրի երկիրը համարվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր և/կամ տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ որևէ հայտարարություն չի հրապարակվել,
14) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,
15) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը:

36. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.
1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
2) միջազգային կազմակերպություն, կամ
3) միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից սահմանված «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ (Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում):

37. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.
1) օտարերկրյա ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

38. Օտարերկրյա ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, պետական գրանցման համարները և գտնվելու վայրերը, ինչպես նաև փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, հանրային ծառայությունների համարանիշը, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձնագրի տվյալները:

39. Օտարերկրյա ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները, փոխարենը ներկայացվում է սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հաշվետվությունը (տեղեկությունները), ընդ որում՝ միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից.
1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

40. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցման և լիցենզավորման գործընթացի ժամանակ օտարերկրյա ներդրումային ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով, իսկ եթե օտարերկրյա ներդրումային ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

41. Եթե սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով կամ 0-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են համապատասխանաբար իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկ կարող է ներկայացվել համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

42. Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին տրամադրվում է լիցենզիա, եթե Կենտրոնական բանկի և մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ներդրումային ընկերության գրանցման երկրի ներդրումային ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) ներդրումային ոլորտում համագործակցության վերաբերյալ:

43. Օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի: Ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 1-ում «Ներդրումային ծառայության անվանումը» տողում լրացվում են ներդրումային այն ծառայությունները, որոնց իրականացման համար օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը ստացել է լիցենզիա:

44. Օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի:

ԳԼՈՒԽ 7
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

45. Օտարերկրյա ներդրումային ընկերությունը ներկայացուցչության գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման համար դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի, ընդ որում, դիմումում ներկայացվում է նաև ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

բ. օտարերկրյա ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 27-ի,

2) օտարերկրյա ներդրումային ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,

3) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը.

4) ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,

5) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի:

46. Օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի:

ԳԼՈՒԽ 8
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

47. Գործող ներդրումային ընկերությունը լրացուցիչ ներդրումային ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերը: Ընդ որում՝ լրացուցիչ ներդրումային ծառայություն մատուցելու լիցենզիայի դիմումը ներկայացվում է դիմումատուի կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի, իսկ գործարար ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 26-ի:

ԳԼՈՒԽ 9
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

48. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղը գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) Օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում

ա. մասնաճյուղ գրանցելու վերաբերյալ ներդրումային ընկերության միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի, ընդ որում միջնորդագրում ներառվում է ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. մասնաճյուղի գործարար ծրագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 26-ի,

գ. մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի, իսկ ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի, ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 8-ում ներառվում են մասնաճյուղի ղեկավարների ստորագրությունների նմուշները,

դ. մասնաճյուղի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,
3) ներդրումային ընկերության կանոնադրությամբ ամրագրված կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,
4) առանձնացված տարածքի նկատմամբ ներդրումային ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
5) մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,
6) սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ բացառությամբ, եթե սույն կետով սահմանված միջնորդագրում կատարվել է նշագրում՝ մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը միջնորդագրում նշված ժամկետում համապատասխանեցնելու մասին:

49. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչությունը գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) Օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝ ներդրումային ընկերության ներկայացուցչության գրանցման համար դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի, որը ներառում է ներկայացուցչություն բացելու հիմնավորումը, իսկ կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,
3) ներկայացուցչության տարածքի նկատմամբ ներդրումային ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը, ընդ որում ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
4) ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչության ղեկավար ընտրելու կամ նշանակելու մասին,
5) ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,
6) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի:

50. Ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչության գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

ԳԼՈՒԽ 10
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

51. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում միջնորդագիրը ներկայացնում է համաձայն Հավելված 5-ի, իսկ գործարար ծրագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 26-ի,
2) ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ բացելու մասին,

3) մասնաճյուղի կանոնադրությունը,
4) մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 7-ի, մասնաճյուղի ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանք համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի, ընդ որում, Հավելված 8-ում ներառվում են մասնաճյուղի ղեկավարների ստորագրությունների նմուշները,
5) ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,
6) սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ բացառությամբ, եթե սույն կետով սահմանված միջնորդագրում կատարվել է նշագրում՝ մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը միջնորդագրում նշված ժամկետում համապատասխանեցնելու մասին:
7) առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցման (և (կամ) լիցենզավորման) պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

52. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝ միջնորդագիրը ներկայացնում է համաձայն Հավելված 28-ի, որում ներառվում է նաև ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,
2) ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն բացելու մասին,
3) ներկայացուցչության կանոնադրությունը,
4) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի, ընդ որում, Հավելված 9-ում ներառվում են ներկայացուցչության ղեկավարների ստորագրությունների նմուշները,
5) ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչության ղեկավարներ նշանակելու կամ ընտրելու մասին,
6) առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է ներդրումային ընկերության ներկայացուցչության գրանցման (և (կամ) լիցենզավորման) պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

53. Ներդրումային ընկերությունը համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորելուց, արտոնագրելուց) հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ է ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ կցելով մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:

ԳԼՈՒԽ 11
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

54. Ներդրումային ընկերությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի և/կամ ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Ընդ որում՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ իրավասու կառավարման մարմնի որոշման մեջ անհրաժեշտ է հստակ նշել այն ժամկետը, որի ավարտից հետո մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է վերսկսված կամ գործունեությունը վերսկսելուց առնվազն 20 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

55. Ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունը ստանալու նպատակով ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցումը թույլատրելու մասին միջնորդագիր՝ ներդրումային ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին,
3) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման հիմնավորումները,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ ներդրումային ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները,
5) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

56. Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր դադարեցնել, եթե՝

1) փաստաթղթերում ներկայացվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են,
3) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ներդրումային ընկերության հաճախորդների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ,
4) տվյալ տարածաշրջանում բացակայում է ներդրումային ծառայությունների մատուցումը որևէ այլ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից,
5) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ ներդրումային ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և իրականացման ժամկետները անիրատեսական են:

57. Սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլ տալ ժամանակավորապես դադարեցնել ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեությունը կամ թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ներդրումային ընկերությանը:

58. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

59. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին ներդրումային ընկերությանը չտեղեկացնելու դեպքում մասնաճյուղի գործունեությունը ժամանակավորապես դադարեցման թույլտվությունը համարվում է տրված:

60. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունը մասնաճյուղի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

61. Կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ներդրումային ընկերության մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը:

62. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներդրումային ընկերության կողմից մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկի որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

63. Ներդրումային ընկերությունը կամ օտարերկրյա ներդրումային ընկերությունը ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման համար ներդրումային ընկերության միջնորդագիրը՝ ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,

2) ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության իրավասու կառավարման մարմնի որոշումը՝ ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին:

64. Սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը նախագահի որոշմամբ թույլ է տալիս ժամանակավորապես դադարեցնել ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեությունը կամ թույլ չի տալիս, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ կեղծ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ներդրումային ընկերությանը կամ օտարերկրյա ներդրումային ընկերությանը:

65. Ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության ժամանակավորապես դադարեցումը թույլատրելու որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունն այդ տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը տեղակայում է ներդրումային ընկերության ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը:

Գ Լ ՈՒ Խ 12
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

66. Մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման մասին միջնորդագիր՝ ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,
3) մասնաճյուղի գործունեության դադարեցման հիմնավորումները,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ ներդրումային ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները,
5) մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

67. Սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլատրել դադարեցնել ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեությունը կամ որոշում է կայացնում թույլ չտալու՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ներդրումային ընկերությանը:

68. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

69. Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ դադարեցնել մասնաճյուղի գործունեությունը սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

70. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլ չտալու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին ներդրումային ընկերությանը չտեղեկացնելու դեպքում ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվությունը համարվում է տրված:

71. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունը մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է ներդրումային ընկերության ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

72. Կենտրոնական բանկի կողմից գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետներում ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) Ներդրումային ընկերության մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը,
2) Ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցման վկայականը:

73. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետներում ներդրումային ընկերության կողմից սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության դադարեցման վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

74. Կենտրոնական բանկը ներդրումային ընկերության մասնաճյուղին հանում է գրանցումից, եթե մասնաճյուղը վեց ամսվա ընթացքում չի իրականացրել ներդրումային գործունեություն:

75. Ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցման դեպքում ներդրումային ընկերությունը կամ օտարերկրյա ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչությունը գրանցումից հանելու մասին միջնորդագիր՝ ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին իրավասու կառավարման մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,
3) ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գրանցման վկայականը:

76. Սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո Կենտրոնական բանկը տասն աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում թույլ տալ ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցումը կամ թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ներդրումային ընկերությանը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ կեղծ:

77. Ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցումը թույլ տալու մասին Կենտրոնական բանկի որոշումն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունն այդ տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը տեղակայում է ներդրումային ընկերության ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը:

78. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը այլ երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցումից հանելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ փաստը վկայող փաստաթուղթը: Սույն կետով նշված փաստաթուղթը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից համապատասխան գրառում կատարելու համար:

ԳԼՈՒԽ 13
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

79. Գրանցման վկայականը կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում ներդրումային ընկերությունը կամ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում գրանցման վկայականի կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար, ինչպես նաև լիցենզիայի, գրանցման վկայականի կորստի մասին Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակելու համար: Դիմումին կցվում է գրանցման վկայականի կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում), գրանցման վկայականի կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը, եթե օրենսդրությամբ նախատեսված է պետական տուրքի վճարում:

80. Կենտրոնական բանկը ներդրումային ընկերությանը կամ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին տրամադրում է կորած, ոչ պիտանի դարձած կամ ոչնչացված գրանցման վկայականի կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի կրկնօրինակը՝ համապատասխան փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

81. Կորած գրանցման վկայականը կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան գտնելու դեպքում ներդրումային ընկերությունը կամ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնա-

ծյուղը գտնված գրանցման վկայականը կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

82. Գրանցման վկայականի կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի կրկնօրինակի վերևի աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

83. Գրանցման վկայականի կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում գրանցման վկայականի կամ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի նոր կրկնօրինակը տրամադրվում է սույն գլխով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 14
ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԱՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

84. Օրենքով սահմանված հիմքերով ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը կից գրությամբ լիցենզիան, իսկ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի դեպքում՝ նաև օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

85. Ներդրումային ընկերության լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունը կից գրությամբ ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում գործող տարածքային ստորաբաժանումների գրանցման վկայականները վերադարձնում է Կենտրոնական բանկ:

86. Օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության, ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված տարածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կից գրությամբ Կենտրոնական բանկ են վերադարձվում համապատասխան գրանցման վկայականները:

87. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ներդրումային ընկերության լուծարային հաշվեկշիռը հաստատելու, ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարելու մասին Կենտրոնական բանկի որոշման բողոքարկումը հիմք չէ սահմանված ժամկետում համապատասխան լիցենզիան կամ գրանցման վկայականը չվերադարձնելու համար:

Բ Ա Ժ Ի Ն III
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Գ Լ ՈՒ Խ 15
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

88. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար համապատասխան ներդրումային ընկերության միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը

1) իրավաբանական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,
2) իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը տվյալ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,
3) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ 16-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ ներդրու-

մային ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում:

6) իրավաբանական անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 17-ի և Հավելված 18-ի:

89. Եթե իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում (միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում սույն կետի 1-ին, 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից) սույն կանոնակարգի 0-րդ կետով ներկայացված փաստաթղթերը (բացառությամբ 0-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի), ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին երեք ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած խումբը (միությունը) նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը:

90. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից Կենտրոնական բանկ չեն ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

91. Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպության՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերման դեպքում, Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների, եթե դրանք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել կազմակերպության գրավոր համաձայնությունը այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով կիրառելու համար:

92. Նոր ստեղծվող կամ գործող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող ֆիզիկական անձը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար ներդրումային ընկերության միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն Հավելված 15-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ ներդրումային ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 17-ի և Հավելված 18-ի:

93. Պետությունը նոր ստեղծվող կամ գործող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ներդրումային ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) Ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի,
2) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

ԳԼՈՒԽ 16
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

94. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը

ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ներդրումային ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,
2) կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը,
3) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ անուղղակի նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ, ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի և իր հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց մասին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:
6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ ներդրումային ընկերությունում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ:

95. Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպության՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռքբերման դեպքում, Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող հաշվետվությունների, եթե դրանք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել գրավոր համաձայնություն այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով օգտագործելու համար:

96. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանվող փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերի: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

97. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող ներդրումային ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ներդրումային ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ ներդրումային ընկերությունում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ,
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 17-ի և Հավելված 18-ի:

ԳԼՈՒԽ 17
ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

98. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն ներդրումային ընկերությունում կամ ավելացնում է իր մասնակցությունը Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանաչափերից ավելի՝ ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյակ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի:

99. Նշանակալից մասնակիցը՝ Օրենքի 54-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին ձեռքբերված բաժնետոմսերի (բաժնեմասերի) օտարման մասին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:

ԳԼՈՒԽ 18
ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

100. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում միաժամանակ մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար ներկայացվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ այդ ներդրումային ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով ներդրումային ընկերությունում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

101. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունը ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության դիմումը:

102. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում կամ գործարքի իրականացումը հավաստող փաստաթղթերը չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

103. Եթե ներդրումային ընկերությունը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող էր հանգեցնել ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա ներդրումային ընկերությունը տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

104. Եթե ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 15-րդ և 16-րդ գլուխներով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

ԲԱԺԻՆ IV
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 19
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

105. Ներդրումային ընկերությունները (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղերը) հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկի վիճակագրական վարչություն են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ռեզիդենտների համար, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ ոչ ռեզիդենտների համար.

1) ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,
2) ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ

տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,

3) ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, ինչպես նաև ներդրումային ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների անունը, ազգանունը, պաշտոնը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետերով սահմանված դեպքերի),
4) ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության) հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց, ինչպես նաև ներդրումային ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց անունը, ազգանունը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետերով սահմանված դեպքերի):

106. Եթե ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղերը) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները).

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

107. Եթե ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունը).

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

108. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է.

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական վիճակի մասին և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները,
2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

109. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե ներդրումային ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձը հանդիսանում է.

1) ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձ, որի համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ունեցող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական վիճակի մասին և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները,
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

110. Սույն կանոնակարգի 0-րդ կետում սահմանված դեպքերում Կենտրոնական բանկ է ներկայացվում այդ անձանց անվանումները ներառող ցուցակ:

111. Կենտրոնական բանկը կարող է պահանջել ներդրումային ընկերությունից (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղից) սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ ենթակետով և 0-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) սահմանված պարբերականությամբ ներկայացնել Կենտրոնական բանկ նաև ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության) հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով:

112. Եթե սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա հաշվետվությունները և տեղեկությունները հայերենով, ռուսերենով կամ անգլերենով տեղակայված են ինտերնետային կայքում, ապա հաշվետվությունների կամ տեղեկությունների փոխարեն Կենտրոնական բանկ կարող է ներկայացվել համապատասխան ինտերնետային կայքի (տնային էջի) հասցեն մինչև տվյալ հաշվետվությունները կամ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը: Ընդ որում, սույն կանոնակարգով սահմանված՝ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները (տեղեկությունները) ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրելու դեպքում իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող հաշվետվությունների (տեղեկությունների) առկայությունն առնվազն մեկ տարվա ընթացքում:

Բ Ա Ժ Ի Ն V
ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 20
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

113. Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը կամ ներդրումային ընկերության մասնաճյուղը պետք է ունենան՝

1) ներդրումային ընկերությանը (իսկ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր ներդրումային ընկերությանը) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,
2) կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներդրումային ընկերության մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի պահպանման հիմնական վայրն է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար և որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու բանկ, վարկային կազմակերպություն կամ դրանց տարածքային ստորաբաժանում: Ընդ որում, ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, ներդրումային ընկերության մասնաճյուղը կանխիկ դրամը պահպանության կարող են հանձնել բացառապես բանկին, վարկային կազմակերպությանը կամ դրանց տարածքային ստորաբաժանումներին: Դրամապահոցի բացակայության պարագայում ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը կամ ներդրումային ընկերության մասնաճյուղը կարող են չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և ներդրումային ընկերությունում, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղում կամ ներդրումային ընկերության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին և/կամ պատին: Սույն ենթակետը չի տարածվում այն ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղերի կամ ներդրումային ընկերության մասնաճյուղերի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով,
3) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,
4) շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի ընկերության ամբողջ տարածքում և ներդրումային գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, իսկ ներդրումային ընկերության մասնաճյուղերի համար՝ միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակ-

ների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը կամ այլ համապատասխան կազմակերպությանը, ինչպես նաև ներդրումային ընկերության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին ու պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով,

5) էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,
6) ներդրումային ընկերությունը և ներդրումային ընկերության մասնաճյուղը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ: Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի գրանցվելուց հետո՝ մասնաճյուղի գրանցման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք չունեն գլխավոր հաշվապահ, համակարգչային ցանցը պետք է միացվի մասնաճյուղին՝ վերջինիս գրանցման փաստաթղթերի ներկայացման պահին:

114. Ի լրումն սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված պահանջների՝ պահառություն իրականացնող ներդրումային ընկերությունը պետք է.

1) ապահովի հաճախորդների ազատ մուտքը տարածք՝ հանձնարարագրերի, հարցումների և այլ փաստաթղթերի լրացման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հաշիվներից քաղվածքների և տեղեկանքների ստացման համար,
2) փաստաթղթային արժեթղթերի պահառություն իրականացնելու դեպքում ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ արժեթղթերի հավաստագրերի պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն ներդրումային ընկերության ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,
3) ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ՝ վարվող արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների և գործառնություններին վերաբերող փաստաթղթերի բնօրինակների պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն ներդրումային ընկերության ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,
4) արժեթղթերի հաշվառման համակարգը էլեկտրոնային եղանակով վարելու դեպքում պետք է կիրառի այնպիսի համակարգ, որը կպաշտպանի արժեթղթերի հաշվառման ժամանակ օգտագործվող ողջ տեղեկատվությունը ոչ լիազորված օգտագործումից,
5) հնարավորություն ունենա օգտվելու արժեթղթերի էլեկտրոնային հաշվառման պահուստային համակարգից կամ իրականացնելու արժեթղթերի հաշվառումը թղթային եղանակով, այն դեպքում, երբ հիմնական ավտոմատացման համակարգը շարքից դուրս է եկել կամ այլ պատճառներով հնարավորություն չկա այն օգտագործել,
6) կիրառի արժեթղթերի հաշվառման միայն այնպիսի համակարգչային ծրագիր, որն ապահովում է օրենքով և սույն կետով սահմանված պահանջները,
7) ծրագրային ապահովումը և տեխնիկական հագեցվածությունը ապահովի տվյալների և տեղեկատվության կանոնավոր և անխափան փոխանակման հնարավորություն պահառուի և ռեեստրավարի, պահառուի և օտարերկրյա պահառուի միջև՝ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով,
8) պահպանի արժեթղթերի հաշվառմանն առնչվող փաստաթղթերը (գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը), ինչպես նաև տվյալների բազան առնվազն 70 տարի,
9) այն դեպքում, եթե արժեթղթերի հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով, մինչև յուրաքանչյուր շաբաթվա ավարտը պահառուն իրականացնի այդ շաբաթվա տվյալների բազայի կրկնօրինակումը և այդ կրկնօրինակները պահպանի իր տարածքի չհրկիզվող պահարաններում կամ պահառուի տարածքից դուրս գտնվող տվյալների պահպանման հատուկ համակարգում (տվյալների պահպանման հեռակա համակարգ): Ամսվա ընթացքում պատրաստված կրկնօրինակները մինչև հաջորդ ամսվա առաջին օրվա ավարտը պետք է պահպանության (ի պահ) հանձնվեն պահառուի կողմից ընտրված բանկի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի մագնիսակայուն պահոցում (սեփական մագնիսակայուն պահոց չունենալու դեպքում),
10) այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվառումն իրականացվում է թղթային եղանակով, պահառուն շաբաթվա վերջում պետք է իրականացնի արժեթղթերի հաշվառման մատյաններում և արժեթղթերի հաշիվներում տվյալ օրվա մուտքագրած տվյալների կրկնօրինակումը և ի պահ հանձնի դրանք պահառուի տարածքի չհրկիզվող պահարանում,
11) սույն կետի 9-րդ ենթակետում նշված տվյալների բազայի կրկնօրինակները պետք է պատրաստվեն այնպիսի եղանակով, որ ցանկացած պահի հնարավոր լինի վերականգնել դրանց սկզբնական

տեսքը: Տվյալների բազայի և արժեթղթերի հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակներ կարելի է չպատրաստել, եթե համապատասխան ժամանակահատվածի ընթացքում տվյալների բազայում և արժեթղթերի հաշվառման հաշիվներում և հաշվառման գրքերում մուտքեր կամ գրառումներ չեն եղել,

12) աշխատանքային ժամերի ավարտից հետո պահառուի տարածքում պահառուի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցների բացակայության դեպքում արժեթղթերի հաշվառմանն առնչվող բոլոր թղթային կրիչով փաստաթղթերը (ներառյալ՝ գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը) պետք է պահվեն բացառապես չհրկիզվող պահարանում կամ պահոցում:

115. Նոր ստեղծվող ներդրումային ընկերությունը համարվում է սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով պարտավորվել է ներդրումային ընկերության պետական գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, ներդրումային ընկերությունը սահմանված կարգով գրանցվելուց և լիցենզավորվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կենտրոնական բանկ է ներկայացնում տվյալ տարածքի նկատմամբ իր սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

116. Այն դեպքում, երբ ներդրումային ընկերությունները Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա կնքել են միացման պայմանագիր, ապա միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության՝ սույն գլխով սահմանված պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:

117. Ներդրումային ընկերությունը, նրա մասնաճյուղը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը կարող են սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերով և 0-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 12-րդ ենթակետերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն ունենալ ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն ներդրումային ընկերությանը, նրա մասնաճյուղին, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին սեփականության, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի, արժեթղթերի հավաստագրերի, արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների, գործառնություններին վերաբերող փաստաթղթերի բնօրինակների, արժեթղթերի հաշվառման գրքերի և այլ արժեքավոր գույքի՝ հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը:

118. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:

119. Այն դեպքում, երբ սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ապահովագրությունն իրականացնում է ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը, ապա նա պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

Ստանդարտ և Փուրզ	«A-»
Մուդիզ	«A3»
Ա. Մ. Բեստ	«A-»
Ֆիտչ	«A-»:

ԲԱԺԻՆ VI
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 21
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

120. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները փոփոխությունները տեղի ունենալուց հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում.

1) Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական

որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման,

2) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության, ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունները: Ընդ որում, սույն ենթակետում սահմանված կանոնադրությունների փոփոխությունները, լրացումները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 25-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:

121. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության, ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
2) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչություն կամ ներդրումային ընկերության Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
3) ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանման, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունը,
4) եթե կանոնադրության փոփոխությունը առաջացնում է լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է լիցենզիայի կամ գրանցման վկայականի վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև կից ներկայացվում է հին լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը և լիցենզիայի վերաձևակերպման համար՝ պետական տուրքի վճարման անդորրագիրը:
5) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է կանոնադրական կապիտալի ավելացման հետ, ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթուղթը:

122. Եթե ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

1) նոր առանձնացված տարածքի նկատմամբ ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության) սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
2) սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջնորդագրում նշվում է ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի) հայտարարությունն այն մասին, որ ներդրումային ընկերության (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, ներդրումային ընկերության մասնաճյուղի) տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված չափանիշներին, իսկ անհնարինության դեպքում պարտավորագիր առ այն, որ գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կապահովվի դրանց համապատասխանությունը:

123. Եթե ներդրումային ընկերության կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է ներդրումային ընկերության ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա, բացի սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված փաստաթղթերից, Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթեր՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով սահմանված Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

124. Փոփոխությունները գրանցվում են կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

125. Գրանցման վկայականի և (կամ) լիցենզիայի նոր օրինակը ներդրումային ընկերությանը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին տրամադրվում է կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Գ Լ ՈՒ Խ 22
ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

126. Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը լիցենզիա ստանալուց հետո, իսկ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչությունը գրանցվելուց հետո սույն կետում նշված փոփոխությունները տեղի ունենալու դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փոփոխությունները.

1) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի նոր ընդունված գործունեության կանոնները, Կենտրոնական բանկ ներկայացված գործունեության կանոնների հետագա փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին կանոնակարգերը (ներդրումային ընկերության գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը),
2) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, ներդրումային ընկերության մասնաճյուղի՝ սույն կանոնակարգի գլուխ 20-ով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ այդ փոփոխությունների վերաբերյալ գրություն, որը պարունակում է հայտարարություն այն մասին, որ փոփոխված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված չափանիշներին,
3) ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունները,
4) ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության ղեկավարների փոփոխության դեպքում՝ ներկայացուցչության ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
5) ներդրումային ընկերության խորհրդի նախագահի պաշտոնանկության դեպքում՝ համապատասխան գրություն, որտեղ նշվում են կառավարման իրավասու մարմնի կողմից որոշման կայացման և փոփոխության իրականացման ամսաթվերը,

127. Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, ներդրումային ընկերության մասնաճյուղը Կենտրոնական բանկ են ներկայացնում գործարար ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը: Ընդ որում, ծրագրին կից աղյուսակներում փոփոխություն կարող է կատարվել միայն մինչև հունիս ամսվա վերջին օրը: Նշված ժամանակահատվածից հետո փոփոխություն կարող է կատարվել միայն մակրոտնտեսական միջավայրի էական տատանումների կամ ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության էական փոփոխությունների (օրինակ՝ Համախառն ներքին արդյունքի, գների, փոխարժեքի էական տատանումներ, ներդրումային կամ ոչ հիմնական նոր ծառայությունների մատուցում) դեպքում:

128. Սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքի 2.3, 3.6, 3.8, 3.9, 4.1-րդ ենթակետերում, ինչպես նաև 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունները ներդրումային ընկերությանը հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Գ Լ ՈՒ Խ 23
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

129. Ներդրումային ընկերությունները, ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը պարտավոր են բավարարել սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջները սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ մինչ այդ պարտավոր են բավարարել հետևյալ պահանջները.

1) Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը կամ ներդրումային ընկերության մասնաճյուղը պետք է ունենան՝

ա. ներդրումային ընկերությանը (իսկ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր ներդրումային ընկերությանը) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող առանձնացված տարածք,

բ. կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մաս-

նաճյուղի կամ ներդրումային ընկերության մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի պահպանման հիմնական վայրն է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար և որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու բանկ, վարկային կազմակերպություն կամ դրանց տարածքային ստորաբաժանում: Դրամապահոցի բացակայության պարագայում ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը կամ ներդրումային ընկերության մասնաճյուղը կարող են չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և ներդրումային ընկերությունում, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղում կամ ներդրումային ընկերության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին: Սույն ենթակետը չի տարածվում այն ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղերի կամ ներդրումային ընկերության մասնաճյուղերի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով,

գ. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,

դ. պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Սույն ենթակետը չի տարածվում ներդրումային ընկերության մասնաճյուղի վրա,

ե. էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,

զ. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության համար մասնաճյուղի առկայության դեպքում՝ այնպիսի համակարգչային ծրագրեր, որոնք ապահովում են մասնաճյուղում կատարվող գործարքների ավտոմատ արտացոլումը ներդրումային ընկերության հաշվեկշռում:

2) Ներդրումային ընկերության գրանցման և լիցենզավորման ժամանակ նոր ստեղծվող ներդրումային ընկերությունը համարվում է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջին բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորագիր, որով պարտավորվել է ներդրումային ընկերության գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը:
3) Այն դեպքում, երբ ներդրումային ընկերությունները Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա կնքել են միացման պայմանագիր, ապա միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության սույն գլխով սահմանված պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:
4) Բացի սույն կետի 1-ին ենթակետում նշված պահանջներից՝ պահառություն իրականացնող ներդրումային ընկերությունը պետք է.

ա. ապահովի հաճախորդների ազատ մուտքը տարածք՝ հանձնարարագրերի, հարցումների և այլ փաստաթղթերի լրացման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հաշիվներից քաղվածքների և տեղեկանքների ստացման համար,

բ. փաստաթղթային արժեթղթերի պահառություն իրականացնելու դեպքում ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ արժեթղթերի հավաստագրերի պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն ներդրումային ընկերության ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,

գ. ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ վարվող արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների և գործառնություններին վերաբերող փաստաթղթերի բնօրինակների պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն ներդրումային ընկերության ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,

դ. արժեթղթերի հաշվառման համակարգը էլեկտրոնային եղանակով վարելու դեպքում պետք է կիրառի այնպիսի համակարգ, որը կպաշտպանի արժեթղթերի հաշվառման ժամանակ օգտագործվող ողջ տեղեկատվությունը ոչ լիազորված օգտագործումից,

ե. հնարավորություն ունենա օգտվելու արժեթղթերի էլեկտրոնային հաշվառման պահուստային համակարգից կամ իրականացնելու արժեթղթերի հաշվառումը թղթային եղանակով, այն դեպքում, երբ հիմնական ավտոմատացման համակարգը շարքից դուրս է եկել կամ այլ պատճառներով հնարավորություն չկա այն օգտագործել,

զ. կիրառի արժեթղթերի հաշվառման միայն այնպիսի համակարգչային ծրագիր, որն ապահովում է օրենքով և սույն կետով սահմանված պահանջները,

է. ծրագրային ապահովումը և տեխնիկական հագեցվածությունը ապահովի տվյալների և տեղեկատվության կանոնավոր և անխափան փոխանակման հնարավորություն Պահառուի և ռեեստրավարի, պահառուի և օտարերկրյա պահառուի միջև՝ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով,

ը. պահպանի արժեթղթերի հաշվառմանն առնչվող փաստաթղթերը (գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը), ինչպես նաև տվյալների բազան առնվազն 70 տարի,

թ. այն դեպքում, եթե արժեթղթերի հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով, մինչև յուրաքանչյուր շաբաթվա ավարտը պահառուն իրականացնի այդ շաբաթվա տվյալների բազայի կրկնօրինակումը և այդ կրկնօրինակները պահպանի իր տարածքի չհրկիզվող պահարաններում կամ պահառուի տարածքից դուրս գտնվող տվյալների պահպանման հատուկ համակարգում (տվյալների պահպանման հեռակա համակարգ): Ամսվա ընթացքում պատրաստված կրկնօրինակները մինչև հաջորդ ամսվա առաջին օրվա ավարտը պետք է պահպանության (ի պահ) հանձնվեն պահառուի կողմից ընտրված բանկի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի մագնիսակայուն պահոցում (սեփական մագնիսակայուն պահոց չունենալու դեպքում),

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
1.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
1.3. ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2. ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ				
2.1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2.3. ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ԸՆԴԱՄԵՆԸ				

Աղյուսակ 4.

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հզ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ		
		1-ԻՆ	2-ՐԴ	3-ՐԴ
1. ԻՐ ԿԱՄ ՀԱՁԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՒ ՀԱՁԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒ				
1.1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
1.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
1.3. ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2. ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՒ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ				
2.1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2.3. ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ԸՆԴԱՄԵՆԸ				

Աղյուսակ 5.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐՑՐԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հզ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ		
		1-ԻՆ	2-ՐԴ	3-ՐԴ
1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ (ՀԱՋ. ԴՐԱՄ)				
1.1. ՀՀ ԴՐԱՄՈՎ				
1.2. ԱՅԼ ԱՐԺՈՒՅԹՈՎ				
2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐՑՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ (ՀՋ. ԴՐԱՄ)				
1.1. ՊԵՏԱԿԱՆ				
1.2. ՈՉ ՊԵՏԱԿԱՆ				

Աղյուսակ 6.

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(հզ. դրամ)

ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ		ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ					
			1-ԻՆ		2-ՐԴ		3-ՐԴ	
	ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ	ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ	ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ	ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ	ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ	ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ	ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ	ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ
1. ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝								

Աղյուսակ 7.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ		
		1-ԻՆ	2-ՐԴ	3-ՐԴ
1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝				
ՀՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ/ՀԱՄԱԽՈՒՌ ՕԱԽՍԵՐ				
2. ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ՝				
ՀՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ/ՀԱՄԱԽՈՒՌ ԱԿՏԻՎՆԵՐ				
3. ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿԱՊԻՏԱԼԻ				
ՀՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ/ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ				
***4.* ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝**				
1) ՎԱՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ[1]				
2) ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ[2]				
3) ՎԱՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ/ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ				
***5.* ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝**				
1) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ				
2) ՀՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ/ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ				
6. ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ՝				
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ/ՎԱՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ				
7. ԿԱԴՐԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ՝				
ՎԱՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ/ ՎԱՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ				
8. ՎԱՃԱՌՔԻ ԽԹԱՆՈՒՄ՝				
ԳՈՎԱԶԴԻ ԾԱԽՍԵՐ/ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐ				
9. ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՄԲ				

1. ՎԱՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԲՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ:

2. ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԲՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ՉԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ (ՕՐԻՆԱԿ՝ ՀԱՎԱՔԱՐԱՐ, ՎԱՐՈՐԴ):

Ենթահավելված 2

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի Հավելված 20-ի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ

ԲԱԺԻՆ 1. Ընդհանուր դրույթներ

1. Ներկայացվում են ներդրումային ընկերության մասնաճյուղի մասին ընդհանուր տեղեկություններ, այդ թվում՝

1) ստեղծվող մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը,
2) հիմնադիր ներդրումային ընկերության կողմից նոր մասնաճյուղի ստեղծման նախադրյալները, նպատակները,
3) մասնաճյուղի ակնկալվող դերն ու նշանակությունը ներդրումային ընկերության ընդհանուր գործունեության համատեքստում:

2. Այս բաժնում ներկայացվում են նաև ներդրումային ընկերության մասնաճյուղի ծրագրի մշակման հիմքում դրված հիմնական ենթադրությունները, մշակող անձի կամ մշակման աշխատանքները կոորդինացնող անձի վերաբերյալ տվյալներ (զբաղեցրած պաշտոնը, հեռախոսի համարը):

ԲԱԺԻՆ 2. Մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղությունները

3. Այս բաժնում ներկայացվում են.

1) ներդրումային ծառայությունների այն տեսակները, որոնք մասնաճյուղը նախատեսում է մատուցել,
2) ներդրումային ընկերության կողմից մասնաճյուղին տրված լիազորությունների շրջանակները, դրանց ակնկալվող հետագա փոփոխությունները, մասնաճյուղի զարգացման հեռանկարները:

ԲԱԺԻՆ 3. Նպատակային շուկաների նկարագրություն, մրցունակություն

4. Այս բաժնում ներկայացվում են.

1) մասնաճյուղի սպասարկման տարածքը, պոտենցիալ հաճախորդների շրջանակը,
2) նպատակային շուկայում մասնաճյուղի պոտենցիալ մրցակիցները,
3) մասնաճյուղի հարաբերական առավելությունը և թերությունները մասնաճյուղի հիմնական մրցակիցների նկատմամբ (օրինակ՝ սպասարկման որակ և այլն), մասնաճյուղի կողմից սպասարկվող տարածքում մասնաճյուղի մրցունակության գնահատման արդյունքները, մրցակցությանը դիմակայելու մեթոդները,

ԲԱԺԻՆ 4. Մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածք, կառավարումը

5. Այս բաժնում ներկայացվում են.

1) մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածքը (սխեմատիկ տեսքով), կառուցվածքային ստորաբաժանումների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները, մասնաճյուղի աշխատակիցների քանակը,
2) մասնաճյուղի ղեկավարների իրավունքներն ու պարտականությունները,
3) մասնաճյուղի ներքին հսկողության համակարգը,
4) ներդրումային ընկերության գլխամասի և մասնաճյուղի միջև տեղեկատվական հոսքերը՝ ներառյալ հաշվետվական համակարգը,
5) մասնաճյուղում ներքին աուդիտի իրականացման հաճախականությունը և շրջանակները,
6) այն բոլոր ընթացակարգերը և միջոցառումները, որոնք ուղղված են ապահովելու մասնաճյուղի գործունեության համապատասխանեցումը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, ինչպես նաև ներդրումային ընկերության գործունեությունը կարգավորող ներքին ակտերի (քաղաքականություն, կարգեր և այլ) պահանջներին,
7) մասնաճյուղի հաճախորդների բողոքներին արձագանքելու միջոցառումները:

ԲԱԺԻՆ 5. Գործարար ծրագրի իրականացման նկատմամբ հսկողությունը, ծրագրում փոփոխությունների կատարումը

6. Այս բաժնում նկարագրվում են մասնաճյուղի ծրագրի իրագործմանը հետևելու գործընթացը, ծրագրում փոփոխություններ կատարելու կարգը:

ԲԱԺԻՆ 6. Ծրագրին կից աղյուսակներ

7. Ներկայացնել սույն ծրագրին կից հետևյալ աղյուսակները՝
1) մասնաճյուղի հաշվեկշռի կանխատեսումները՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 1-ի,
2) մասնաճյուղի եկամուտների և ծախսերի կանխատեսումները՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 2-ի:

Աղյուսակ 1.

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

(հզ. դրամ)

	Փաստացի մեծությունը ընթացող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին պլանավորվող տարվա հուլիսի 1	2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	2-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	3-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1
Ակտիվներ							
Կանխիկ դրամական միջոցներ							
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ							
Պահանջներ հաճախորդների նկատմամբ							
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ							
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ							
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ							
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում							
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ							
Հետաձգված հարկային ակտիվներ							
Այլ ակտիվներ							
Ընդամենը՝ ակտիվներ							
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ							
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ							
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն							
Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր							
Հետաձգված հարկային պարտավորություններ							
Պահուստներ							
Այլ պարտավորություններ							
Ընդամենը՝ պարտավորություններ							

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

(հզ. դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փաստորեն ընթացող տարվա ծծմբությունը 31-ի դրությամբ	1-ին կիսամյակ 1 փվ	2-րդ կիսամյակ 1 փվ	2-րդ կիսամյակ 1 փվ	3-րդ կիսամյակ 1 փվ	3-րդ կիսամյակ 1 փվ	4-րդ կիսամյակ 1 փվ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ							
Տոկոսային և նմանատիպ ծախսեր							
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ							
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ							
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր							
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ							
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից							
Այլ եկամուտ							
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին							
Ընդհանուր վարչական ծախսեր							
Այլ ծախսեր							
Շահույթը (եկամուտների և ծախսերի տարբերություն)							

Հավելված 27

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Օտարերկրյա ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձանց, պետությունների և միջազգային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ

Կազմակերպության (պետության) անվանումը		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (դրամով)		Մասնակցության չափը (%)

2. Օտարերկրյա ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները		Բնակության վայրը		Մասնակցության չափը (դրամով)		Մասնակցության չափը (%)

3. Օտարերկրյա ներդրումային ընկերության իրավաբանական անձ հանդիսացող անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ (Կենտրոնական բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ)

Կազմակերպության անվանումը		Գտնվելու վայրը		Նշվում են այն անձանց մասին հետևյալ տվյալները, որոնց միջոցով իրավաբանական անձը հանդիսանում է անուղղակի նշանակալից՝ անձի անվանումը կամ անունը, ազգանունը և անձնագրի տվյալները		Նշվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 34-րդ մասի այն ենթակետը, որի հիմքով անձը հանդիսացել է անուղղակի նշանակալից մասնակից:

4. Օտարերկրյա ներդրումային ընկերության ֆիզիկական անձ հանդիսացող անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ *(Կենտրոնական բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ)*

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները		Բնակության վայրը		Նշվում են այն անձանց մասին հետևյալ տվյալները, որոնց միջոցով ֆիզիկական անձը հանդիսանում է անուղղակի նշանակալից՝ անձի անվանումը կամ անունը, ազգանունը և անձնագրի տվյալները		Նշվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 34-րդ մասի այն ենթակետը, որի հիմքով անձը հանդիսացել է անուղղակի նշանակալից մասնակից:

5. Արդյո՞ք սույն տեղեկանքում նշված անձինք ունեն 30 օր և ավելի ժամկետանց/չմարված պարտավորություններ: «Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:	☐ Այո ☐ Ոչ

6. Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում ենք, որ որևէ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:
Համաձայն ենք՝ մեր կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____
օր/ամիս/տարի

Հավելված 28
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

_____

(ներդրումային ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել _____ ներկայացուցչություն բացելու մասին:
(ներկայացուցչության բացման պետությունը)

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ նախնական համաձայնություն ներդրումային ընկերության _____ բացելու համար:
(ներկայացուցչությունը)

Ներկայացուցչություն բացելու հիմնավորումը.

_____

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք ներդրումային ընկերության ներկայացուցչության բացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ —- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Ներդրումային ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

_____ _____ 20 թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ֆինանսական կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակման գործընթացը համապատասխանեցնել ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման գործընթացները կարգավորող կանոնակարգերում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ և 96-րդ հոդվածի 2-րդ մասերը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ, 70-րդ և 83-րդ հոդվածները, 182-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թ. հունիսի 2-ի «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 8/03) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 8/03-ի 17-րդ կետի 6-րդ ենթակետը «կանոնադրությունը» բառից հետո լրացնել «՝ տվյալ պահին կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները ներառած (ինկորպորացրած) վիճակում: Ընդ որում, կանոնադրության տիտղոսաթերթի վրա պետք է նշվեն կանոնադրությունում կատարված բոլոր փոփոխությունների և լրացումների ընդունման և Կենտրոնական բանկի կողմից գրանցման ամսաթվերը, իսկ փոփոխված կամ լրացված կետերի ներքո նշվի այդ փոփոխությունների և լրացումների կատարման ամսաթվերը՝ հնարավորություն ընձեռելով կանոնադրությունը դիտել նախորդող յուրաքանչյուր ժամանակահատվածի դրությամբ» բառերով,

2) Կանոնակարգ 8/03-ի 56.4-րդ կետի 1-ին ենթակետը «(կանոնադրությունը)» բառից հետո լրացնել «՝ տվյալ պահին կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները ներառած (ինկորպորացրած) վիճակում: Ընդ որում, կանոնադրության տիտղոսաթերթի վրա պետք է նշվեն կանոնադրությունում կատարված բոլոր փոփոխությունների և լրացումների ընդունման և Կենտրոնական բանկի կողմից գրանցման ամսաթվերը, իսկ փոփոխված կամ լրացված կետերի ներքո նշվի այդ փոփոխությունների և լրացումների կատարման ամսաթվերը՝ հնարավորություն ընձեռելով կանոնադրությունը դիտել նախորդող յուրաքանչյուր ժամանակահատվածի դրությամբ» բառերով□

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 202-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.08.2014 թ. (ՀՀԳՏ N22 (501), 2.09.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 191-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովագրական ընկերությունների միացման գործընթացը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 128-րդ հոդվածը, 130-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ մասը, ինչպես նաև 132-րդ և 157-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի «Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ը հաստատելու մասին» թիվ 191-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/12) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/12-ի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) գլուխ 1-ով սահմանված կարգով:»,

2) Կանոնակարգ 3/12-ի 8-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում ««Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) Հավելված 9-ով» բառերը փոխարինել «Կանոնակարգ 3/01-ի Հավելված 39-ով» բառերով,

3) Կանոնակարգ 3/12-ի 8-րդ կետի 8-րդ ենթակետում՝

ա. «Հավելված 3-ով» բառերը փոխարինել «Հավելված 17-ով» բառերով,

բ. «2.1» թիվը փոխարինել «3.1» թվով, իսկ «2.3» թիվը «3.3» թվով,

4) Կանոնակարգ 3/12-ի 12-րդ կետի՝

ա. 3-րդ ենթակետում «Կանոնակարգ 3/01-ի» բառերը փոխարինել ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի» բառերով,

բ. 4-րդ ենթակետում «Հավելված 3-ով» բառերը փոխարինել «Հավելված 17-ով» բառերով,

գ. 4-րդ ենթակետում «2.1» թիվը փոխարինել «3.1» թվով, իսկ «2.3» թիվը «3.3» թվով:

5) Կանոնակարգ 3/12-ի 23-րդ կետի 8-րդ ենթակետում «Կանոնակարգ 3/01-ի» բառերը փոխարինել ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.08.2014 թ. (ՀՀՊՏ N22 (501), 2.09.2014):

օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 203-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 9-ի թիվ 192-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի ««Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ը հաստատելու մասին» թիվ 192-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի այլ իրավական ակտերի պահանջներին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, 87-րդ հոդվածի 1-ին մասը, 88-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. հուլիսի 19-ի ««Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ը հաստատելու մասին» թիվ 192-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության «Հավելված 14» բառերը փոխարինել «Հավելված 26» բառերով,

2) 3-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) միացման արդյունքում պահպանվող ներդրումային ընկերության ղեկավարների փոփոխության դեպքում՝ նոր ղեկավարների մասին «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/05) Հավելված 1-ով պահանջվող տեղեկությունները: Ընդ որում, եթե տվյալ ղեկավարի գրանցման կամ սույն կանոնակարգի համաձայն միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնության համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 4/05-ի Հավելված 1-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը, ապա Հավելված 1-ով սահմանված տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն 1-ին և 2-րդ կետերի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է,»,

3) 6-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) պահպանվող ներդրումային ընկերության ֆիրմային անվանման փոփոխության դեպքում ֆիրմային անվանման փոփոխության գրանցման հայտը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով սահմանված Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:»,

4) 6-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) պահպանվող ներդրումային ընկերության ղեկավարների կազմում փոփոխության դեպքում Կանոնակարգ 4/05-ի 67-րդ կետով ղեկավարների գրանցման համար պահանջվող տեղեկությունները: Ընդ որում, եթե ղեկավարի գրանցման համար կամ սույն կանոնակարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետով և (կամ)

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.08.2014 թ. (ՀՀԳՏ N22 (501), 2.09.2014):

4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 4/05-ի Հավելված 1-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում ներդրումային ընկերությունը դիմում է Կենտրոնական բանկ տվյալ անձին գրանցելու միջնորդությամբ, ապա Հավելված 1-ով սահմանված միջնորդագիրը Կանոնակարգ 4/05-ի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն 1-ին և 2-րդ կետերի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:»,

5) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Միացման արդյունքում լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտության դեպքում սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերի հետ միասին պահպանվող ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դիմում՝ համաձայն Կանոնակարգ 4/01-ի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 204-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումներին առնչվող գործընթացները առավելագույնս մոտեցնել այլ կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման գործընթացներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի «բ1» կետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3.1, 104-րդ հոդվածի 1-ին մասի 3.1, 184-րդ հոդվածի 3.1 կետերը, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետերը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, 87-րդ հոդվածի 1-ին մասը, 88-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգը» հաստատելու մասին թիվ 309-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգի» (Կարգ) 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերը և Հավելված 2-ը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 205-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.08.2014 թ. (ՀՀՊՏ N22 (501), 2.09.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 284-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը» հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող ֆինանսական կազմակերպությունների բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների մասնակիցների գրանցամատյանների վարման կարգը,Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումներին առնչվող գործընթացները առավելագույնս մոտեցնել այլ կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման գործընթացներին,

հիմք ընդունելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածը, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2002 թվականի սեպտեմբերի 3-ի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարումը կանոնակարգելու մասին» թիվ 284-Ն որոշումը:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 206-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 206-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՆՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից գրանցվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.08.2014 թ. (ՀՀՊՏ N22 (501), 2.09.2014):

բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների (այսուհետ՝ Ֆինանսական կազմակերպություն) մասնակիցների՝ գրանցամատյանի վարման, դրանում փոփոխությունների կատարման, փոփոխությունների կատարումը մերժելու հիմքերը և կարգը:

2. Գրանցամատյանում գրանցում կատարելը կամ գրանցման կատարումը մերժելը իրականացվում է Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ:

3. Անձը համարվում է Ֆինանսական կազմակերպության մասնակից՝ սույն կարգով սահմանված կարգով գրանցամատյանում նրան որպես այդպիսին գրանցելու պահից:

4. Անձը համարվում է գրանցամատյանում գրանցված՝ սույն կարգի 14-րդ կետում նշված տեղեկությունները գրառելու պահից:

5. Գրանցամատյանում կատարված գրանցումը հավաստվում է բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագրով (այսուհետև՝ վկայագիր):

ԳԼՈՒԽ 2. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Ֆինանսական կազմակերպության գրանցման պահին գրանցամատյանում առաջին գրանցումը կատարելու նպատակով Ֆինանսական կազմակերպության գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ միաժամանակ ներկայացվում են՝

1) տեղեկություններ մասնակիցների մասին. իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու վայրը (փոստային հասցեն), ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը և բնակության վայրը.
2) տեղեկություններ յուրաքանչյուր մասնակցի բաժնեմասի չափի մասին:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված տեղեկությունները ներկայացվում են Ֆինանսական կազմակերպության բոլոր մասնակիցների ստորագրությամբ (նշված պահանջը վերաբերում է միայն գրանցամատյանում առաջին անգամ գրանցում կատարելու դեպքերին):

8. Վկայագրում առկա տեղեկատվության յուրաքանչյուր փոփոխության դեպքում գրանցամատյանում կատարվում է գրանցում. բաժնեմաս ձեռք բերողը պարտավորվում է վկայագրում առկա տեղեկատվության փոփոխության դեպքում ներկայացնել այն Կենտրոնական բանկ վերաձևակերպման:

9. Եթե լիցենզավորման, նշանակալից մասնակցության ձեռքբերման կամ կանոնադրության փոփոխության գործընթացում Ֆինանսական կազմակերպությունը ներկայացրել է սույն կարգով նախատեսված փաստաթղթերը, ապա գրանցամատյանում գրանցում կատարելու համար կրկնվող փաստաթղթերը կարող են չներկայացվել:

10. Գրանցամատյանում գրանցում կատարելու համար կամ վկայագրի վերաձևակերպման դեպքում Ֆինանսական կազմակերպության միջնորդությամբ բաժնեմասի սեփականատիրոջ կողմից ներկայացվում են՝

1) բաժնեմասի (բաժնեմասերի) կամ դրա (դրանց) մասերի ձեռքբերման դեպքում բաժնեմասը (բաժնեմասերը) ձեռք բերողը ներկայացնում է՝
   ա. դիմումը,
   բ. բաժնեմասի կամ դրա մասի օտարման հիմքը (պայմանագիր, դատարանի վճիռ և այլն),
   գ. գործարքի կողմ հանդիսացող մասնակիցների վկայագրերը,
   դ. Ֆինանսական կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը,
   ե. պետական գրանցման վկայականի (եթե տվյալ կողմն իրավաբանական անձ է) կամ անձնագրի (եթե տվյալ կողմը քաղաքացի է) պատճենը,
   զ. գործարքի կողմ իրավաբանական անձի կանոնադրության պատճենը և կառավարման իրավասու մարմնի որոշումը (հրաման, նիստի արձանագրությունից քաղվածք և այլն),
2) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի նախատեսված դեպքում՝
   ա. դիմումը,
   բ. դատարանի վճիռը և կատարողական թերթիկը,
3) Ֆինանսական կազմակերպության չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) ավելացման դեպքում՝
   ա. դիմումը,
   բ. Ֆինանսական կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը,
   գ. Ֆինանսական կազմակերպության տեղեկանքը կանոնադրական կապիտալը (հիմնադրամը) լրիվ վճարված լինելու և ֆինանսական զուտ ակտիվների մեծության մասին,
   դ. Ֆինանսական կազմակերպության բոլոր մասնակիցների վկայագրերը:
4) Ֆինանսական կազմակերպության կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) նվազեցման (բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցման միջոցով) դեպքում՝
   ա. դիմումը,
   բ. Ֆինանսական կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը,

գ. Ֆինանսական կազմակերպության տեղեկանքը ֆինանսական կազմակերպության պարտատերերի առարկությունների բացակայության մասին,
դ. Ֆինանսական կազմակերպության բոլոր մասնակիցների վկայագրերը.

5) Ֆինանսական կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազեցման (Ֆինանսական կազմակերպությանը պատկանող բաժնեմասերի մարման միջոցով) դեպքում՝
ա. դիմումը,
բ. Ֆինանսական կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը,
գ. Ֆինանսական կազմակերպության՝ մարվող բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը,
դ. Ֆինանսական կազմակերպության տեղեկանքը կազմակերպության պարտատերերի առարկությունների բացակայության մասին:

11. Ֆինանսական կազմակերպության մասնակիցների ժառանգներին կամ իրավահաջորդներին բաժնեմասի փոխանցմամբ պայմանավորված՝ գրանցում կատարելու համար անհրաժեշտ է ներկայացնել ժառանգ կամ իրավահաջորդ հանդիսանալու մասին համապատասխան փաստաթուղթ, ինչպես նաև Ֆինանսական կազմակերպության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը կամ հավաստում Ֆինանսական կազմակերպության գործադիր տնօրենից՝ գրավոր մերժումների բացակայության մասին, եթե Ֆինանսական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված է, որ նման գործարքը հնարավոր է միայն մասնակիցների համաձայնությամբ:

12. Գրանցամատյանում օտարերկրյա իրավաբանական անձի կողմից բաժնեմասի ձեռքբերմամբ պայմանավորված՝ գրանցում կատարելու համար ներկայացվում է նաև քաղվածք տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից կամ օտարերկրյա ներդրողի իրավական կարգավիճակը հավաստող այլ համազոր փաստաթուղթ՝ վավերացված և նոտարական կարգով հայերեն թարգմանված:

13. Ֆինանսական կազմակերպության մասնակցի բաժնեմասի փոխանցմամբ (օտարմամբ) պայմանավորված՝ գրանցում կատարելու համար սույն կարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև Ֆինանսական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի գրավոր հավաստումը Ֆինանսական կազմակերպության մասնակիցների նախապատվության իրավունքի իրականացման՝ օրենքով և Ֆինանսական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգը պահպանելու մասին: Եթե Ֆինանսական կազմակերպության մասնակցի բաժնեմասի փոխանցումն իրականացվում է նոտարական կարգով վավերացված պայմանագրով, ապա սույն կետում նշված հավաստումը չի ներկայացվում:

ԳԼՈՒԽ 3. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Գրանցամատյանում գրառվում են հետևյալ տեղեկությունները

1) Ֆինանսական կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումը և պետական գրանցման տվյալները,
2) մասնակից իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը (փոստային հասցեն), ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային տվյալները և բնակության վայրը,
3) բաժնեմասի չափը,
4) բաժնեմասի ձեռքբերման հիմքերը,
5) գրառում կատարվելու տարին, ամսաթիվը:

15. Գրանցամատյանում գրանցում կատարելու մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, Կենտրոնական բանկը պետք է կատարի գրանցում և դիմողին տրամադրի համապատասխան վկայագիր՝ համաձայն Հավելված 1-ի:

16. Վկայագրի ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում վկայագրի սեփականատերը Կենտրոնական բանկ ներկայացնում է դիմում վկայագրի կրկնօրինակը ստանալու և կորստի մասին Կենտրոնական բանկի կայքում հրապարակելու համար: Օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում դիմումին կցվում է վկայագրի բնօրինակը:

17. Կենտրոնական բանկը տրամադրում է կորած, ոչ պիտանի դարձած կամ ոչնչացած վկայագրի կրկնօրինակը՝ դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

18. Կորած վկայագիրը գտնելու դեպքում գտնված վկայագիրը սեփականատերը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

19. Վկայագրի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

20. Վկայագրի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում վկայագրի նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

21. Վկայագիրը, որպես գրանցամատյանում կատարված գրանցումը հավաստող փաստաթուղթ, ենթակա է հաշվառման, որում նշվում են՝

1) Ֆինանսական կազմակերպության գրանցման տվյալները, լրիվ ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը,
2) կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) չափը,

3) Ֆինանսական կազմակերպության մասնակիցների մասին տեղեկություններ, իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը (փոստային հասցեն), ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային տվյալները և բնակության վայրը,
4) բաժնեմասի չափը,
5) բաժնեմասի ձեռքբերման հիմքերը,
6) Կենտրոնական բանկում գրանցման տարին, ամսաթիվը, գրանցման որոշման համարը:

22. Գրանցումը կարող է մերժվել, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են կամ դրանցում պարունակվում են տեղեկություններ, որոնք հակասում են համապատասխան օրենքներին կամ Ֆինանսական կազմակերպության կանոնադրության պահանջներին, Ֆինանսական կազմակերպության բաժնեմասերի ձեռքբերման գործարքը հակասում է համապատասխան օրենքներին և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին:

23. Գրանցման մերժման մասին Կենտրոնական բանկի որոշումը պետք է լինի պատճառաբանված և պարունակի հղում Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կարգի կամ Ֆինանսական կազմակերպության կանոնադրության այն կոնկրետ նորմերին, որոնց պահանջները խախտվել են:

24. Գրանցումը մերժելը, ինչպես նաև գրանցումից խուսափելը ենթակա են դատական կարգով բողոքարկման:

ԳԼՈՒԽ 3* (4). ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25. Երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ գրանցամատյանում գրանցվում են ֆինանսական կազմակերպությունների այն մասնակիցները, որոնք մասնակցություն են ձեռք բերել մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելը՝ տրամադրելով նրանց վկայագիր:

Հավելված 1

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգի»

ՎԿԱՅԱԳԻՐ
N 000000

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող ֆինանսական կազմակերպության՝ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի

Ֆինանսական կազմակերպության տեսակը_____

_____
(լրիվ ֆիրմային անվանումը)

պետական գրանցման համարը_____գտնվելու վայրը_____

կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) չափը_____

Մասնակից_____

_____
(իրավաբանական անձանց համար պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը (փոստային հասցեն), ֆիզիկական անձանց համար տվյալները և հաշվառման հասցեն)

բաժնեմասի չափը_____
(տոկոսներով կամ մասերով)

բաժնեմասի ձեռքբերման հիմքը_____

Կենտրոնական բանկում գրանցման տարին, ամսաթիվը, գրանցման որոշման համարը_____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի
նախագահ
(անուն ազգանուն) *(ստորագրություն)*

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 197-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. հունիսի 26-ի «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հաստատելու մասին թիվ 197-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելվածի ամբողջ տեքստում և Հավելվածի հավելվածներում «գործառնություններ» բառը փոխարինել «գործունեություն» բառով՝ համապատասխան հոլովածևերով,

2) Հավելվածի 3-րդ կետի առաջին նախադասության
   ա. «ֆայլերը» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ թիվ 10 հաշվետվության, որը ներկայացվում է ազատ ոճով (էլեկտրոնային տարբերակով):» բառերով,
   բ. «(էլեկտրոնային տարբերակով):» բառերից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերի փոփոխելն արգելվում է:»,

3) Հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն և պարունակեն էլեկտրոնային թվային ստորագրություն:»,

4) Հավելվածի 5-րդ կետում «Ֆայլի ծածկագիրն» բառերը փոխարինել «Հաշվետվության անվանման կոդն» բառերով՝ համապատասխան հոլովածևերով,

5) Հավելվածի ամբողջ տեքստում և Հավելվածի հավելվածներում «ծածկագիր» բառը փոխարինել «կոդ» բառով,

6) Հավելվածի 6-րդ կետում «օրերի» բառից հետո լրացնել «այլ» բառը,

7) Հավելվածի 9-րդ կետում «Կենտրոնական բանկի նախագահին» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկին» բառերով,

8) Հավելվածի 12-րդ կետում «վերլուծական» բառից հետո լրացնել «և վերահսկողական» բառերը,

9) Հավելվածի 43-րդ կետում «և (կամ) ծածկագրերը» բառերը հանել,

10) Հավելվածի 58-րդ կետում «և (կամ) ծածկագիրը» բառերը հանել,

11) Հավելվածի 75-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«75. Թիվ 6, թիվ 7, թիվ 8, թիվ 9 հաշվետվությունները լրացվում են համաձայն Հավելվածի՝ համապատասխանաբար Հավելվածներ 10-ի, 11-ի, 12-ի, 13-ի:»,

12) Հավելվածը լրացնել նոր 76-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«76. Հաշվետվությունները կազմվում են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ընդունված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման սկզբունքներին, ստանդարտների կիրառման ուղեցույցներին և պարտադիր կիրառման այլ փաստաթղթերին (այսուհետ՝ միջազգային ստանդարտների ուղեցույցներ) համապատասխան:»,

13) Հավելվածի Հավելված 2-ի Ձև 1-ի և Հավելված 4-ի Ձև 2-ի 2.6-րդ տողերի «Կենսաթոշակային հիմնադրամների ապահովագրություն» բառերը փոխարինել «Կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարում» բառերով,

14) Հավելվածի Հավելված 3-ի Ձև 2-ում և Հավելված 5-ի Ձև 3-ում «Վերաապահովագրողի ծածկագիրը» սյունակը հանել,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. օգոստոսի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.08.2014 թ. (ՀՀՊՏ N22 (501), 2.09.2014):

15) Հավելվածը լրացնել 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ Հավելվածներով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 օգոստոսի 2014 թ., N 223-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի օգոստոսի 12-ի թիվ 223-Ն որոշման

Հավելված 10
«Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ծևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԹԻՎ 6)
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Բրոքերային ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

հզ. դրամ

ԱԿՏԻՎ	Ծանոթագրություններ	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	*2*	*3*	*4*
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ			
Ոչ նյութական ակտիվներ			
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Հետաձգված հարկային ակտիվներ			
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝			
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ			
II. Ընթացիկ ակտիվներ			
Տրված ընթացիկ կանխավճարներ			
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով			
Այլ դեբիտորական պարտքեր			
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ			
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ			
ՊԱՍԻՎ			
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար			
Էմիսիոն եկամուտ			
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ			
Չբաշխված շահույթ			
Պահուստային կապիտալ			
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝			
Ընդամենը սեփական կապիտալ			
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ			
Ոչ ընթացիկ պահուստներ			
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր			
Կարճաժամկետ փոխառություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով			

1	2	3	4
Ստացված ընթացիկ կանխավճարներ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով			
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)			
Այլ կրեդիտորական պարտքեր			
Եկամուտներին վերաբերող շրջոհներ			
Ընթացիկ պահուստներ			
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ			
ՀԱՇՎԵԿՇԻՌ			

Ղեկավար՝ _____
(անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____
(անուն, ազգանուն)

Հավելված 11
«Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հավելվածի

